



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՆՈՐ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՔ

ԹՈՒՍԹՈՅԻ



ՌՈՒՍ ԲՆԱԳՐԵՐՈՒ ՀԱՄԵՄԱՏ

Թարգմանեց
ՕՍԻՐ-ԼՈՒՌԻԻ:


Ֆրանսերէն: Հայացուց
ՕՆՆԻ, Ա.ՍԼ.Ա.ՆԵՄԸՆ



ԶՄԻՌՆԻԱ

Տպագրութիւն Բէշիշեան

1912



ՆՈՐ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՔ

ԹՈԼՍԹՈՅԻ



ՈՒՒՍ ԲՈՎԱԳՐԵՐՈՒ ԿԱՄԵՄԱՏ

Թարգմանից

ՊԻՐ-ԼՈՒՌԻԷ

Ֆրանսերէնէ Հայացուց

ՓՆՆԻԷ ԱՍԼՈՆԵԱՆ


Handwritten:
Ես
785



ԶՄԻՒՆԻԱ

Տպագրութիւն Գեշիշեան

1912



THE UNIVERSITY OF CHICAGO

PHYSICS DEPARTMENT

RESEARCH REPORT

PHYSICS DEPARTMENT

CHICAGO, ILLINOIS

RESEARCH REPORT
PHYSICS DEPARTMENT
CHICAGO, ILLINOIS

PHYSICS DEPARTMENT

CHICAGO, ILLINOIS

PHYSICS DEPARTMENT





20Ն

Անգլագաղան Բարեբաբ

ԱՂԱ ՄԿՐՏԻՉ ՄԱՆԱՍԱՐԵԱՆԻ

ՅԻՇԱՏԱԿԻՆ

իր երախտագիտ ամբը
ՕՆՆԻԿ ԱՍԼԱՆԵԱՆ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Ի շոյս կ'ընծայեմ քարգմանութիւնը մի այնպիսի գրքի որմէ, իբրեւ թէ շանթիկ մը, պիտի զատհուրին վճիտ ուղեղներ եւ պատկառին արդարաւորով մտեր: Զարեհուրանք թէ պատկառանք՝ քնականօրէն ետեւան պիտի զան ազդեցութեամբը այն հասու զադափարներուն, որունք անվերապահ ոգւով յայտնուած են ոռուս հեղինակին կողմէ: Ասկէ ընթերցող տաք պիտի ըմբռնէ գրքին նպասակը, որ է նշմարութիւնը ցոյացնել առանց կողմնակցութեան, իրական տառապանքը ներկայացնել առանց չափազանցութեան եւ մանաւանդ գծել պատկերը զադափարական կեանքի մը, որմէ հետոս կ'ստորի ներկայ մարդկութիւնը, եւ որու կրնայ դիմել սակայն, երբ ուզէ: Թորսրոյ ցոյց կուտայ նոյնիսկ միջոցը թէ ինչ կերպով կրնայ տեղի ունենայ փոփոխութիւնը այժմու արդէն շարուած բնկերական սխալ դրութեան: Կեանքի, Կրօնի, Եղիւսանքի մասին իւր իւր պէս ծով հարցերու մէջ կը նկատուի փառայինը քաղուկներով, կը սուզի միջնէ յատակը եւ ետեւան կը բերէ ինչ որ հակամարդկային է, ի՞նչ հրեշտային բան որ կայ անոնց մէջ պահուած. յետոյ յուշիկ յուշիկ, համոզկիր բառերով կը դիմեզգացումներու այլեւս բանակրան կեանքն սարկու:

Անշուշտ այսպիսի հիւրեղ խորհրդածութիւններ պարունակող գիրք մը չի կրնար անօգուտ ըլլալ նաեւ հայ հասարակութեան, որ ամէն բանէ աւելի պէտք ունի լաւ հասկնալու կեանքը եւ ճանչնալու զայն կաշկանդող կապերը, որպէսզի իր բնասուած իրերը շրթայագրած կարեւան քռիչ առնել դէպի շառագոյն ու երջանիկ կեանքը, որուն արտանք կը փափաքի:

Զմիւռնիա 8 Օգոստոս 1912

ՀԱՅ ԹԱՐԳԱՆԻՉԸ

THE WOODS

The woods are full of life and beauty. The trees are tall and straight, reaching up to the sky. The leaves are green and fresh, and the air is clean and cool. The birds are singing and the insects are busy. The woods are a wonderful place to be, and we should all try to enjoy them as much as we can.

The woods are also a place of peace and quiet. The sounds of the city are far away, and the only sounds are the natural sounds of the forest. It is a wonderful place to go when you need a break from the busy world.

THE WOODS

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Ա.

Այս Թոշարոյի նոր Խորհրդածութիւնները շարու-
նակութիւնը կը կազմեն անոնց, զորս հաւաքեցի և
հրատարակեցի կանխաւ. երկու հաւաքածոները զիրար
կ'ամբողջացնեն: Դասաւորումի միեւնոյն ձեւը և մի-
եւնոյն եղանակը պահուած են: Ներկայ հատորին մէջ
աւելցած է նոր գլուխ մը անձնագրահոթեան վրայ:

Իմ նոր ընթերցողներու պէտք է սա՛ ըսեմ որ
Պոլսթոյ իր գաղափարներն Առածներու ձեւով երբէք
արտագրած չէ: Խորհրդածութիւններն ու նոր Խորհր-
դածութիւնները փոխ առնուած են հոյակապ հեղինա-
կին՝ մեծ մասամբ փիլիսոփայական և ընկերական՝ եր-
կասիրութիւններէն ը Աշխատութեանս համար գործա-
ծեցի Թոշարոյի ինքնատիպ երկերը և այն ինքնագիր
ձեռագրերը, որոնց հրատարակութիւնն արգիլուած է
Ռուսիոյ մէջ: Ամէն տեսակ շփոթութենէ խոյս տալու
համար չնշանակեցի ազրիւրները Խորհրդածութիւններու,
ինչ չափով որ ասոնք քաղուած են, ա՛յլ յարմար դատե-
ցի՝ համապատասխան թուանշաններով՝ զանոնք ամփո-
փել յաւելուածի մը մէջ, որ փնտռողին պիտի ծառայէ
ցոյց տալու այն տեղը զոր իւրաքանչիւր Խորհրդա-
ծութիւն կը գրաւէ ամբողջ երկին մէջ: Այս եղանակը
գրքին զիտական արժէքը կը բարձրացնէ առանց
զայն նուազ մատչելի դարձնելու մեծ հասարակութեան
որ ամէն բանէ առաջ նոյն իսկ թնագրին իմաստին
կարեւորութիւն կու տայ:

Անցասուած խորհրդածութիւնները շատ անգամ
յանպատասխան յօրինուած առածներէն աւելի շաւ

կշռուած կրնան ըլլալ: Այս վերջինները կ'ուշենան միշտ ենթակայական նկարագիր: Ռոշֆուքոյի վճռագրերը (Sentences) Ռոշֆուքոյի խորհրդածութիւնները չեն ներկայացներ մեզ, այլ Ռոշֆուքոն՝ իր վճռագրերուն համեմատ (*):

Մարդոց անբուժելի փոքրիկ տկարութիւնները պէտք չէր որ գիտնայինք շյայտնելու համար ինչ սեթեւեթեալ և շինծու բան որ կայ գրուած Խորհրդածութիւններուն մէջ հասարակութեան դատողութիւնն արհամարելու որոշ գիտաւորութեամբ:

Աւելի կամ պակաս՝ դաւանանք մը կայ այն կրտրուկ մտածումներուն մէջ, զորս հեղինակ մը կը յայտնէ մարդոց և իրերու մասին: Քի՛չ անգամ ան ի բաց կը թողու իր Եսը: Անջառ խորհրդածութիւններուն մէջ հեղինակին գաղափարն է միայն, տիրող գաղափարը, որ ներկայ է. իր անձնական նկարագիրը այն ատեն միայն կ'երեւի, երբ իր մէջ կը կրէ սկզբունք մը, բայական ուժ մը: Այս է Թոլսթոյի պարագան:

Իւրաքանչիւր առարկայի վրայ զատ զատ խորհելու սովորութիւնը կը բռնադատէ մտածողը ամբողջութեամբ կամ անոր մէկ մասով չը զբաղելու: Ամբողջութենէն առնուած Անջառ մտածում մը երբէք ամբողջէն չի բաժնուիր. այս կարգէն է համադրութիւնը, իսկութիւնը (L'essence): Հեղինակին կողմէ յայտնուած մտածումը գիտական ամէն ապացոյցէ ազատ է. իր վճռագիրը ձեւակերպելու համար յաճախ ստիպուած է ճշմարտութիւնը զոհել. կ'ուզէ որ իր մտածումն ըլլայ վառվառն և կուռ, և կը դառնայ աւելի պատգամ

(*) Հայ. քարգմանութեան մէջ զանց առած ենք Ռոշֆուքոյի առածներու մասին Օսիք-Լուռիէի ծակօրոքիւնը, ինչպէս նաեւ այն յաւելուածը՝ որու մասին ինչ մը վերը կը խօսի գաղղիացի քարգմանիչը: Ե. Թ.

(Aphorisme), քան թէ գաղափար մը, խորհուրդ մը. չենք գիտեր թէ ի՞նչպէս յղացուած է, ինչ բանի վրայ հիմնուած է: Անշատ մտածումը չի պահանջեր սեղմաբանութիւն. շատ հեշտ է որոշել անոր հիմնակետը. կը բաւէ միայն վստահիլ բնագրին ուրկէ որ քաղուած է:

Անշուշտ, փիլոսոփայի մը համար որոնել իր գործին էական հիմերը՝ վստահաւոր փորձ մըն է: Իր կառուցած բարոյական շէնքը ճշմարտապէս զօրաւոր պէտք է ըլլայ, որպէսզի ազատուին ու մէջտեղ հանուին անոր սիւները, որոնք զայն հաստատ կը բռնեն: Այս փորձը խիստ ծանր է մանաւանդ երբ չի կատարուելը զգուշաւոր ձեռքէ մը: Թուլթոյ յազթական դուրս կուգայ անկէ: Իր մտածումը՝ զօրաւոր և պայծառ՝ չի վախնար ո՛րէն անշատումէ և — ի՞նչ որ այլապէս հաղւադէպ ու կարեւոր է, — կը պահէ միշտ գրոշմը զինք ստեղծողին. հակառակ այս վերջնոյն, միմիայն իր ներքին կարողութեան, իր բնական ինքնատուրթեան, իր սկզբունքներուն շնորհիւ, զորս կ'անձնաւորէ իր բարոյական կար: Թուլթոյ կ'ապրի և պիտի ապրի երկար ժամանակ այս կորհրդածութիւններուն մէջ: Ա՛ն ամբողջովին ներկայ է իր բոլոր մեծ գաղափարներով, զորս իր գեղեցիկ ու լայն իմացականութիւնն արտագրեց իր բարեշրջութեան մէջ մի վայրկեանին: Ի դուր չէ՛ որ կորհրդածութիւնները կը համարուին «թուլթոյականութեան ազօթագիրք»: Անոնց բարոյական արժէքն այնչափ աւելի մեծ է, որչափ անոնք զերծ են ամէն մեկնութենէ և ամէն գատումէ: Ուրիշ երկի մը, փիլիսոփայութիւն թողարոյի ի մէջ է որ բոլոր խորհողին կեանքն ու գործը ուսումնասիրութեան առարկայ ըրի իրենց ամբողջութեամբ:

F.

Փիլիսոփայութիւն թուրքոյի անուն գրքին երեւուածն ի վեր, ուստի Սինոզը Օրթոտոքս եկեղեցւոյ հաղորդակցութենէն (*) հեռացուց Յարութիւնի հեղինակը: Այս ծիծաղելի արարքը բան մը չ'աւելցնէր ո՛չ թուրքոյի փառքին, ո՛չ ալ զինք հալածողներու անձկամտութեան վրայ: Միայն ապագայ սերունդին պիտի յիշեցնէ արդի ժամանակը Ռուսիոյ, ուր մոլեռանդութիւնը յաղթանակ տանելով կը նեղէ ազատամտութիւնը: Այսու հանդերձ բանադրանքը օգտակար եղաւ թուրքոյի և մանաւանդ փրկարար՝ թուրքոյականութեան:

Առաքեալի ամէն մեծ կեանք իր գերազոյն ժամանակի, իր ողբերգական ճգնաժամը, ուր ահագին զոհողութիւն մը կը կատարուի: Այսպէս է Մովսէս Սինալեբան վրայ, այսպէս՝ Յիսուս Ջիթենեաց պարտէզին մէջ, այսպէս է Լութեր իր մենարանին մէջ: Թուրքոյ ունեցաւ իր ներքին ընդվզումի վայրկեանը, Իստանբուլ-Բոլիանայի մէջ ճանչցաւ տարակոյսին պրկումները և այն անպատում անձկութիւններն որոնք կ'ընկերանան ամէն բարոյական փոփոխութեան: Ինչ որ կը պակսէր անոր ա՛տ ալ այն լուսապսակն էր, զոր թունալից գաւաթը կը բերէր Սոկրատին, կառափնատը՝ թուրքոյ Մօրիւսին, նզովքը՝ Սքինոզայի: Ռուս Սինոզը ստանձնեց թուրքոյի շնորհել այն անմահ պատկը: Անշուշտ երկրի մը համար, որ տակաւին պատիժի կը դիմէ, բանադրանքը սին բառ մըն է և ինք իրեն հա-

(*) «Թուրքոյի բանագրումին վճռոյն բուսկանն և 1901 թ. 24 և «Փիլիսոփայութիւն թուրքոյի» ին արգիլման բուսկանն և նոյն տարւոյ Յնվր. 21-ը:

ւատարիմ մնալու համար, Ռուսիան պէտք էր որ թուրքս թոն դնէր և երեսի վրայ թողուր Պօղոս Պետրոսի բերդին մէջ, որուն չարաշուք պատկերը կը նկարուէ նեղայի անուշ ջրերուն մէջ:

Մարդ ինք իրեն հարցում մը կ'ուզէ թէ ինչու համար Սուրբ Ռուսիան այս պարագային՝ չկատարեց ինչ որ իր «պատմական պարտականութիւնը» կը համարի: Եւրոպայ բարբարոս բռնակալներէն երբէք հաշիւ չի պահանջեր այն խժողովութիւններու համար, որոնք ազատութեան և արդարութեան կողմնակիցներու վրայ ի գործ կը դրուին: Անոնք որ թուրքոյի համար պարզապէս հոգեկան պատիժ մը վճռել տուին, վախճան արդեօք որ ուրիշ տեսակ պատիժ մը միլիոնաւոր հարստահարեալներու անզգայութիւնը կրնայ վրդովել:

Թուրքոյ Սինոդին գրգռութեան պատասխանեց նամակով մը, որուն կարեւորութիւնն էական է թուրքոյականութեան պատմութեան համար: Մարդ ի գուր կը փնտռէ այս պատասխանին մէջ վշտի մը տրտայտութիւնը, անձկութեան մը ստուերը. պարզ, հզօր ու համարձակ է ան: Թուրքոյ իր հակառակորդներուն ստութիւնը խայտառակելու համար ծանր խօսքեր և աղնիւ մեծանձնութիւն մը ունի: Ասկէ զատ այս նաւակիին մէջ կը գտնենք կուռ և յստակօրէն արտացոլացուած հաւատքի խոտտովանութիւն մը. «Չեմ ընդունիր մարդկային ցեղը փրկելու համար կոյսէ մը ծնած Աստուծոյ մը սրբապիղծ պատմութիւնը, բայց կ'ընդունիմ Բանն Աստուած, Սէրն Աստուած...: Չեմ հաւատար անդինական կեանքի»: Սինոդին արուած պատասխանէն առաջ, թուրքոյի կրօնական ուզողութիւնը որոշ չէր ամէնուն համար: Իր մի քանի գրքերուն լեզուն շփոթութիւն առաջ կը բերէր:

Փիլիսոսփայութիւն թողարոյի ի մէջ ջանացած եմ իմ խոստովանութիւնս ին հեղինակին կրօնը սահմանել և ցոյց տալ որ ան աւելի հրէականութեան մօտ է քան քրիստոնէութեան: Սիևոդիև տրուած պատասխանը, որ իմ երկասիրութենէս երկու տարի վերջ երեւցաւ, կը հաստատէ իմ յայտնած կարծիքս: Թուլթոյ ո՛չ օրթոտոքս, ո՛չ կաթողիկ և ո՛չ բողոքական է: Աւելի կը համակրի նորադանդութեան կուսակցութեան քան թէ Լոյոլայի, սակայն հանդերձեալ կեանքի և ամէն կարգադրեալ հաւատքի մասին սկիպտիկ է: Թուլթոյ կրօնը բնական և տիեզերական կրօնին կը յանդի, այսինքն, ներկայ աշխարհի համար սահմանուած կեանքի և սիրոյ փիլիսոփայութեան, որ չի վրդովուիր անդրշիրիմեան ապագայի համար: Այս է պատճառը որ Թուլթոյի երկերուն մէջ կը թափանցէ բանաստեղծական միստիքականութիւնը, որուն համար կարգ մը նոր-քրիստոնեայ հոգեպաշտներ անոր մէջ տեսնել ուղած են իրենցմէ մին: Այս համագրաւումը յանդուգըն է: Բնական Փիլիսոփայութեան պարտքն է թուլթոն ներկայացնել իբրև մին իր խորազնին նախագուսաններէն: Ըստ Թուլթոյի, Աստուած հոմանիշ է տիեզերական միութեան, բարութեան և սիրոյ. ան կրօնը կը դարձնէ իր աղբիւրին — ներշնչութիւն դէպի կատարելութիւն:

Թուլթոյ աւելի բարոյագէտ մըն է քան Աստուածաբան: Չի սահմանափակուիր եկեղեցւոյ, դպրոցի կամ մատուռի նման փոքր հարցերու մէջ. ան կը հաստատուի ոչ թէ խնդրոյ մը, տեսութեան մը առօրեայ պայմաններուն՝ այլ յաւիտենակտն ճշմարտութեանց պայծառ կրօնին մէջ: Թուլթոյով բարոյականը կը դադրի անձուկ ըլլալէ. ան դրութեան մը, առաջադրութիւններու հարկադրեալ շարքի մը կապուած չէ:

Թուլթոյ, հակառակը, մտածումի կատարեալ անկա-
խութիւն մը ունի, իւրաքանչիւրին կը թողու իր
կեանքն ըմբռնելու ձեւը, ամենուն կը սորվեցնէ
կեանքի մասին խորհածը, անոր գործածութիւնը և մեր
անհաստատ գոյութեան՝ իրերու ընդհանրութեան հետ
ունեցած աղերսը: Տեսական բարոյականը կամ բարոյա-
կանի գասագրքերն ընդունելի են միայն սահմանափակ
ուղեղներու կողմէ, միայն փոքրաթիւ խումբ մը մար-
դոց կողմէ, որոնք մասնաւոր ուսումնասիրութիւններ
կ'ընեն: Թուլթոյ, ինք, բազմութեան կը դիմէ, որ հա-
ճոյքով կ'ունկնդրէ առանց ջանքի գայն հասկնալ կարե-
նալուն համար: Իրենց խօսքը միմիայն մտքին ուղղոգ-
ները չի՛ն որ ունկնդրուած ու հասկցուած են, այլ ա-
նոնք որ գիտցած են զգացումներ յուզել ու արթնցնել:
Թուլթոյ աէրն է այս կարողութեան: Երբէք մարդ մը
անոր չափ աւելի խոր զգացած չէ, երբէք աւելի հե-
զինակօրէն խօսած չէ: Կողմնակցական ոգւոյ կատարեալ
բացակայութեամբ, իր հզօր կորովամտութեամբ և կա-
տարեալ առարկայականութեամբ Թուլթոյ մարդկային
անպատեհութիւններէն կը յաջողի յօրինել ամենաճիշտ
նկարը որ դեռ եւս մեզի տրուած ըլլայ նկատելու:
Ուրիշ ոչ ոք տեսաւ ԺԹ. դարու հակասութիւնները.
ա՛ն հասկցաւ իրերու իսկական վիճակը, թափանցեց
մարդոց մտածումներուն և վերըզձանքներուն: Ո՛չ մար-
դուն և ոչ ընկերութեան հանդէպ գորովալի է: Բայց
երբ կը յարձակիս առաջինին վրայ, ո՛չ թէ զայն ահաբեկելու
այլ անոր գիտակցութիւնը մաքրելու համար է: Ընկե-
րութեան ուղղած յանդիմանութիւնները ցուրտ հեզ-
նութեամբ պարուրուած չեն, տառապանքի դրոշմն
ունին: Թուլթոյ մարդն ու ընկերութիւնը կը ծանրա-
րեանէ, և ատով առաջին անգամ ինք կը տառապի:
Իր մեղադրանքը անվստահելի չէ: Յայտնի է որ պիտի

լուէր, եթէ կարենար: Իր ազդեցութիւնը փրկարար է չի վհատեցնել, այլ կը զօրացնէ: Իր անկեղծ խօսքը զմեզ ներհայեցողութեան ստիպելով՝ կը սորվեցնէ մեզ արդարութիւն և ներսողութիւն, ընտրական փիլիսոփայութեան այն երկու առաքինութիւնները, զորս ամէն խորհող արարած կրնայ ի գործ դնել աներկիւղ:

Թուլթոյ կեդրոն մը եղած է, որուն բոլորտիքը կը բարեշրջուի մտաւորական աշխարհի ամբողջ մէկ մասը. ոմանք անոր վրայ կը յարձակին, ոմանք կը հիանան: Սիրուած կամ ատուած՝ անդիմագրելիօրէն կ'արթընցնէ հետաքրքրութիւն, շահագրգռութիւն և մտահաճութիւն: Նոյնիսկ անոնք որ անոր քով հակասութիւն և անէութիւն կը գտնեն. — ո՞վ երբէք խորհած է յանդիմանել ժայռ մը սեպ ըլլալուն կա՛մ դադար մը դիլսու պտոյտ պատճառելուն համար — անոնք որ Թուլթոյականութեան վարդապետութիւնը անհաշտ կը գրտնեն կեանքի մասին մեր ունեցած արգի ըմբռնումին հետ — *Securus iudicat orbis terrarum* (*) — անոնք իսկ այս «գրագէտ մուժիք» ին քաղցր երազին մէջ կը տեսնեն այն գաղափարականը, տակաւին անիրականելի, որուն պարտի ձգտիլ մարդկութիւնը: Ոչ ոք կրնայ ուրանալ որ մեր ժամանակին մէջ չիկայ ո՛ր և է գէմք ա՛յնչափ գրաւիչ որչափ Թուլթոն: Անձնիշխանութեամբ մը որ չի զարհուրիլ երբէք քաղաքական և ընկերական իշխանութիւններէ, կ'երթայ մինչև իր խորհրդածութեան վերջը և խոչընդոտներու կամ վտանգներու առջեւ առանց կենալու կը հուշակէ ի՛նչ որ ճշմարտութիւն ըլլալ կը կարծէ: Եւ Թուլթոյի ձայնը կորսուած չէ: Այս վերջին տարիներուս մէջ բարոյա-


(*) Տիեզերքը սպահով ենթադրէ:

կան գաղափարներու յառաջդիմութիւնը կ'ապացուցանէ որ թոյսթոյսկանութիւնը արդէն կ'ընձիւղի :

Մաքերու խառնաշփոթութիւնն երբէք այնչափ մեծ , սիրային միութեան վերըլծանքը երբէք այնչափ նիրոյժ եղած չէ որչափ այսօր : ԺԹ . զարու երկրորդ կէսը արտադրեց տեսութիւններ , որոնց նպատակն է համաշխարհական գաղափարականին իրականացումը : Թոյսթոյսկանութիւնը բոլոր այս վարդապետութեանց համադրութիւնն է . այն պատուէրները , զորս կը ներքլխէ , ամենամաքուր բարոյականէ ներշնչուած են : Ստոյգ է որ բոլոր անյայտութիւններն ու տարակոյսները չ'որոշեր : Լուսեղէն ճառագայթներուն ամէնքն ալ արձակուած չեն տակաւին այն անմատչելի գագաթէն , ուր ապաստանած է ճշմարտութիւնը . այսու հանդերձ տնկէ բաւականաչափ ընդունած ենք լոյսի մասին չտարակուսելու համար . և այս ստուգութիւնն առայժմ մեզի կը բաւէ : Թոյսթոյսկանութիւնն արդէմատածումին ամենարձր երեւոյթն է :

ՕՍԻՔ - ԼՈՒՌԻԻԷ





ՆՈՐ ԽՈՐՀՐԷԱՅՈՒԹԻՒՆՔ

ԹՈԼՄԹՈՅԻ

Ա.

ԿԵԱՆՔԸ — ՄԱՐԴԸ — ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

1. — Բնութե՛րցոյ, ս'ջ որ ալ ըլլաս, կը սիրեմ քեզ: Հեռու՛ քեզ վիշա պատճառելու, մնասելու և կեանքիդ մէջ չարքիք տառջ բերելու գաղափարէն՝ մէկ բանի միայն կը բաղձամ. այն է օգտակար ըլլալ քեզ:

Սակայն ի դուր պիտի դրեմ ամէնէն աւելի հնարաւոր հանճարամտութեամբ, ի դուր հաւաստիք պիտի տամ արամորանական հայեցակէտով՝ նորէն պիտի շղջունամ համոզել քեզ, եթէ միտքդ կը հակառակի իմինչև, եթէ սիրտդ անտարբեր կը մնայ: Հետեւաբար չպատճառարանե՛նք: Բան մը միայն կը խնդրեմ քեզմէ. որտիզ խոհուրդ հարցուր:

2. — Արեւը կեանք անոնց միայն կուտայ, որոնց մէջ արդէն կենդանութիւն կայ:

3. — Մեր իմաստութիւնը, հակառակ իր անժըլտակի ճշգրտութեան, չի ճանչցներ մեզ մեր կեանքի

նշանակութիւնը . մինչդեռ ամբողջ մարդկութիւնը , որ կեանքի ձեռնդ կուտայ , կարծես անոր նշանակութեան մասին չ'երկմար :

4. — Առանց կեանքի ըմբռնումի՝ կեանք չկայ երբէք : Ամէն մարդ այնչափ միայն ապրած կը համարուի որչափ ատեն որ ըմբռնած է կեանքը :

5. — Մարդկութեան կեանքը զանազան տարիքներէ անցնելու ատեն կը փոխուի անհատի մը կեանքին պէս . կեանքի իւրաքանչիւր տարիք ունի համապատասխան ըմբռնում մը , զոր մարդիկ անվրէպ կ'ըւրացնեն : Անոնք որ զխտակցաբար չեն յարմարցնել իրենց կեանքը այդ ըմբռնումին , կը յարմարցնեն անգիտակցաբար : Հայեացքներու ինչ փոփոխութիւն որ տեղի կ'ունենայ անհատներու կեանքին մէջ , նոյնը կը պատահի նաև ժողովուրդի և ամբողջ մարդկութեան կեանքի մէջ : Եթէ ընտանիքին հայրը շարունակէր ապրիլ կեանքի ա՛յն ըմբռնումին համեմատ , զոր ունեցած էր տղայ եղած ատեն , իր կեանքն այնչափ դժուարատար պիտի ըլլար որ ինքնին պիտի փնտուէր ուրիշ ըմբռնում մը և սիրայօժար պիտի ընդունէր այն որ կը համապատասխանէ իր տարիքին :

6. — Միայն երկու եղանակ կայ ճշգրտապէս տրամաբանական՝ կեանքի երեւոյթները նկատելու համար . մին՝ հիմնուած կեանքի գաղափարին վրայ , համաձայնեցուցուած ա՛յն տեսանելի երեւոյթներուն , որոնք մեր մարմնոյն մէջ տեղի կ'ունենան , մեր ծնած օրէն սկսեալ մինչև մեր մահը . միւսը՝ հիմնուած կեանքի գաղափարին վրայ՝ համաձայնեցուցուած այն անտեսանելի և ներքին գիտակցութեան , որով կեանք ունինք . այս-

հայեցակէտներէն մին վրիպական է, միւսը՝ ճիշդ. սակայն երկուքն ալ կեանքի երեսոյթները նկատելու համար կրնան ըլլալ արամախոհութեան մեկնակէտեր, և մարդիկ կրնան ընտրել ա՛ն որ իրենց կեանքին կը յարմարի:

7.— Մենք մեզի համար բնութեան հակառակ կեանք մը շինած ենք ա՛յնչափ բարոյական որչափ որ կը ներէ մարդուն տրամադրութիւնը, և մեր մտքին բոլոր ուժերը կը լարենք զմեզ համոզելու համար թէ ա՛տ է ճշմարիտ կեանքը:

8.— Մարդ կ'ապրի — ինչպէս որ կ'ապրինք — ցորչափ կեանքի արբշտութիւնն ունի, բայց երբ կը սթափի, այն ստեն կը տեսնէ որ իր ապրելակերպը լոկ խարկանք մըն է, յիմար խարկանք մը, նայնխակ ոչինչ կայ ծիծաղելի կամ հանճարիմաց, ամէն ինչ պարզապէս անգութ ու յիմարական է:

9.— Մարդկային ամէն արարածի կեանքի մէջ կը պատահի վայրկեան մը, ուր ինքնին մը հարցնէ. «Ինչո՞ւ համար կ'ապրիմ. ի՞նչ է կեանքիս նշանակութիւնը. ինչ է ամբողջ մարդկութեան կեանքը:»

Այս հարցումներուն դէմ չորս պատասխան կայ, չորս ելք՝ այն սոսկալի կացութեան, որուն մէջ կը գըտնուի հարցում ուղղող մարդը: Առաջինը տգիտութեան ելքն է, որ կը կայանայ անգիտանալուն մէջ, հասկնալ չուզելուն մէջ թէ վարած կեանքերնիս չարիք մը և անխոտտ բան մըն է: Անոնք որ այս դասակարգին կը պատկանին — մեծ մասամբ կ'ինկրկամ թէ նորահաս կամ քիչ խելացի մարդիկ — տակաւին չեն հասկցած կեանքի այս հարցը, որ ներկա-

յացաւ Շորենհաւրի, Սողոմոնի և Պուտտայի: Չեն տեսներ այն չարիքը որ զիրենք կը շրջապատէ, այլ կը ճանչնան զանիկա այն ատեն երբ ո՛ր և է պարագայի մէջ աչքի կը դարձուի. և ահա այն ժամանակ իրենց հաճոյքը վերջ կը գտնէ: Այս կարգի մարդոցմէ սորվելու բան մը չիկայ:

Երկրորդ եւքը եպիկուրեան միջոցն է, որ կը կայանայ ներկայացած հաճոյքներէն, օգուտ քաղելուն մէջ, առանց փնտուելու անոնց ծագումը կամ վախճանը: Սողոմոն այս գաղափարը ստպէս կը բացատրէ. « Գնա՛, հացդ կեր զուարթութեամբ, գինիդ խմէ ուրախութեամբ, ժամանակդ անցու՛ր սիրած կիներուդ հետ ունայն կեանքիդ բոլոր օրերուն մէջ, քանի որ քաժինդ է: Ըրէ՛ ինչ որ կարողութիւնդ կը ներէ, որովհետեւ գերեզմանին մէջ, որ քեզի կը սպասէ, չիկայ ո՛չ աշխատութիւն, ո՛չ մտածում, ո՛չ գիտութիւն և ոչ իմաստութիւն:» Այսպիսի մտածումներով է որ ներկայ մարդոց մեծագոյն մասը կ'ըմբռնէ ապրելու հնարաւորութիւնը:

Այն պայմանները, որոնց մէջ կը գտնուին, այնպէս մը կ'ընեն որ չարիքէ աւելի բարիք կը տեսնեն մարդիկ, և բարոյական տխմարութիւն մը հնարաւորութիւն կուտայ անոնց մոռնալու թէ իրենց հաճոյալի վացութիւնը պատահական է, թէ ամէն մարդ շի կըրնար ունենալ Սողոմոնի պէս հազար կիւն ու պալատներ, թէ իւրաքանչիւր մարդ հազար կիւն ալ ունենայ, կան հազարաւոր մարդիկ, որոնք կիւն մը չունին և թէ իւրաքանչիւր պալատի համար յատկացուած են հազարաւոր մարդիկ, որոնք իրենց ճակատին քրտինքով կը շինեն: Այս մարդոց երեւակայութեան աղքատութիւնը հնարաւորութիւն կուտայ իրենց մոռնալու ան

որ հանդիստ չի թողուր Պուտտան, այսինքն, մտաւ-
լուտ վտանգը հիւանդութեան, ձերութեան ու մահ-
ուան, որոնք ո՛ր և է որ պիտի փշրեն իրենց բոլոր
հանոյքները:

Երրորդը ուժի և կորովի ելքն է, որ կը կայանայ
կեանքը բառնայուն մէջ ըմբռնած ըլլալէ վերջ թէ ա՛ն
չարիք մը և անխմատ բան մըն է: Այսպէս կ'ընեն
հոօր ու ալ ամս բանոց հստագիւտ մարդիկ: Մեզի
հետ խաղացող կատակին ամբողջ յիմարութիւնը հասկը-
նալէ վերջ ըստ այնմ կը վարուին, մէկ հարուածով կը
վերջացնեն այս անխմար կատակը: Այսպէս գործող ան-
ձերու շրջանակը կը լայննայ հետզհետէ, և ապահովաբար
իրենց կեանքի լաւագոյն վայրկենին է որ անօր որոշում
կուտան, երբ իրենց հոգւոյն ուժերը ամբողջական
փթթումի մէջ կը դառնուին և երբ տակաւին չեն ըն-
տանեցած վատթար սովորութիւններու:

Չորրորդ ելքը տկարութիւնն է, որ կը կայանայ
կեանքը ապրիլ շարունակելուն մէջ բոլորովին հասկցած
ըլլալով հանդերձ թէ ա՛ն չարիք մը և անխմատ բան
մըն է, գիտնալով նախապէս թէ ապրելէ բան մը ա-
ռաջ չի դար: Այս տեսակ մարդիկ գիտեն որ կեանքը
բան մը չ'արժեք, սակայն բանաւորապէս վարուելու,
չուտ մը այս խարկանքին վերջ դնելու ուժը չունե-
նալնուն՝ այնպէս ցոյց կուտան թէ բանի մը կը սպա-
սեն:

Ահա այսպէս մարդիկ զիրենք մաշող սոսկալի հա-
կատութեանց չորս ճամբաներէն դուրս կ'ելլեն: Ո՛րն
չհասկնալն է թէ կեանքն անխմատ բան մը, ունայնու-
թիւն մը և չարիք մըն է, որ աւելի լաւ է չապրիլ-
երկրորդը կը կայանայ կեանքէն օգուտ քաղելուն մէջ
ա՛յնպէս ինչպէս որ է, առանց մտածելու ապագայի
մասին: Երրորդ ճամբան սա՛ է՝ ըմբռնած ըլլալէ վերջ

թէ կեանքը չարիք մը և յիմարութիւն մըն է, գայն վերջացնել, անձնասպան ըլլալ: Չորրորդը — Սողոմոնի և Շոբենհաւրի նման ապրիլ — գիտնալ թէ կեանքը յիմար կատակ մըն է, հակառակ ասոր՝ նորէն ապրիլ, վայելել, խօսիլ և նոյնիսկ գրքեր հեղինակել:

10. — Բոլոր մարդիկ կ'ապրին ու կը գործեն մասամբ իրենց յատուկ նախաձեռնութեամբ և մասամբ ալլոց գաղափարներու ազդեցութեամբ: Մարդիկ կը զանազանուին նայելով թէ աւելի կամ նուազ չափով իրենց յատուկ թէ ալլոց գաղափարներու ազդեցութեան կը հպատակին: Ոմանք իրենց մտածումներով յաճախ մտաւոր խաղ մը կը դառնան. անոնց մօտ բանակա-նութիւնը փոխանցումի շարք կորսուած անիւ մը կը դառնայ, որովհետեւ իրենց գործերուն մէջ կը հետեւին սովորութիւններու, աւանդութիւններու և օրէնքներու: Իսկ ոմանք, ընդհակառակը, իրենց մտածումներն համարելով իբր գլխաւոր շարժառիթ իրենց գործունէութեան՝ գրեթէ միշտ կը հետեւին ու կը հպատակին իրենց բանականութեան առեւտ ազգարարութեան, շատ քիչ անգամ ընդունելով՝ և ա՛յն քըն-նադատական փորձէ մը վերջ՝ ինչ որ ուրիշներու կողմէ որոշուած է:

11. — Գոյութեան միջոցներու ախրացումին համար քնութեան դէմ մղուած պայքարը պիտի ըլլայ մարդուն պարտականութիւններուն առաջինը և ամէնէն անտարակուսելին, վասն զի այս պարտականութիւնը նոյնիսկ կեանքի օրէնքն է, որուն զանցառութիւնը իր հետեւէն կը բերէ, իբր անխուսափելի պատիժ, չ'է նիւթական և թէ խմացական կեանքի աւերում:

Հակառակը, մարդ այս պարտականութեան գործադրումին մէջ միայն կը գտնէ իր թէ՛ նիւթական և թէ՛ հոգեկան պէտքերուն կատարեալ գոհացումը :

12.— Ճանչնալու պէտք չունինք և մենք զմեզ կը ճանչնանք, կենդանական աշխարհը մեր աչքերուն առջև պարզ ցոլացումն է մեր մէջ ճանչցածնուս : Նիւթական աշխարհը կրնանք ըսել թէ ուրիշ բան չէ, եթէ ոչ ցոլացումի մը մէկ ցոլացումը :

13.— Մարդ — անասունի կեանքին մէջ այնքան պէտքեր կան, որքան իր գոյութեանը մէջ՝ փուլեր, որոնք գունդի մը շառաւիղներուն չափ բաղմաթիւ են : Առանք են ուտելու, շնչելու, աշխատելու, վայելելու պէտքեր, բնատանկան կեանքի, գիտութեան, արուեստի, կրօնի, ընկերութեան պէտքեր, դարձեալ, ազու, պատանիի, չափահաս մարդու, ծերի, գեռատի աղջկան, կնոջ, Զինացիի, Բարիպու, Ռուսի, Լաթոնացիի պէտքեր : Այս պէտքերը կախումն ունին ցեղերու սովորութիւններէ, հիւանդութիւններէ և այլն պարագաներէ : Եթէ մէկը մարդուն անհատական գոյութեան պէտքերու բոլոր հնարաւոր ձեւերը թուելով անցընէր իր կեանքը, պիտի չկրնար զանոնք վերջացնել ամբողջովին : Պէտքեր կրնան համարուիլ գոյութեան բոլոր պայմանները, որոնց քանակը անթիւ է :

Անոնք որ պէտքեր կը կոչուին, պարզապէս պայմաններ են, որոնց գիտակցութիւնն ունի մարդ : Այն ինչ մարդ այս պայմաններուն գիտակցութիւնը կ'ունենայ, անոնք կը կորսնցնեն իրենց իսկական նշանակութիւնը և կ'առնեն բանականօրէն պատշաճ վերջին աստիճան սուր կարեւորութիւն մը :

14.— Սովորաբար կը մտածենք ու կ'ըսենք թէ անհատական բարիքներէ հրաժարիլը զիւցազնական և մարդոց կողմէ գնահատելի գործ մըն է: Մինչդեռ ո՛չ միև և ոչ միւսն է, այլ անհրաժեշտ մէկ պայմանը՝ մարդուն կեանքին համար: Երբ մարդ կը ճանչնայ ինքզինք ամբողջ մարդկային ազգի իրրև մէկ որոշ անհատականութիւնը, միւսնոյն ատեն կը ճանչնայ նաև ամբողջ մարդկային ազգի միւս որոշ անհատականութիւնները և այն կապը, որ զանոնք իրարու կը միացնէ, կը տեսնէ անհատական բարիքին խարէական երեւոյթը և խոհուն գիտակցութիւնը դոհացնելու կարող միակ բարիքին իրականութիւնը:

15.— Անատունը կրնայ ապրիլ լոկ իր մարմնոյն համար. ոչինչ կրնայ զայն արգիլել այս բռնէն: Ան իր անհատականութեան պէտքերուն բաւարարութիւն կուտայ, և առանց գիտակցութիւն ունենալու, օգտակար է իր տեսակին, նոյնիսկ չի գիտեր թէ ինք անհատականութիւն մըն է: Սակայն պատասխանատու մարդը չի կրնար ապրիլ լոկ իր մարմնոյն համար, որովհետև ճանչնալով թէ ինք անհատականութիւն մըն է և թէ իրեն պէ՞ ուրիշ անհատականութիւններ կան, գիտէ ինչ որ պարտի հետեւիլ այս անհատականութիւններու յարաբերութիւններէն:

16.— Մարդուն համար իր անհատականութեան գիտակցութիւնը չէ՛ երբէք իր կեանքը, այլ անիկայ այն կէտն է ուրիշ կը սկսի կեանքը, որ կը կայտնայ իրեն յատուկ բարիքին յաւաջգիմական ստացումի՞ն մէջ, բոլորովին անկախ՝ շնասնտայան անհատականութեան բարիքէն:

17. — Ընդունելով որ կարելի է անձնական երջանկութեան մը հետազօտութիւնը փոխանակել ուրիշ արարածներու երջանկութեան հետազօտութեան հետ, մարդ կրնայ ինքզինք զսպել և իր անհատականութեան զլանայ հեղհեռէ իր գործունէութեան նպատակը՝ փոխադրելով զայն ուրիշներու վրայ: Ահա ճիշդ այս գործին մէջ է որ կը գանուի յառաջդիմական ընթացքը մարդկութեան և կենդանի արարածներու, որոնք մարդուն ամէնէն աւելի մօտ են:

18. — Այն ճշմարտ գաղափարը թէ մարդկային կեանքը ինքնուրոյն գոյութիւն մը չէ, հազարաւոր տարիներէ ի վեր ընդունուած՝ ամբողջ մարդկութեան բարոյական աշխատութեան գնով, եղած է մարդուն համար (ս'չ անասնական), բարոյական կալուածին մէջ, ճշմարտութիւն մը շատ աւելի անտարակուսելի և աւելի տեւական քան երկրին թաւալումն ու ծանրականութեան օրէնքները: Ամէն խորհող մարդ՝ գիտուն, ազէտ, ձեր՝ զայն կր հասկնայ ու կը ճանչնայ, միայն Ափրիկէի և Աւստրալիոյ ամէնէն վայրենի բնիկներուն ծանօթ չէ այդ ճշմարտութիւնը, ինչպէս նաև ապուստի հոգէ գերծ այն մարդոց, որոնք բնակելով քաղաքներու և Նւրսպայի մայրաքաղաքներուն մէջ վերադարձած են Գլորիոյ վիճակին: Այս ճշմարտութիւնը մարդկութեան ժառանգութիւնն եղած է, և եթէ մարդկութիւնը չյետադիմէ իր յարակից՝ մեքենական գրահաշուական, աստեղագիտական ծանօթութիւններուն մէջ, պիտի չուզէր յետադիմել նաև այն հիմնաւոր և գլխաւոր գիտութեան մէջ, որ կը զբաղի իր կեանքին սահմանը տալով: Մարդկութեան գիտակցութեան մէջէն անկարելի է ջնջել ինչ որ ստացուած:

է շատ մը հաղարաւոր տարիներու ընթացքին մէջ, այսինքն, ունայնութեան, անխմաստութեան և անհատական գոյութեան թշուառութեան համոզումը: Մարդկութիւնը անհատական գոյութիւն համարուած կեանքի գաղափարէն հեռացած է, այլ եւս չի կրնար անոր վերադառնալ, ո՛չ ալ մոռնալ որ մարդուն անհատական գոյութիւնը նշանակութիւն չունի:

19.— Եթէ մարդ միայն հետամուտ ըլլար իր անհատական բարիքին, եթէ միայն ինքզինք սիրէր, տեղեկութիւն պիտի չունենար որ միւս արարածներն ալ ինքզինքնին միայն կը սիրեն (ինչպէս որ անասունները չեն գիտեր): Բայց երբ հասկնայ որ զինք շրջապատող բոլոր անհատականութիւններուն պէս ինք ալ միեւնոյն նպատակին ձգտող անհատականութիւն մըն է, պիտի չկրնայ այլ եւս հետամուտ ըլլալ այն բարիքին, զոր իր խոհուն գիտակցութիւնը չարիք մը պիտի նկատէ, և իր կեանքը պիտի չկայանայ այլ եւս անհատական բարիքին հետազօտութեան մէջ:

20.— «Ինչու՞ համար, ինչ բանի կը ծառայէ» հարցումները, որոնք մարդուն մտքին մէջ կը ծագին երբ իրական կամ մտացածին վշտի մը կ'ենթարկուի, պարզապէս ցոյց կուտան թէ մարդ չունի այն ժրութիւնը, զոր տառապանքը պարտ էր անոր մէջ ծնիլ, ժրութիւն՝ որ պիտի կորզէր տառապանքէն անոր կսկծալի հանգամանքը: Ստուգիւ այն մարդը, որ իր կեանքը անասնական գոյութիւն մը կ'ընդունի, զըրկըւած է տառապանքը հեռացնող այս ժրութեանէն, և ա՛յնչափ աւելի մեծ աստիճանով որչափ որ կեանքը մասին աւելի անձուկ գաղափար մը կազմած է:

21. — Անասունը միայն ներկային մէջ կը տառապի, հետեւաբար այս տառապանքէն գրգռուած ժրութիւնը, բան մը որ ներկայի մէջ օգտաւէտ է իրեն համար, մեծապէս գոհ կը թողու զինք: Սակայն մարդը միայն ներկային մէջ չէ՛ որ կը տառապի, այլ՝ թէ՛ ներկայի և թէ՛ ապագայի մէջ, ուստի եթէ տառապանքներէ գրգռուած ժրութիւնը անասնական մարգուն միայն ներկային է ուղղուած, չկրնար դայն գոհ թողուլ: Լոկայն ժրութիւնը, որ ներկայի և ապագայի վերաբերեալ տառապանքին պատճառներն ու հետեւանքներն ունի իրր նպատակ, կրնայ գոհ թողուլ տառապող մարդը:

22. — Մարդիկ մարմնական կեանքի համար մըտքերնուն մէջ նպատակներ կը դնեն, որոնց հասնելու համար կը տառապին ու կը տառապեցնեն ուրիշները: Եթէ ուղէին հոգեկոյն կեանքի գիտութեան վերահասու ըլլալ և ազատիլ մարմնականի մտահոգութենէն, կատարեալ գոհունակութիւն մը պիտի գտնէին հոգեկան կեանքի մէջ, որ ճշմարտապէս այն կեանքն է որուն համար ծնած են:

23. — Ինչո՞ւ մարդ, գիտնալով որ տառապանքը վայելքին միացած է, ինք իրեն կը հարցնէ «Ինչո՞ւ համար է, ինչ բանի կը ծառայէ տառապանքը» և ո՛չ թէ «Ինչո՞ւ, ինչ բանի օգուտ ունի վայելքը»:

24. — Մարդ կը սիրէ հաճոյքներն ու իր պիտոյից այն գոհացումը, որուն տառապանք միացած չէ, և սակայն վշտին ու տառապանքին մէջ է որ կեանք կը գըտնէ ինք և իր ամբողջ ցեղը:

25.— Ամէն մարդ, որ բազմակնճիւղ կեանք մ'ունի գիւրաւ կը հաւատայ թէ կեանքի գծուարութիւնները անձնական չարաբաստութիւն մը, չարաշուք առանձնաշնորհում մըն են, լսկ իրեն վերապահուած, որոնցմէ գերծ են ուրիշներ:

26.— Ինչպէս որ երազ տեսնող մարդը ամէն տեսածին իրականութիւն ըլլալուն չի հաւատար և արթըննալ կ'ուզէ իսկական կեանքին դառնալու համար, այնպէս ալ մեր ժամանակի ո՛չ բարի և ոչ ալ չար մարդը իրօք չի հաւատար որ այն սոսկալի կացութիւնը, ուր ինք կը գտնուի, և որ հետզհետէ կը վատթարանայ, իրական է և կ'ուզէ արթննալ ճշմարիտ կեանքին դառնալու համար:

27.— Մարդուն ժրութիւնը, որուն պէտք ունենալը իր կազմուածքն իսկ կը զգացնէ, չորս տեսակ է. առաջին՝ մկանունքի ժրութիւն, այսինքն, ձեռքերու, սրունքներու, ուսերու, կռնակի աշխատութիւն՝ տաժանակիր յոգնութիւն մը՝ որ կը քրտնցնէ: Երկրորդ՝ մատերու և դաստակի ժրութիւն, այն որ արհեստի ճարտարութիւնը կը կազմէ: Երրորդ՝ մտքի ու երեւակայութեան ժրութիւն: Չորրորդ՝ ուրիշ մարդոց հետ շփում ունենալու միտումը:

28.— Կը բաւէ որ մարդ մը, որչափ ալ քիչ սուսում առած ըլլայ, խորհրդածէ այն իրական հետեւանքներուն վրայ, որոնք առաջ կուգան աշխարհի վրայ իր դաւանած կարծիքներէն, պիտի համոզուի որ բարիին ու չարին, գովելիին ու ամօթալիին գնահատումը, որուն համեմատ ծուլօրէն կը կանոնաւորէ իր

գոյութիւնը, բացարձակ հակասութեան մէջ է իր խորհրդածութեանց արդիւնքին հետ :

29.— Մեր ժամանակի մարդը չի կրնար այլ ևս անգիտանալ թէ իբր վեհապետ, իբր նախարար, կուսակալ կամ գիւղապահ՝ արքունի գանձին յատկացնելու համար աղքատ ընտանիքի մը միակ կովը ծախուելուն պատճառ ըլլալ և այս գրամը թնդանօթներ գնելու, սոճիկներու, դատարկասուն ու անօգուտ և սակայն պերճութեամբ ապրող պաշտօնատարներու թռչակներուն յատկացնել կամ մատ ունենալ բանտարկութեանը մէջ ընտանիքի հօր մը, զոր մինք մեր ձեռքով թշուառացուցած և իր ընտանիքը մուրացկան դարձուցած ենք կամ մասնակցել պատերազմի սպանութիւններու և աւարառութիւններու կամ բարբարոս, սնտի նախապաշարունակներ տարածելու կամ տէրը գտնալ այն կովուն, որ կալուածիդ մէջ մտած է, և որուն տէրը հողատէրչէ և կամ առարկայի մը համար աղքատի մը վճարել տալ կրկնապիկ գինը, վաճառել աղքատ է, ո՛չ մէկ մարդ կրնայ անգիտանալ որ այս քոյր գործերը վատ ու ամօթալից են :

30.— Այժմու մարդը, որ բռնութեան վրայ հիմնուած արդի իրերուն կարգաւորութենէն օգուտ կը քաղէ, որ միեւնոյն ատեն կ'ապահովցնէ թէ իր նմանները սրտանց կը սիրէ, որ չի նշմարեր թէ իր ամբողջ գոյութիւնը աղէտալի է իր ընկերոջ, կը նմանի այն աւագակին, որ՝ վերջապէս բռնուելով յուսահատօրէն օգնութիւն կանչող զոհին վրայ դանակ բարձրացուցած պահուն, կ'ապահովցնէ թէ չի դիտեր իր ըրածին անհաճոյ բան մ'ըլլալը այն անձին համար, զոր

կը կողոպտէր ու փողոտելու կը պատրաստուէր: Ինչպէս որ այս աւազակը պիտի չկրնար ուրանալ ինչ որ յայտնի իրողութիւն է, այնպէս ալ այժմու մարդը ապրելով ի վնաս հարստահարեալներու, չի կրնար ինքզինք կամ ուրիշները համոզել թէ կը փափաքի բարիքը անոնց, զորս ինք կողոպտելէ չի դադրիր, թէ ինք կ'անգիտանայ վայելած բարիքին ստացումին եղանակը:

31.— Բա՛ւ է անկեղծ ըլլալ հասկնալու համար թէ կեանքի մէջ ոչ ոք ունի, ոչ ոք կրնայ ունենալ իրաւունքներ, առաւելութիւններ, որոշիչ յատկութիւններ, այլ՝ միայն ո՛չ վերջ, ո՛չ սահման ունին պարտականութիւնները, որոնց առաջինը՝ մարդուն ամէնէն անտարակուսելի պարտականութիւնը՝ ի՛ր և ուրիշի կեանքին համար բնութեան հանդէպ մղուած պայքարին մասնակցիլն է:

32.— Մեր կրօնը, մեր գիտութիւնն ու հասարակաց կարծիքը համաձայն են մեզի ըսելու թէ կեանքը, ինչպէս որ սլ զայն վարենք, յոռի է: Միեւնոյն ատեն անոնք կը հաստատեն թէ անգործադրելի վարդապետութիւն մըն է քրիստոնէական (նախնական) վարդապետութիւնը, որ կ'ուսուցանէ թէ ինչպէս կարելի է յաջողիլ լուսագոյն ըլլալ և այսպէս կեանքը բարելաւել:

33.— Մարդոց՝ առեւտուրի, պատերազմներու, հաղորդակցութեան միջոցներու, գիտութեան, արհեստներու մէջ ցոյց տուած տենդոտ ու բազմակնճիռ գործունէութիւնը յաճախ ուրիշ բան չէ, եթէ ոչ անմիտ

չարժում մը ամբոխի կողմէ, որ կը խոնուի կեանքի մուտքին վրայ:

34.— Եթէ իբրև խնդիր առաջարկուած քլար մարդունամբողջ խնայականութիւնը մոլորել, որպէս զի չկարենար ազատիլ հակասութենէն այն ներհակ ըմբռնումներու, որոնք մարդուն մտքին մէջ կը դրոշմուին մանկութենէն սկսած, գաստխարակութեան մեթոտէն աւելի զօրաւոր միջոց մը պիտի չգտնուէր, որ ընդունուած է մեր կարծեցեայ քրիստոնեայ ընկերութեան մէջ:

35.— Մարդիկ — մարդոց մեծագոյն մասը բանականութեան և սիրոյ կեանք մ'ապրելու կարելութիւնն ունենալով հետ մէկտեղ — կը գտնուին միեւնոյն կացութեան մէջ այն սխարներու, որոնք հըրգեհուած տունէ մը դուրս կը հանուին, և որոնք սակայն կարծելով թէ թոցերու մէջ պիտի նետուին՝ իրենց ամբողջ ուժով զիրենք ազատել ուզողներուն կ'ընդգլխաման:

36.— Անխուստփելի դատովճիւր որ կը հարկադրէ այգեպանը իր պօրտէզին պտուղներուն տէր դառնալու՝ այսինքն՝ արտահանումը, ճիշդ ու ճիշդ միեւնոյն է մարդոց համար, որոնք կը կարծեն թէ անհատական կեանքը ճշմարիտ կեանքն է: Մահը կեանքէն դուրս կը հանէ զանոնք, որոնց տեղ ուրիշները կը յաջորդեն, իբր հետեւանք այն սխալին որ կեանքին խմտտը չէ հասկցուած: Ինչպէս որ պարտիզպանները կը մոռնան կամ չեն ուզեր յիշել թէ պատով ու խրամատով շրջապատուած՝ ջրհոր ունեցող պարտէզի մը տէր եղած են, թէ մէկը աշխատած է:

իրենց համար վստահութիւն ունենալով որ իրենք ալ իրենց կարգին պիտի աշխատին: Այսպիս ալ մարդիկ, որոնք կ'ուզեն իրենք իրենց համար ապրիլ, կը մոռնան կամ չեն ուզեր յիշել այն ամէնը որ իրենց համար նախապէս և իրենց կեանքին միջոյին եղած է, հետեւաբար կը մոռնան որ պարտաւորութիւն ունին իրենք ալ աշխատելու, կը մոռնան որ իրենց վայելած բոլոր բարիքները պտուղներ են, որոնցմէ բաժին պէտք է ունենան ուրիշներն ալ:


37.— Կը կարծենք թէ մարդկութիւնը անհետուրով, դաշնագրով, պատերազմներով, գիտութիւնով արհեստներով կը զբաղի, իսկապէս մէկ բանով միայն կը զբաղի, այսինքն ա՛ն կուզէ վերհասու ըլլալ այն բարոյական օրինքներուն, որոնց զօրութեամբ կ'ապրի: Այս օրէնքները դոյութիւն ունին. մարդկութիւնը կը փափաքի անոնց սահման մը տալ, բայց այդ սահմանը անխմաստ ու տարածամ կը թուի անոր որ բարոյական օրէնքը չ'ուզեր ճանչնալ ու անոր հետեւիլ: Սակայն բարոյական օրէնքի այդ սահմանումը ամբողջ մարդկութեան ո՛չ թէ միայն գլխաւոր զբաղումն է, այլ միակ զբաղումը:

38.— Ինչո՞ւ համար շարունակել ապրիլ անպատշաճ եղանակաւ, ինչո՞ւ համար շարունակել ինչ որ կը դատապարտենք: Միթէ՞ մենք մեր կեանքին տէրը չենք, ազատ՝ զայն ըստ հաճոյս փոխելու կամ չափաւորելու: Մեր պերճանքը, անհոգութիւնը, հարստութիւնը և ամէն բանէ առաջ մեր անչափ հպարտութիւնը զմեզ կը գահավիժեն գէպի անգարմանելի կորուստ: Հռչակաւոր և հարուստ ըլլալու համար

կը ստիպուինք մեր անձէն զրկել ինչ որ մարդկային կեանքի ուրախութիւնը կը կազմէ. մեծ քաղաքներու մէջ խիտ առ խիտ կ'ապրինք, կը յոգնինք ու կը ջլատինք, կը խաթարենք մեր առողջութիւնը և հակառակ մեր բոլոր զուարճութիւններուն ու հաճոյքներուն՝ ձանձրոյթէ և վիշտէ մեռնելու աստիճանին կը հասնինք, ու մեր կեանքը կ'ըլլայ բոլորովին տարբեր անկէ ինչպէս որ պէտք էր ըլլալ Արդ, ինչո՞ւ ապրիլ այսպէս, ինչո՞ւ անգթօրէն լսորտակել մեր ամբողջ կեանքը:

39.— Ո՛չ մի սոփեստութիւն, ո՛չ մի ճարտարա-
 լտութիւն պիտի կրնայ յաղթանակել այնքան որոշ
 ու պարզ սա իրողութիւնը թէ բարեշրջութեան տեսու-
 թիւնը, խարխիս ժամանակակից ամէն գիտութեան,
 հիմնուած է ընդհանուր, յուխտենական, անյիզլի օ-
 րէնքի մը՝ գոյութեան և ամէնէն կարողներու վեր-
 սապրումին համար եղած պայքարի օրէնքին վրայ: Հե-
 տեւապէս իւրաքանչիւր մարդ իր շահուն կամ օգտին
 համար այն ընկերութեան, որուն անդամն է, պարտի
 հարողներէն մին ըլլալ և այնպէս միանալ ընկերու-
 թեան, որպէսզի կորսուողը ո՛չ ինք և ոչ ալ իր խում-
 քըն ըլլայ, այլ պայքարին գիմադրելու նուազ կա-
 րողը:

40.— Եթէ յիմարութիւն կը համարիք երթալ
 թուրքերը կամ Գերմանները սպաննել, մի՛ երթաք:
 Եթէ խենդութիւն կը սեպէք աղքատներու աշխատու-
 թեան արդիւնքը բռնի ուժով ձեզ սեփականել, որ-
 պէտքի նորաձեւութեան համեմատ հազուիք դուք և ձեր
 հիւները, կա՛մ, որպէսզի կահաւորէք սրահ մը որ ձեզ
 ստատիկ ձանձրոյթ կը պատճառէ, մի՛ ընէք:



մտութիւն կ'ընդունիք բանտերու մէջ մարդ հասարակ, այսինքն, բացարձակ անգործութեան և վատթարացումի ենթարկել արդէն ծուլութեամբ ու ապակաշուկութեամբ աւրուած անձերու ամէնէն սոսկալին, մի՛ ընէք: Եթէ յիմարական կը գտնէք քաղաքներու ժամտաբեր օդին մէջ տպրիլ. մինչ կրնաք մաքուր օդ շնչել, եթէ անհեթեթ կը գտնէք ձեր տղոց ամէնէն առաջ սորվեցնել մեռեալ լեզուներու քերականութիւնը, մի՛ ընէք: Մի՛ ընէք, մէկ խօսքով, ինչ սքմեր սմբողջ եւրոպական աշխարհը կ'ընէ այժմ. անիկա կ'ապրի և իր կեանքը անմտութիւն կը համարի. իր բանականութեան վրայ վստահութիւն չունի և անոր հետ աններգաշնակ կ'ապրի:

41.— Կը կարծենք թէ մեր ժամանակի և մեր դասու մարդոց կրած զգացումները շատ կարեւոր ու բազմազան են, մինչդեռ իրականին մէջ անոնք երեք տեսակ են՝ մեծամտութիւն, հեշտասիրութիւն և ապրելու տաղտուկ:

42.— Մեծամտութիւնը, ինք իրմէ գո՛հ ըլլալէ տղոց կը նմանցնէ զմեզ:

43.— Ձեր անյաջողութիւններուն համար մի՛ բամբասէք ուրիշները, նոյն իսկ ձեր մէջ փնտռեցէ՛ք ձեր դժբախտութեանց պատճառը և եթէ ունայնամտութեամբ կուրացած չէք, պիտի գտնէք զայն ու այսպէս պիտի սորվիք շարիքէն խոյս տալ: Ձեր դժբախտութեանց դարմանը նոյնիսկ ձեր մէջ է:

44.— «Ինչ ընելու է» հարցումին գէ՛մ պարտի ամէն մարդ ինքն իրեն ըսել:

1. Երբէք շտեղ ես ինձի, կեանքս որչափ ալ հեռացած ըլլայ այն ճշմարիտ ճամբէն, զոր բանականութիւնը իմ առջեւս կը բանայ:

2. Դադրիլ իմ գերագանցութեանս հաւատքնձայելէ:

3. Գործադրել աշխատութեան յաւիտենական, անտարակուսելի օրէնքը առանց երբէք կարմրելու ու է գործէ, ու պայքարիլ բնութեան դէմ իմ և ուրիշին ապրուստը ապահովելու համար:

45.— Յիշէ՛ սա խօսքերը. «Ո՛վ որ ընկերը կը տատապեցնէ, իրեն չարիք կը հասցնէ: Ո՛վ որ ուրիշին կ'օգնէ, իրեն օգնութեան կը հասնի:»

46.— Դուն չես ուզեր որ շարունակաբար տասը ժամ քեզ քունի աշխատեցնեն գործարանի մը կամ հանքի մը մէջ, չես ո՛ւզեր որ քեզ բանտարկեն կամ կախեն, վասնզի կիրքով, հետեւողութեամբ կամ սպիտաբար սպօրինի գործ մը կատարած ես, չես ուզեր որ քեզ վիրաւորեն կամ սպաննեն պատերազմի տակն, դուն ալ ուրիշին մի ընէր:

47. Ինչ որ պատահելու ըլլայ քեզի, իբր բարիք ընդունէ: Մարդոց մէջ բաժանում առաջ մի՛ բերեր երբէք, այլ անհաշտ եզոզներուն մէջ խաղաղութիւն ձգէ: Դժբախտներէն երես մի՛ դարձնիր, այլ ամէն պարագայի մէջ եզրօրդ քով կեցիր: Ո՛ւ է բանքու սեփականութիւնդ մի՛ անուանիր:

48.— Երբէք մի՛ ստեր, որովհետեւ ստախօսութիւնը գաղութեան ճամբան է: Ո՛չ արծաթասէր և ոչ

փառասէր եղիր, որովհետեւ գողութիւնն անոնց հետեւանքն է: Կռուասէր մի՛ ըլլար, որովհետեւ անհայտյանքի աղբիւրներէն մին է, և ո՛չ ալ խորխտ ու չարակամ, որովհետեւ հայտյանքը անոնց պտուղն է:

49.— Խոյս տուր ամէն տեսակ չարութենէ և այն ամէնէն որ չարութեան կը նմանի: Մի՛ բարկանար, որովհետեւ բարկութիւնը մարդասպանութեան կ'առաջնորդէ, նախանձատ մի՛ ըլլար, ոչ կռուարար, ոչ՛ դայրացկոտ, որովհետեւ այս բաներուն հետեւանքն է մարդասպանութիւնը: Հեշտասէր մի՛ ըլլար, որովհետեւ հեշտասիրութիւնը պոռնկութեան կը յանգի:

50.— Մի՛ ներեր որ խօսքդ ըլլայ ունայն ու ստայօդ, այլ գործերուդ հետ համաձայն թո՛ղ ըլլայ: Երբէք մի՛ ըլլար ագահ, յափշտակիչ, կեղծաւոր, չարաբարոյ, հպարտ: Ընկերոջդ հանդէպ չար խորհուրդներ մի՛ յղանար, քու նմաններուդ հանդէպ ատելութիւն մի՛ սնուցաներ երբէք:

51.— Եթէ չես կրնար ընել ուրիշին ինչ՝ որ կ'ուզէիր որ ուրիշը քեզի ըներ, գէ՛թ մի ըներ ուրիշին ի՛նչ որ չէիր ուզեր որ ուրիշը քեզ ըներ:

52.— Կեանքի բարոյական հիմերը Յիսուսի ստհինգ պատուէրներուն մէջ կը հաստատուին. մի՛ բարկանար, մի՛ շնար, մի՛ երգուըննար, չարին հակառակ մի՛ կենար, մի՛ կռուիր:

53.— Զբսնք թէ Եւրոպայի բոլոր մայրաքաղաք-

ներուն մէջ չքաւորութիւն կայ և թէ անհրաժեշտ է անխկաւ։ Ի՞նչ անհրաժեշտ չէ, վասնզի մեր մտքին ու սրտին հակառակ է այդ։

54.— Ժողովուրդին վիճակը պիտի չկրնայ բարելաւուիլ, եթէ հարուստ դասակարգի մարդոց պէս զործաւորները չհասկնան վերջապէս որ եթէ կ'ուզեն իրապէս օգնել իրենց եղբայրներուն և ո՛չ թէ գոհացընել անձնական ընշասիրութիւններ, պարտին պատաստ ըլլալ իրենց կեանքը յեղաշրջելու, իրենց սովորութիւններէն հրաժարելու, իրենց այսօրուան վայելած առաւելութիւնները կորսնցնելու, կառավարութեանց դէմ կատաղի կռիւ մղելու, մանաւանդ անոնց և անոնց ընտանիքներու դէմ, վերջապէս պարտին պատաստ ըլլալ դիմադրաւելու՝ օրէնքներու արհամարհանքէն առաջ գալիք հալածումին։

55.— Երկու պատճառներ հարուստ դասակարգի մարդոց ցոյց կուտան իրենց կեանքը փոփոխելու պէտքը. առաջին իրենց անձին և իրենց մերձաւորին բարօրութեան հոգը, զոր երբէք չի բառնար այն ճամբան ուր կը գտնուին իրենք. երկրորդ՝ գիտակցութեան ձայնը գոհ թողելու պարտաւորութիւնը, որուն զօրծաղութիւնը յայտնապէս անկարելի դարձած է իրենց ապրած այժմու կեանքին պատճառաւ։ Այս միացած պատճառները պարտին դրդել հարուստները որ փոխեն իրենց կեանքը մինչեւ որ երջանկութիւննին ապահովուի և խիղճերնին գոհ մնայ։

56.— Մեր ընկերական կարգը, որ հակառակ է մարդոց գիտակցութեան, որպէսզի տեղի տայ անոր

համաձայն եղող կարգի մը, պէտք է որ հասարակաց հին պառաւական ըմբռնումին տեղ անցնի աւելի թարմ ու կենսալիր ըմբռնում մը: Արդ, ասոր համար պէտք է որ կեանքի նոր պահանջներու գիտակցութիւնն ունեցող մարդիկ զանոնք յայտնապէս բացատրեն: Իրապէս ամէն անոնք որ այս պահանջներուն գիտակցութիւնն ունին, այս կամ այն պատճառներով անոնց վրայէն լուծեամբ կ'անցնին, իրենց գործերով ու խօսքերով այդ պահանջներուն հակառակը կը ջատաագտվեն:

57. — Հնդկի աւանդութիւն մը կը պատմէ թէ մարդու մը ձեռքէն մարգարիտ մը կ'իյնայ ծովուն մէջ. զայն գտնելու համար մարդը դոյլ մը կ'առնէ և կըսկսի ծովուն ջուրը պարպել եզերքին վրայ: Այսպէս անդու է հայխատի և եօթներորդ օրը ծովուն ոգին՝ վախնալով որ մարդը կը ցամքեցնէ ծովը, մարգարիտն անոր կը բերէ:

Եթէ մեր ընկերային չարիքը, մարդուն հարըստահարութիւնը, ծովն է, մեր կորուսած մարգարիտն ալ — առաքելութիւնը — կ'արժէ որ մարդը դռնէ իր կեանքը այդ չարիքի ովկէանը ցամքեցնելու համար: Աշխարհի ոգին այդ բանէն պիտի վախնայ և ծովուն ոգիէն աւելի շուտ հնազանդութեան պիտի գայ: Բայց ընկերային չարիքը ծով մը չէ, այլ ազտեղութեանց գարշահոտ փոս մը, զոր նոյնիսկ մենք հոգածութեամբ կը լեցնենք ազրերով: Կը բուէ մեզ միայն արթննալ, հասկնալ ինչ որ կ'ընենք, չսիրել այլ ևս մեր ազրերը, որպէսզի այս ծովը որ մեր գործն է, խիոյն չօրնայ և այն ատեն պիտի տիրանանք մարդկային, եղբայրական կեանքի անդին մարգարտին:

58. — Մարդիկ որչափ հաւատան թէ հակառակ իրենց՝ կրօն կամ գիտութիւն կոչուած ո՛րեւէ ինքնաբեր արտաքին ուժի մը միջոցաւ կրնան ունենալ բարոյական փոփոխութիւն, այնչափ դժուար կը կատարուի այդ փոփոխութիւնը:

59. — Մարդոց ազատագրումը տեղի պիտի ունենայ իւրաքանչիւր անհատի ազատագրումով: Այս անհատական ուրոյն ազատագրումը, որ ժամանակաւ շատ հազուադէպ երևոյթ մըն էր և աննշմար կը մնար, այս վերջին տարիներուս մէջ շատ աւելի յաճախադէպ եղած է և իշխանութեան համար շատ աւելի վտանգաւոր:

60. — Ինձ պատճած են պատմութիւնը յանդուգն ստախկանի մը, որ հասնելով գիւղ մ'յ՛ որուն բնակիչները ապստամբած էին և այս պատճառաւ զօրագոհներ կանչուած, գաղափարը կ'ունենայ Նիքոլա Ա. ի գէմ եղած ապստամբութիւնը զսպել լոկ իր անձնական ազդեցութեամբ: Կը հրամայէ մի քանի սայլարեւեղէզ բերել և մուծիքներուն հետ կամեցի մը մէջ փակուելով զանոնք այնպէս կը սարսափեցնէ իր անէծքներով որ կը ստիպէ իրար զիրար ձողկել: Այս գործը կը շարունակուի մինչև այն տակն, երբ տխմար երիտասարդ մը կը մերժէ ձողկել և կը յորդորէ միւսները իրեն հետեւելու: Այն ժամանակ միայն տանջանքը մը զազրի, և ստախկանը կը ստիպուի փախչիլ:

Ասոնք փոքր տխմարի մը պատուէրներն են, որոնց հետեւելու սրոշում չեն տար մարդիկ: Կը շարունակեն ինքզինքնին ձողկել և կը յայտարարեն թէ տտոր մէջ է մարդկային իմաստութեան վերջին բառը:

61. — Պատմութիւնը անհերքելի կերպով կ'ապացուցանէ մարդուն թէ ընդհանուր առմամբ կեանքի շարժումը չի կայանար արարածներու պայքարին վերասաստկութեան ու բազմացումին մէջ, այլ ընդհակառակը՝ անհամաձայնութեան նուազումին ու պայքարի տկարացումին մէջ, և թէ կեանքը ա'յն ուտեն միայն կը յառաջդիմէ, երբ բոլոր մարդիկ բանականութեան հպատակելով՝ անհամերաշխութենէ և հակառակութենէ կ'անցնին համերաշխութեան ու միութեան:

Բ.

ԿՐՕՆԸ

62. — Առանց կրօնի, այսինքն, տիեզերքի հետ առանց ո՛ր և է կապակցութեան մարդ մը երեւակայեց ա'յնչափ անկարելի է, որչափ առանց սրտի մարդ մը: Մէկը կրնայ կրօն մ'ըլլալուն անգիտանալ, ինչպէս որ կրնայ անգիտանալ սիրտ մ'ըլլալուն, սակայն թէ՛ անկրօն և թէ՛ անսիրտ մարդեր չեն կրնար գտնուիլ:

63. — Կրօնը աստուածութիւններու հանդէպ հպատակութեան մը գիրքին մէջ չի կայանար — մարդոց յատուկ բնական դիրք մը՝ իրենց հոգեկան ընդարձակումի պահուն միայն — ի յայտ եկած՝ բնութեան անծանօթ ուժերու առջեւ զգացուած սնապաշտ արհաւիրքէն: Կրօնը ամէն տեսակ վախէ և մարդուն պաշտամունքի կարգէն բոլորովին անկախ բան մըն է, բան մը զոր քաղաքակրթական ո՛ր և է զարկ չի կրնար տնչացնել, սա՛ պատճառաւ որ մարդուն՝ անսահման

տինգերքի մը մէջ ինքզինք սահմանաւոր արարած մը զգալը, իր յանցապարտ վիճակին, այսինքն, կարողութեանը տակ ինկածին ու պարտաւորուածին կատարած չըլլալու՝ գիտակցութիւնը միշտ երեւան կուգան և պիտի գան ցորչափ մարդը մարդ մնայ:

64.— Անվաստան Աստուծոյ մը և հոգւոյն աստուածայնութեան գազափարը, մարդոց գործերուն՝ Աստուծոյ հետ ունեցած առնչութեան, հոգւոյն միութեան և ըրարիին ու բարոյական ցաւին ըմբռնումը մարդկային մտածումին անհունութեան մէջ կազմուած այնպիսի գազափարներ են, առանց որոնց կեանք գոյութիւն պիտի չունենար:

65.— Ամէն տեսակ կրօններու ոգին կը գտնուի պատասխանին մէջ, սա հարցումին. «Ինչու՞ համար կ'ապրիմ և զիս շրջապատող անհուն տիեզերքին հետ ի՞նչպիսի յարաբերութեան մէջ եմ?»

Երբ մարդ կը մտնէ ճշմարիտ կեանքի մէջ, չի կըրնար ի՛նք իրեն չուղղել այս հարցումը, որ միշտ պատրաստ է իւրաքանչիւրին ներկայանալ, և իւրաքանչիւր մարդ այս կամ այն կերպ պատասխան մը կուտայ միշտ, ի՛նչ որ կը կազմէ բոլոր կրօններու ոգին:

66.— Չիկայ հաճոյքէն աւելի հին բան մը և չիկայ աւելի թարմ, աւելի նոր բան մը քան այն զգացումները, որոնք իւրաքանչիւր դարու կրօնական գիտակցութենէն կը բղխին: Ուրիշ կերպ պիտի չկրնար ըլլալ՝ մարդուն հաճոյքը նոյնիսկ իր բնութենէն գրծուած սահման մ'ունի, մինչդեռ մարդկութեան յառաջդիմութիւնը, որ կրօնական գիտակցութեան բա-

բեշընութեամբ կը յայտնուի, սահման չունի:

67. — Ամէն դարաշրջանի մէջ, մարդկութեան մէջ կը գտնենք միեւնոյն մտածումը, այսինքն, մարդը աստուածային լոյսին ընդունարանն է, և այդ լոյսը բանականութիւնն է, ա՛ն միայն մեր պաշտամունքի առարկան պարտի ըլլալ և ա՛ն միայն մեզ կը պատրաստէ ճշմարիտ բարիքը:

68. — Ձիկայ կրօն մը, ամէնէն զարգացածէն սկսեալ մինչեւ ամէնէն անհեթեթը, որ իրեն խարխուս չունենայ աղերսի հիմնական գաղափարը, որով կապուած է մարդ զինք շրջապատող տիեզերքի կա՛մ անոր սկզբնապատճառին հետ: Ձիկայ կրօնական ձէս մը, լինի ա՛ն աշխարհի ամէնէն անհեթեթը, չիկա պաշտամունք մը, լինի ա՛ն ամէնէն սրբագործուածը, որ իրեն խարխուս չունենայ միեւնոյն հիմնական գաղափարը:

69. — Հաւատացեալներու համար, քրիստոնէութիւնն այսօր գերբնական հրաշալի յայտնութիւն մը կը համարուի, որուն հաւատոյ հանգանակը երկնային բացատրութիւնն է: Ազատասհններու համար գերբնականին, պատմական երեւոյթներու հաւատ ընծայելը՝ մարդոց պէտքին մէկ յայտարարութիւնն է, պէտք՝ որ իր վերջնական բացատրութիւնը գտաւ կաթոլիկութեան, օրթոտոքութեան ու բողոքականութեան մէջ, և որ մեզի համար չունի գործնական նշանակութիւն:

Կրօնի ուսման ճշմարիտ հասողութիւնը հաւատացեալներէն ծածկուած է եկեղեցոյն կողմէ, ազատամիտներէն՝ գիտութեան կողմէ:

70). — Բայ ի քրիստոնեայ եկեղեցւոյն կրօնէն, բուր կրօնները կը պահանջեն ամէն անոնցմէ որ զանոնք կը զաւանթն, ձէսերէ դուրս, կատարել կարգ մը բարի գործեր և չարէն հետի կենալ: Հրէութիւնը կը պատուիրէ թլիսաութիւն, շարաթը սուրբ պահել, սգորմութիւն, յորեկան տարի և ըն: Մահմետականութիւնը կը պատուիրէ թլիսաութիւն, օրական հինգ անգամ աղօթք, աղքատներուն տասանորդ տալ և ըն: Միւս բոլոր կրօններու համար ալ միեւնոյնն է: Թո՛ղ այս պատուէրներն բլլան բարի կամ չար, պատուէրներ են՝ որոնք գործ կը պահանջեն: Միայն սուտ-քրիստոնէութիւնը բան մը չի պատուիրէր: Չիկայ բան մը՝ գոր քրիստոնեան ստիպողարար պահել պարտաւորի, եթէ չհաշուենք մեծ պահքն ու աղօթքները, գորս եկեղեցին դարձեալ ո՛չ պարտաւորիչ կը ճանչնայ: Աստ-քրիստոնէութեան համար պէտք եղածը միայն խորհուրդն է: Ասկայն խորհուրդը հաստատացեալին կողմէ չի կատարուիր, ուրիշներ զայն անոր կը մատակարարեն: Աստ-քրիստոնեան պարտաւորուած չէ բան մ՛ընել, ո՛չ իսկ բանէ մը հրածարիլ իր փրկութեան համար: Եկեղեցին յանձն կ'առնէ զայն մկրտել, օծել, անոր տալ հազորդութիւն, վերջին օծում և զայն խոստովանցնել, երբ գիտակցութիւնն իսկ կորուսած է աղօթել անոր համար, և ահաւասիկ կը փրկուի: Քրիստոնեայ եկեղեցին, կոստանդիանոսէն սկսեալ, իր անդամներուն ո՛չ մի գործ պատուիրեց, ո՛չ մի ժուժկալութիւն պահանջեց: Քրիստոնեայ եկեղեցին ճանչցաւ և նուիրագործեց գիտութիւնը, դատարանները, գոյութիւն ունեցող բոլոր իշխանութիւնները, ինչպէս նաև բանութիւններն ու կոիւնները:

Եկեղեցին Յիսուսի վարդապետութիւնը խօսքով ընդունելով՝ զայն գործքով ուրացաւ կեանքի մէջ:

71. — Փրկութեան վարդապետութեան մէջ երկու գլխաւոր խնդիր կայ, որոնց վրայ կը հանդէի ասէն բան : 1) Մարդուն բնականոն կեանքը երանութեան կեանք մըն է, սակայն մեր երկրային կեանքը թշուառ է և մեր անձնական ճիգերով չի կրնար բարեկաւուրլ : 2) Մեր փրկութիւնը կը գտնուի այն հաւատքին մէջ որ մեզ կը թողատրէ ազատելու այս թշուառ կեանքէն :

Այս երկու խնդիրներն եղած են հիմ հաւատացեալներու և մեր սուտ-քրիստոնեայ ընկերութեան սկեպտիկներու կրօնական ըմբռնումին : Երկրորդ խնդիրը եկեղեցւոյն և անոր կազմակերպութեան ծնունդ տուած է . առաջինը համաձայն կուգայ մեր քաղաքական ու փիլիսոփայական տեսութիւններու և ընդհանրապէս ընդունուած թուիքներու ծագումին : Բոլոր քաղաքական ու փիլիսոփայական տեսութիւնները, որոնք կը ջանան գոյութիւն ունեցող կարգը հաստատել, հեկեկականութիւնը և իր ճիւղերը իբր ընծիւղ կը գտնուին այս խնդրոյն մէջ : Յուստեսութիւնը, որ կեանքէն կը սպասէ ինչ որ չի կրնար տալ, և որ զայն կ'ուրանայ այս պատճառաւ, նմանապէս անկէ կը բղխի Նիւթապաշտութիւնը, իր նորասքանչ խանդավառ հաստատումներով թէ մարդը բնական դատապարտեալ մըն է և ո՛չ աւելի, օրինաւոր մէկ ճիւղն է այն վարդապետութեան որ կը սորվեցնէ թէ այս աշխարհի կեանքը անկեալ կեանք մըն է : Հոգեպաշտութիւնը, իր համախոհ գիտուններուն հետ լաւագոյն ապացոյցն է թէ փիլիսոփայական ու գիտական հայեցակէտը անկախ չէ, այլ հիմնուած է կրօնական վարդապետութեան ցոյց տուած յաւիտենական երանութեան վրայ, որ մարդուն բնական ժառանգութիւնը պիտի ըլլայ :

Կեանքը հասկնալու այս ստայօգ կերպը ողբալիօքէն ազդած է մարդուն ամբողջ տրամաբան գործու-

նէութեան վրայ: Կորուստի և փրկութեան վարդապետութիւնը քողածածկեց անոր գործունէութեան ամէնէն կարեւոր ու ամէնէն օրինաւոր մասը և ջնջեց անոր ամբողջ գիտակցութեան աշխարհի վրայէն այն ճանաչողութիւնը, որուն պէտք ունէր մարդ աւելի լաւ և աւելի երջանիկ ըլլալու համար:

72.— Ի՞նչ որ այնչափ ապահովութեամբ ու հանգիստաւորութեամբ կը կրկնեն դարէ դար սարկաւազապետներ, եպիսկոպոսներ, արքեպիսկոպոսներ, սրբազան ժողովներ և պապեր՝ նենգաւոր ստախօսութիւն մըն է: Անոնք կը զբարտեն Քրիստոսը հարստութիւննին ապահովելու նպատակաւ, որոնց պէտք ունին ի միաս ուրիշներու հաճելի կեանք մը վարելու համար: Այսօր անոնց ստութիւնը այնպէս յայտնի է որ գիրքերնին պահելու համար ի գործ դրած միակ միջոցնին համարձակութեամբ ու վայելչութեամբ ժողովուրդին աչքը վախցնելն եղած է:

73.— Ի՞նչ բանի համար է կղերը, որ երկար ժամանակէ ի վեր քարոզածին ին՝ք չի հաւատար ալ եւս:

74.— Կրօնական աւելորդապաշտութիւնը քաջալերուած է ժողովրդեան դրամով հաստ ստուած տաճարներով, հանդէսներով, յիշատակարաններով, տօներով, գինովցնող խունկերով և մանաւանդ խնամքովը կղերին, որուն պաշտօնն է մարդիկն անբանացնել ու զանոնք շարունակ այս վիճակին մէջ պահել. ուսուցման, ծիսական հանդիսաւորութեան, քարոզներու միջոցաւ և սերունդէ, ամուսնութենէ, մահէ զուրկ կեանքի

համար ի գործ դրած իբր միջամտութեամբ :

75.— Յիսուսի պատուէրը այլափոխուած ու ձեւափոխուած է անհեթեթ վնուկային գործերու հետեւանքով : Լոգաջուր, օծում, գիւթաբանութիւն, կտոր մը հացի կլանում, ա՛յնչափ շատ որ տնոր պատուէրներէն բան մը չի մնար այլ եւս : Եւ նի՛ք մէկը յանդգնել ըսել որ այս ամէն վճուկութիւնը, այս աղօթքները, պատարագները, պատկերները ո՛ր է է յարաբերութիւն չունին Յիսուսի պատուէրին հետ, թէ անիկա մարդոց պատուիրեց միայն զիրար սիրել, շարիքի դէմ շարիք չգործել, չդատել, իրենց նմանը չը սպաննել, ամէն անոնք որ կ'օգտուին ստախօսութիւնէ զայրազին բողոքով ու անհաւատալի յանդգնութեամբ մը կը պոռթկան, իրենց եկեղեցիներուն մէջ հրապարակաւ կը քարսզեն, իրենց գրքերուն, լրագրերուն, քրիստոնէականին միջոցաւ կը հրատարակեն թէ Յիսուս երբէք արգիլած չէ երդումը (հայհոյանքը), բնաւ արգիլած չէ սպաննութիւնը (մահապարտ գործեր, պատերազմներ), և թէ Յիսուսի թշնամիներուն սատանայական մէկ նենգութիւն է, մէկ հնարքը՝ շարիքին դէմ չկենալու պատուէրը :

76.— Տաճարներ կը կառուցանեն Յիսուսը փառաբանելու համար, «Քաղցրի՛կ Յիսուս», փա՛ռք առաքենաներուն ու մարտիրոսներուն : Անրի՛ծ Յիսուս, Զգաստութիւն կոյսերու, փրկե՛լ գիս : Յաւիտենական Յիսուս, փրկի՛չ մեզաւորաց, Քե՛զ կը գիմեմ : Խոնարհ Յիսուս, որդի Աստուծոյ, գլխո՛ւ ինձ : Երանելի Յիսուս, զօրութիւն թագաւորաց, ուրախութիւն միաբաններու, շնորհե՛լ ինձ արքայութեան վայելքները : Եւ Ոչ ոք վայր-

կեան մը կը խորհի թէ այն Յիսուսը, որուն անունն այնքան կը կրկնեն, որուն անհեթեթ գովաբանութիւններ կուզեն, ճիշտ նոյն Յիսուսը իրօք արգիլեց այս տաճարները, այս զրաքանութիւնները և այս հայհայական վնասութիւնները, որոնք ի գործ կը դրուին հօտին հոգեւոր հովուին կողմէ հացին ու գինիին վրայ: Ան արգիլեց բացայայտօրէն որ մարդիկ հովուապետ չանուանին ուրիշները, արգիլեց տաճարներու մէջ եղած աղօթքները, արտօնելով իւրաքանչիւրին աղօթել առանձնութեան մէջ, նոյնիոկ տաճարներն արգիլեց ըսելով թէ եկած է դանոնք քանդելու, թէ՛ աղօթել պէտք է ո՛չ թէ տաճարներու մէջ, այլ հոգւով ու ճշմարտութեամբ: Մանաւանդ արգիլեց ո՛չ միայն չղատել մարդիկ, չբանտարկել, չնահատակել, չնախատել, չպատժել, այլ և ի գործ չդնել ամէն տեսակ բռնութիւն, ըսելով որ գերիները արձակելու եկած է: Ոչ ոք կը խորհի որ այն ոսկեգօծ խաչը իր պճնազարդ մետաղներով՝ զոր քահանան կը կրէ և հաւատացեալները կը համբուրեն, ուրիշ բան չէ եթէ ո՛չ արտատպութիւնն այն կախազանին, որուն վրայ Յիսուս չարչարուեցաւ, և ճշմարտապէս, որովհետեւ իր անունով կատարուած այս միեւնոյն գործերը արգիլած էր: Ոչ ոք կը խորհի որ քահանաները հացի և գինիի երեսոյթին տակ Յիսուսի մարմինն ուտել և արիւնը խմել կարծելով՝ ո՛չ միայն կը մուրեմնեն խոնարհները, որոնց հետ Յիսուս նոյնացած է, այլ անոնց ամենամեծ բարիքը կը կորսնցնեն ու զանոնք կը նեւան ամէնէն անգութ չարչարանքի մէջ՝ ծածկելով անոնցմէ երանութեան յայտնութիւնը, զոր Յիսուս բերած էր անոնց:

77. — Բոլոր այս խորհուրդները կը համարեմ

իր անագնիւ ու կոչտ վհուկութիւններ, անհաշտ՝ Աստուծոյ գաղափարին ու Յիսուսի պատուէրին հետ, և աւելի պատուիրազանցութիւն՝ Աւետարանի հիմնական սկզբունքներուն: Նորածինին մկրտութեանը մէջ եղծումը կը տեսնեմ նոյնիսկ այն նշանակութեան, զոր քրիստոնէութիւնը զիտակցաբար ընդունող չափահասներու մկրտութիւնը կրնայ ունենալ: Նախապէս կամովին միացած երկու էակներու ամուսնութեան խորհուրդին մէջ, ամուսնալուծութեան խնդրոյն մէջ և ամուսնալուծեալ անձերու երկրորդ ամուսնութեան ատեն արուած օրհնութեան մէջ կը տեսնեմ հիմնական հակասութիւններ աւետարանական պատուէրի թէ՛ ոգււոյն և թէ՛ տառին դէմ:

78.— Խոստովանութեամբ մեղքերու ժամանակաւոր թողութեան մէջ կը տեսնեմ վտանգաւոր խաբէութիւն մը, որ կրնայ անբարոյականութիւնը քաջաչիւրիւ և յանցանքի առջիւ ամէն վարանում աներեւութացնել: Վերջին օժման ու վեհապետներու օժման մէջ, պատկերներու և մասունքներու պաշտումին մէջ, բոլոր ծէսերու, այսինքն ազօթքներու և արարողութեամբ հաստատուած դիւթութիւններու մէջ կը տեսնեմ անհիթիթ վհուկութեան գործադրութիւնը: Հաղորդութեան մէջ կը տեսնեմ քրիստոնէական վարդապետութեան հակառակ՝ մօլու աստուածացումը: Սրբաբարութեան մէջ կը տեսնեմ առաջին կարգի խաբէութիւն և աւելի՛ պատուիրազանցութիւն Յիսուսի պատուէրին, որ արգելեց սէր կամ վարդապետակոչել ո՛վ որ ալ ըլլայ:

79.— Սրբապղծութիւն մը կը կատարուի և սըր-

բարգձու թիւններու ամէնէն սուկալին ու ընդզեցուցիչը, երբ արամազրելի բոլոր միջոցները կը գործածուին մարդիկը խարելու և քնածնելու համար, օգուտ քողելով ժողովրդեան ու տղոց պարզամտութիւնէն համոզելով որ եթէ այնինչ ձեւով հացի պատառ մը կտրուի քանի մը խօսքեր արտասանելով և յետոյ դրուի գինիին մէջ սատուածային բնութիւնը կը հաղորդուի այն հացի կտորին, թէ քահանան երբ կենդանի մը կամ մեռեալի մը անունով զայն բարձրացնելու ըլլայ, մէկուն առողջութիւնը կ'ապահովէ և միւսին՝ հանդերձեալ աշխարհի մէջ ճակատագրին բարելաւութիւնը, վերջապէս թէ ո՛վ որ կ'ուտէ հացին պատառը, իր մէջ կ'ընդունի նոյնինքն Աստուած:

80. — Փոխանակ ժողովուրդը իր կեանքին առաջնորդելու՝ եկեղեցին, ի շնորհուկս ժողովրդեան, իր ուղած ձեւով կը քօցատրէ Յիսուսի բնազանցական վարդապետութիւնը, այնպէս որ անկէ կեանքի համար ո՛չ մի պարտաւորութիւն կը բղխի, հետեւաբար և ոչ մի ստիպում մարդոց վրայ՝ լաւագոյն կեանքով ապրելու: Եկեղեցին ժողովրդեան առջեւ անձնատրութեան դաշինք կը գնէ, անոր ետեւէն կ'երթայ:

81. — Ամէն մարդ իր կեանքը կը հաստատէ սկզբուքներու վրայ, որոնք ո՛չ միայն կրօնի հետ առնչութիւն չունին, այլ և յաճախ կատարելապէս անոր հակառակն են: Կրօնի պատուէրը ո՛չ մի ազգեցութիւն ունի կեանքի վրայ: Ձի գծեր երբէք մարդոց հետ մեր ունեցած յարաբերութիւնները, և մենք մեր անձնական կեանքին մէջ անոր խորհուրդ չենք հարցնելու բնաւ: Եթէ մէկը անոր հետ շփման

մէջ գտնուի, կարծես բոլորովին արտաքին երեւոյթի մը հետ է որ երբէք կապուա՞ չէ կեանքին :

82.— Ապրելակերպէն ու գործերէն անկարելի է հասկնալ թէ մարդ մը հաւատացեա՞լ է թէ անասունա՞ծ :

83.— Օր մը, հրեայ բարբի մը հետ կը կարգայի երրայեցերէն լեզուաւ՝ Մատթէոսի Ե. Գլուխը: Գրեթէ ամէն մէկ տունի վերջը բարբին կ'ըսէր. «Ասիկա Աստուածաշունչին մէջ կը գտնուի, ասիկա՞ Տալմուդին մէջ:» Եւ Աստուածաշունչին ու Տալմուդին մէջ ցոյց կուտար ինձ վճիռներ, որոնք շատ կը նմանէին լերան վրայի քարոզի խօսքերուն: Երբ հասանք «Չարին դէմ մի՛ կենաք» տունին, չբաւ. «Ասիկա Տալմուդին մէջ կը գտնուի,» այլ ինձ հարցուց ժպտելով. «Քրիստոնեաները կը պահե՞ն այս պատուէրը, միւս երեսնին կը դարձնե՞ն:» Տալիք պատասխան մը չունէի, որովհետեւ այդ միջոցին քրիստոնեաները, հեռի՛ երեսնին դարձնելէ, հրեաներուն երկու երեսներուն կը զարնէին:

Այն ատեն հարցուցի անոր թէ Աստուածաշունչին կամ Տալմուդին մէջ անոր նման բան մը չկա՞յ:

«Ո՛չ, պատասխանեց ինձ, չկայ նմանօրինակ բան մը, սակայն դուք ինչո՞ւ համար ինձ չէք ըսեր թէ քրիստոնեաները կը պահե՞ն այդ օրէնքը:» Այս հարցումը ինձ բսելու կերպ մըն էր թէ քրիստոնեաներու օրէնքին մէջ գոյութիւնը պատուէրի մը, զոր ս'չ միւսայն մէկը չի պահեր, այլ և նոյնիսկ քրիստոնեաներն անգործադրելի գտած են, անմտութեան և այդ պատուէրի ոչնչութեան խոստովանութիւնն է:

Բարբիին պատասխան մը չկրցի տալ:

84.— Կարծեմ Մաքս Միւլլէրն է որ կը պատմէ թէ Հնդկաստանցի մը, որ քրիստոնէութիւնն ընդունած և անոր էութեան թափանցած էր, երբ Եւրոպա կուգայ, մեծապէս կը զարմանայ տեսնելով թէ ինչպէս կ'ապրին քրիստոնէաները: Ապշահար կը մնայ իրականութեան առջև՝ բոլորովին հակառակ անոր՝ որ քրիստոնէայ ժողովրդոց մէջ գտնել կը յուսար:

85.— Ոչ — քրիստոնէայ աշխարհի վայրենիները — բոլոր Զուլուները, Մանչուները, Չինացիները, զորս շատեր վայրենի կը համարին, և մեր մէջ ապրող վայրենիները — քրիստոնէայ դարձնելու համար միայն մեկ միջոց կայ, այն է այս ժողովրդոց մէջ ծաւալել ճշմարտապէս քրիստոնէայ բարքեր, որոնք օրինակով միայն կրնան տարածուիլ: Եթէ ոչ քրիստոնէութիւնը իբրև սարաք չի ծանրանար իրեն դեմ ապստամբողներու վրայ, որովհետեւ մեր ժամանակի մարդիկ ճիշդ պէտք ըլլալիքին հակառակը կը գործեն:

86.— Եկեղեցիներուն՝ մարդոց հանդէպ բռնած ընթացքը սոսկալի է, սակայն եթէ մէկը քննէ անոնց գիրքը, պիտի հասկնայ որ ուրիշ կերպով ալ պիտի չկրնային շարժիլ: Եկեղեցիներու առջև դրուած երկսայրարանութիւն մը կայ՝ լերան վրայի քարոզը և նիկիոյ Հանգանակը: Մին կը տարամերժէ միւսը: Եթէ մարդ մը անկեղծօրէն հաւատայ լերան վրայի քարոզին, նիկիական Հանգանակը ճակատադրապէս կը կորսնցնէ անոր համար՝ իր ամբողջ նշանակութիւնն ու արժէքը և նիկիական Հանգանակի հետ, եկեղեցին ու իր ներկայացուցիչները: Եւ եթէ հաւատայ նիկիական Հանգանակին, այսինքն, եկեղեցւոյն կամ որ նոյնն:

է՛ անոնց որ իրենք զիրենք անոր ներկայացուցիչները կ'անուանեն, լերան վրայի քարոզը անպէտ կը դառնայ: Այս պատճառաւ եկեղեցիները չեն կրնար իրենց երեւակայելի բոլոր ճիգերը չգործածել մութին մէջ թողելու համար լերան վրայի քարոզին նշանակութիւնը և իրենց յանկուցանելու համար մարդիկը:

87.— Կարգ մը մարդիկ, Քանդէն, Շթրոսէն, Սքէնսըրէն, Ռընանէն սկսեալ առանց հասկնալու Յիսուսի խօսքերը, առանց հասկնալու թէ անոնք ինչո՛ւ համար ըսուած են, չհասկնալով նոյնիսկ հարցը, որուն պատասխան են անոնք, նեղութիւն յանձն չառնելով անոնց իմաստին թափանցելու, պարզապէս չեն ընդունիր վարդապետութեան բանաւոր իմաստ մ'ունենալը, երբ որ լաւ տրամադրուած չեն: Իսկ երբ կը հաճին բարեացակամ ըլլալ, իրենց բարձր իմաստութեամբ կը սրբագրեն զայն՝ կարծելով որ Յիսուս ճիշդ իրենց խորհածը ըսել կ'ուզէր, բայց գիտցած չէ զայն ներկայացնել: Անոնք իբրև յանձնապատաններ՝ վարդապետութիւնը կ'անուանեն խօսակիցներու խօսքեր, զորս ստորին կը համարեն ըսելով. « Բայց իրապէս այս ու այն բանը ըսել ուզած էք »:

88.— Յիսուսի վարդապետութիւնը հասկնալու համար ամէն բանէ առաջ պէտք է ինքզինք գտնել և զգուշութեամբ խորհրդածել, պէտք է որ մեր մէջ ճշգրտութիւն այն ապարշաւը, որու մասին կը խօսի Յիսուսի նախակարապետը՝ Յովհաննէս Մկրտիչ՝ երբոր մերինն պէս խառնաշփոթ դատողութեան տէր մարդոց կ'ուզէր իր խօսքը: Անիկա կ'ըսէր. « Ամէն քանի առաջ ապաշխարհեցէ՛ք, այսինքն, դուք ձեզի

գտէք, առանց այս բանին՝ ամէնքդ ալ պիտի կորսուիք» Յիսուս ալ անոր պէս կը սկսի իր պատուէրն ըսելով, « Դուք ձեզի գտէք, ապաշխարհեցէ՛ք, առանց ասոր ամէնքդ ալ պիտի կորսուիք:»

89. — Օր մը Յիսուս, Երուսաղէմի մէջ, աւագանի մը քով հանդիպեցաւ հիւանդի մը, որ առանց բան մ'ընելու կեցած էր և հրաշքով մը իր բժշկութեանը կը սպասէր: Յիսուս ըսաւ անոր. « Հրաշքով մը բժշկութեանդ մի՛ սպասեր, այլ գորութեանդ ներած չափով շարունակէ՛ ապրիլ:»

90. — Յաճախ կ'ըսուի որ եթէ նախնական քրիստոնէութիւնը ճշմարտութիւն մըն էր, պէտք էր որ երևալ սկսելուն պէս բոլոր մարդոց կողմէ ընդունուէր և այդ ժամանակէն իսկ ժոխէր կեանքի պայմանները զայն բարեկամելով: Ասիկա ըսել պիտի նշանակէր որ ցորենի հատիկը ընծիւղի սկսելուն պէս պէտք է որ միեւնոյն ատեն ցողուն, ծաղիկ ու պտուղ առաջ բերէ:

91. — Յիսուս մարդոց կը սորվեցնէ լոյսին հաւատալ ցորչափ լոյսն իրենց մէջ է: Կը սորվեցնէ ամէն բանէ՛ վեր պահել բանահանութեան այդ լոյսը, անկէ առաջնորդուելով ապրիլ և չընել ինչ որ բանականութեան հակառակ կը նկատուի:

Յիսուսի վարդապետութիւնը լոյս է: Լոյսը կը լուսաւորէ և խաւարը զայն չի կրնար ծածկել: Անկարելի է անոր հակառակիլ, անկարելի է զայն չընդունիլ: Պէտք է շուտով տեղի տալ Յիսուսի վարդապետութեան, որ մարդոց բոլոր սխալները կը

մատնանշէ և առանց իյնալու այդ սխալներուն մէջ, ամէնուն կը թափանցէ, ինչպէս որ բնագէտներու մատնանշած եթերը կը շրջապատէ երկիրը:

92.— Յիսուսի քարոզած « թագաւորութիւնը » Յովհաննէսի քարոզածն է: Անոր նպատակն է որ բոլոր մարդիկ, որչափ ալ աղքատ ըլլան, կարենան երջանիկ ապրիլ: Այս « Աստուծոյ թագաւորութիւնը » չի գտնուիր արտաքին աշխարհի մէջ, այլ՝ մարդուն հոգւոյն մէջ: Փարիսեցիները Յովհաննէսի եկան և մըտիկ ըրին, բայց զայն չհասկցան, որովհետեւ Աստուած արտաքին երևոյթ ունեցող էակի մը ձեւով կ'ըմբռնէին: Իրենց երեւակայութեան մէջ գտնուած ահա ա'յս Աստուածն էր որ անոնք կը քարոզէին: Յովհաննէս, ընդհակառակը, քարոզեց ճշմարիտ թագաւորութիւնն այն Աստուծոյ, որ մարդուն սրտին մէջ կը բնակի, և այսպէսով անիկա միւսներէն աւելի արդիւնք առաջ բերաւ:

93.— Յիսուսի վարդապետութեան համաձայն « իր կեանքը փրկիլ » խօսքը հասկնալու համար, պէտք է նախապէս հասկնալ ինչ որ ըսած են մարդուն անձնական կեանքի մասին մարգարէները, Սողոմոն, Պուտտա և աշխարհի բոլոր խմաստուները: Բասգալի բացատրութեան համաձայն, մարդ կրնայ ատոր վրայ չխորհիլ և ի: առջեւ կրել վահան մը, որ մեզմէ ծածկէ մահուան անդունդը, ուր ամէնքս կը գիմենք: Սակայն մարդուն այդ անձնական կեանքի մեկուսացումին վրայ կը թաւէ անդրադառնալ համոզուելու համար թէ այդ կեանքը ո՛րքան ատեն որ անձնական է, ո՛չ միայն իւրաքանչիւրին համար զատ զատ ամենադոյզն

նշանակութիւն մը չունի, այլ և անդուծ ծաղր մըն է որպիսի ու բանականութեան համար:

94.— Ձեմ ընդունիր անհասկանալի Երրորդութիւն մը և առաջին մարդուն անկման առասպելը՝ անտեղի մեր ժամանակի համար: Ձեմ ընդունիր մարդկութիւնը փրկելու համ որ կոյտէ մը ծնած Աստուծոյ մը սրբապիղծ պատմութիւնը: Կ'ուրանամ այս ամէներ, սակայն չեմ ուրանար Բանն Աստուած, Սէրն Աստուած, ամէն բանի սկզբնապատճառ միակ Աստուածը: Թո՛ղ զայս, անոր մէջ միայն կը ճանչնամ իրական կեանքը և անոր կամքին կատարումին մէջ կը տեսնեմ կեանքին նշանակութիւնը:

95.— Յասկոռքիւն ըստւածը, իր այլարանական արժէքէն մերկացուած, ճիշդ է, որովհետև անիկա չէ երբէք ուսումնասիրութիւնն ու ջանքը այս կամ այն մարդուն և կամ բազմաթիւ մարդոց, որոնք զիսակցորքեան տէր կը գարձնեն: Հակառակը, անոր տէրը դասնայու ժամանակ մարդոց գերը կը կայանայ միայն ընդունելուն մէջ արտայայտումը այն անուն իմացականութեան որ հեղզեակէ կը յայտնուի իրենց: Ահա այդ արտայայտումն է որ Յայսկոռքիւն կը կոչուի աստուածարանութեան մէջ:

96.— Եթէ հանգերձեալ կեանքի մը ըմբռնումը չբաժնուի « վերջին Գատաստան » ի, սատանաներով լեցուն դժոխքի մը գաղափարէն, ուր գատապարարւածներ յաւիտենական չարչարարքի կ'ենթարկուին, և արքայութեան մը գաղափարէն, ուր ընտրեալները յարատեւ երանութիւն կը վայելեն, այգպիսի անդե-

Նական կեանքի մը չեմ կրնար հաւատալ: Բայց կը հաւատամ յաւիտենական կեանքին, կը հաւատամ որ մարդ իր գործերուն համեմատ կը վարձատրուի հոռու ամէն տեղ, այժմ և միշտ:

97.— Ռուս եկեղեցին, հակառակ իր նուիրական հանգամանքի նորութեան ու նրբութեան վեր ի վերոյ շարին, զոր իր անդամները կը սկսին այսօր տալ անոր իրենց գործերով՝ կրօնական ուսումնաթերթ ու քարոզներ՝ նպատակ ունի միայն ժողովուրդը պահել վայրենի և կոշտ կռապաշտութեան մը մէջ, տարածել աւելորդապաշտութիւնն ու տգիտութիւնը նսեմելով աւետարանական վարդապետութեան միտքը, որ ժողովուրդին մէջ աւելորդապաշտութեան մօտ կը գտնուի:

98.— Կը յիշեմ, որ մը Օրթին գրատունը կը գլխաւորէի, երբ կրօնական գրքերէ բան չհասկցող ծեր մուժիք մը կ'ուզէր իր որդւոյն համար գիրք մ'ընտրել: Արեղայ մը անոր յանձնարարեց Սրբոց Նշխարներու տօներու, պատկերներու երեւումին պատմութիւնը, Սաղմոսը և շնորհակցի ծեր մարդուն թէ աւետարան մը ունէ՞ր: — Ո՛չ, պատասխանեց: Ուրեմն ուստերէն աւետարան մը տուէ՛ք անոր, ըսի արեղային: — Յարմար չէ անոնց, պատասխան տուաւ ինձ:

Ահաւասիկ ռուս եկեղեցւոյն ամբողջ գործը քանի մը բառերու մէջ:

Սակայն այդ դէպքը տեղի կ'ունենայ միայն բարբարոս Ռուսիոյ մէջ, պիտի առարկէ եւրոպացի կամ ամերիկացի ընթերցող մը: Եւ այս կարծիքը ճիշդ պիտի ըլլայ, ցորչափ աչքի առջեւ ունենայ կառավարութիւն:

մը, որ կ'օգնէ եկեղեցւոյն՝ կատարելու Ռուսիոյ մէջ իր անբարոյացնող և անբանացնող պաշտօնը:

99. — Ես ուրացայ Օրթոտօքս ըսուած Եկեղեցին, բայց չեմ ուրացած Եկեղեցին, որովհետև Տէրոջ դէմ ընդմիկած պիտի ըլլայի: Զա՛յն ուրացայ, ընդհակառակը, որովհետև ուղեցի հօգևոյս բոլոր ուժերով՝ Աստուծոյ ծառայել: Եկեղեցւոյն ճշմարտութեան մասին մի քանի տարակոյսներ ունեցած ըլլալուս՝ երկար տարիներ պարտք սեպեցի նուիրուիլ անոր պատուէրներուն տեսական ու գործնական ուսման, զայն ուրանալէ և խզուելէ առաջ ժողովուրդէ մը, որուն զիս կը կապէր անպատում սէր մը: Մէկ կողմէ ջանացած եմ կարգալ ինչ որ կը վերաբերի այդ պատուէրներուն, հետևած եմ վարդապետական աստուածաբանութեան քննադատական ուսման և քննութեան, միւս կողմէ խղճմտօրէն համակերպած եմ, տարիէ մը աւելի, Եկեղեցւոյն բոլոր պատուէրներուն պահելով բոլոր պահքերը, ներկայ գտնուելով բոլոր ժամերգութիւններուն: Եւ համոզուեցայ որ Եկեղեցւոյն պատուէրները տեսականօրէն նենգաւոր ու վնասակար ստութիւններ են, գործնականօրէն՝ կոշտ աւելորդապատուութիւններու և վհուկութիւններու խառնուրդ մը, որուն մէջ բացարձակապէս կը կորսուի քրիստոնէական վարդապետութեան նշանակութիւնը: Ահա այն ատեն իրաւամբ մերժեցի Եկեղեցին:

100. — Մարդիկ էին որ Եկեղեցիէն անկախ՝ շնչեցին Եկեղեցիէն իհաստատուած գերութիւնը, Եկեղեցիէն նուիրագործուած կայսրերուն և պապերու իշխանութիւնը, հիմա իրենք են որ Եկեղեցիէն անկախ՝

սեփականութեան և Տէրութեան շնչումի գործին ձեռնամուխ կ'ըլլան:

101. — Կը հաւատամ Աստուծոյ, որ ըստ իս Միաքը, Սէրը, ամէն բանի սկզբնապատճառն է, կը հաւատամ որ Ան' իմ մէջս է, ինչպէս որ ես Անոր մէջն եմ: Կը հաւատամ որ Աստուծոյ կամքը երբէք չբացատրուեցաւ՝ աւելի յստակ, աւելի որոշ քան վարդապետութեանը մէջ ա'յն մարդուն որ կ'անուանուի Յիսուս: Սակայն չենք կրնար Յիսուս Աստուած համարել և անոր ուղղել մեր աղօթքները առանց գործելու ամենամեծ սրբապղծութիւնը: Կը հաւատամ որ մարդուն ճշմարիտ երջանկութիւնը կը գտնուի իր նմանները սիրելուն մէջ: Կը հաւատամ որ սիրոյ տարածումը պիտի նպաստէ ուրիշ ամեն ուժէ աւելի՝ երկրի վրայ հաստատելու Աստուծոյ թագաւորութիւնը, այսինքն, փոխանակելու կեանքի այս կազմը՝ ուր բաժանումը, ստութիւնը, բռնութիւնը, ամէնէն զօրաւորներն են, նոր կարգով մը, ուր տիրեն միաբանութիւնը, ճշմարտութիւնը և եղբայրութիւնը: Կը հաւատամ որ սիրոյ մէջ յառաջգիմելու միայն մէկ միջոց ունինք, այն է աղօթքը: Բայց ո՛չ թէ հասարակաց աղօթքը, տաճարներու մէջ, այլ առանձնակի աղօթքը, որ կը կայանայ վերահաստատելու, ամրացնելու մէջ մեր ներսիդին՝ մեր կեանքի նշանակութեան գիտակցութիւնը:

Գ.

ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ

102.— Հրամաններ տուող և ընդունող մարդոց միջև գտնուած յարաբերութիւնը կը կազմէ էութիւնը այն գաղափարին, զոր իշխանութիւն կ'անուանենք:

103.— Առանց մէկու մը բարձրացման և ուրիշի մը խոնարհման, առանց կեղծաւորութեան ու խարդախութեան, առանց բանտերու, բերդերու, գլխատումներու, սպաննութիւններու չի կրնար ծնիլ, ոչ ալ հաստատ կենալ ու է իշխանութիւն:

104.— Ահարեկումը, եզծումը, քնածումը զինուորներ կը պատրաստեն. զինուորները իշխանութիւն առաջ կը բերեն. իշխանութիւնը գրամ կը հայթայթէ, որով կը գնեն պաշտօնատարներ և կը ժողվեն զօրք:

105.— Մարդկութեան մէն մի յառաջգիմական քայլ փոխանակ քաջալերուելու արգիլուած է կառավարութիւններու կողմէ: Ահա այս է պատահածը մարմնական ցաւերու, տանջանքի, տնտեսական ու ընկերային դերութեան բարձումի ատեն: Ո՛չ միայն կառավարութիւնները չեն օգներ, այլ հակառակը դէմ կը կենան այն ամէն շարժման, որ պիտի յանգի կեանքի նոր ձևերու:

106.— Իշխանութեան տէր մարդիկ երբէք ճիգ չեն ընէր յայտնելու թէ ի՛նչ որ իբր շարիք կը նկատեն՝ իրաւամբ չարիք է: Այն որ շարիք կը սեպեն իրենց

հաճոյ չեղածն է: Եւ իշխանութեան հպատակ մարդիկ կ'ընդունին այս սահմանումը, ո՛չ թէ զայն արդարացի գտած ըլլալուն համար, այլ որովհետեւ ուրիշ կերպ չեն կրնար ընել: Ո՛չ թէ մարդոց անհրաժեշտ ու օգտակար բարիք մը և հակառակ կերպը չարիք մ'ըլլալուն՝ այլ որովհետեւ իշխանութեան տէր եղողները այնպէս կ'ուզեն որ Նիս կցուած ըլլայ Գողգոթոյ, Ալզաս-Ղոսէնը՝ Գերմանիոյ, Պոհեմբան՝ Աւստրիոյ և Բուրսիան բաժնուած ըլլայ, Իրլանտան ու Հնդկաստանը վերաբերին Անգլիոյ, Չինու դէմ պատերազմ ըլլայ, Ափրիկեցիք սպաննուին, Ամերիկացիք արտաքսեն Չինացիները, Ռուսներ հարստահարեն Հրեաները, ազարակատէրեր գրաւեն իրենց չմշակած հողերը և դրամատէրեր՝ ուրիշներու աշխատութեան արգիւնքը:

Եւ կը յանգինք սա՛ իրողութեան թէ ոմանք բըռնութիւն ի գործ կը դնեն ո՛չ թէ չարիքն արգիւնելու հպատակաւ, այլ իրենց շահուն կամ քմահաճոյքին համար, և ոմանք կ'ենթարկուին բռնութեան ո՛չ թէ ատու իրենք զիրենք չարիքին դէմ պաշտպանելու միջոց մը գտած ըլլալուն, այլ որովհետեւ չեն կրնար անկէ խուսափիլ:

107. — Բոլոր կառավարութիւններուն պէս, Ռուս կառավարութիւնն ալ կ'առարկէ որ եթէ իր իշխանութիւնը չըլլար, չարագործները բռնութիւն պիտի բանեցնէին բարիներուն վրայ: Այս փաստը ծիծաղաշարժ է: Ռուս կառավարութիւնը դարերէ ի վեր կը հարստահարէ իր հպատակները՝ Բոլոնիացիները, Հըրեաները, Պալթիկեան գաւառներու Գերմանացիները, Փոքր Ռուսիացիները, Մուժիքները, ամէնքն ալ: Եւ ահա յանկարծ հարստահարիչներուն դէմ հարստահար-

եալներուն պաշտպան կը դառնայ, ճիշդ այն հարբստահ սրեալներուն, զորս նոյնիսկ ի՛նք կը հարստահարէ:

108.— Անոնք որ կարելի կը կարծեն բռնի ազատագրուիլ կա՛մ նոյնիսկ իրենց կացութիւնը բարւոքել կառավարութիւն մը տապալելով՝ հիմնելու համար ուրիշ մը, որ ալ բռնութեան պէտք չը զգայ, բոլորովին կը սխալին, և այդ նպատակաւ թափուած բոլոր ջանքերը հետի՛ կացութիւնը բարւոքելէ՝ զայն ծանրացնելու կը ծառայեն: Անոնց ջանքերը կառավարութեան պատրուակ մը կը ստեղծեն աւելցնելու համար իր իշխանութիւնն ու տիրապետութիւնը:

Նոյնիսկ ընդունելով որ կառավարութիւնն իր ունեցած մասնաւորապէս աննպաստ պարագաներուն հետեւանքով տապալուած ըլլայ բռնի, ինչպէս որ 1870 ին տեղի ունեցաւ Գաղղիոյ մէջ, և իշխանութիւնն ուրիշներու ձեռք անցնի, այս իշխանութիւնը նուազ հարստահարիչ պիտի չկրնար ըլլալ, որովհետեւ իր զրկուած ու զայրացած թշնամիներուն դէմ ինքզինք պաշտպանելու պէտք զգալով հինէն աւելի տիրապետական և անպութ ըլլալ պիտի ստիպուէր: Կեղափոխական բոլոր շրջաններու միջոցին այս բանը հաստատուած է:

109.— Չինաստանի մէջ մանտարիներութիւն ստանալու համար եղած քննութիւնները չեն երաշխաւորեր որ, մենք փորձով գիտենք, իշխանութիւնը յանձնուի ամէնէն լաւ և ամէնէն ողջամիտ մարդոց: Եւրոպայի մէջ ժառանգականութիւնը, պաշտօնատարներու յառաջացման համար փնտռուած պայմանները, ընտրութիւնները մեզի բնաւ ապահովութիւն չեն ներշնչեր:

Արդարեւ կը պատահի որ միշտ իշխանութեան գլուխ անցնին ամէնէն քիչ խղճամիտ և բարոյականութեան ամենէն աւելի զուրկ մարդիկ:

110. — Շատ ազգեր երեւակայեալ սահմանադրութիւններ ընդունեցին մարդոց հաւատացնելու համար թէ իրենց անձնական կամքը կ'որոշէ իրենց երկրին օրէնքները: Բայց ամէն մարդ գիտէ որ բոլոր երկիրներու մէջ՝ բռնապետէ մը կառավարուի թէ ազատ համարուի, ինչպէս Անգլիան, Գաղղիան, Ամերիկան՝ օրէնքը ազգային կամքէն չի բղխիր, այլ իշխանութեան տէր մարդոց բարեհաճութեան և թէ ամէն տեղ ու միշտ պէտք է որ կառավարողներու շահերը շօշափէ, ինչ որ ալ ըլլայ անոնց քանակը: Նոյնպէս, ամէն տեղ ու միշտ օրէնքը գործադրել տալու համար կը գործածուին այն միջոցները, զորս գործածել սովորած են մարդիկ երենց կամքին տիրապետութեանը համար, այսինքն, կուս բանտարկութիւն, սպաննութիւն:

111. — Բոլոր կառավարութիւնները միշտ պարտքի տակ մնացած են ու պիտի մնան միշտ: Ուրիշ կերպ չեն կրնար ըլլալ: Ամէն պարագայի տակ ստիպուած են շարժիլ թիւ. դարու պաշտօնակալի մը առակախաղին համաձայն թէ մօտ ժիքին բուրգը խուզել պէտք է և ժամանակ չթողուլ որ նորէն բուսնի: Բոլոր կառավարութիւններն ունին կատարեալ հաշուական բաց մը և այս բացը սոսկալի համեմատութիւններով տարուէ տարի կը մեծնայ: Նոյնպէս բացերուն ուղիղ համեմատութեամբ պիւտճէները կ'աւելնան: Հարստահարեալներու հետ պայքարի մտնելու և բռնութեան ծառայողներու գրամական պարզեւներ բաշխելու բացար-

ձակ պէտքը կը բարձրացնէ կալուածական տուրքը :
 Եւ եթէ թոշակը նոյն համեմատութեամբ չ'աւելնար,
 պատճառը դրամի պակասութիւնը չէ, այլ բռնադատ-
 ուած տուրքեր կան՝ գանձային ու կալուածական՝ որոնք
 նպատակ ունին անհատներէն առնել անոնց բոլոր ա-
 ւելորդը և այսպէս զանոնք ստիպել ծախելու իրենց
 աշխատութիւնը, այս աշխատութեան շահագործուիմ-
 քը լալով տուրքին նպատակը :

112. — Ռուսիոյ մէջ ազգէն կ'առնեն իր եկամու-
 տին մէկ երրորդը, սակայն ամէնէն կարելոր պէտքին՝
 հասարակաց կրթութեան՝ կը գործածեն տուրքին ամ-
 րոզ զուամարին $\frac{1}{50}$ ք միայն, և թէ ժողովուրդին
 տրուած կրթութիւնը անհեթեթ է ու շատ աւելի
 վնասակար քան արդիւնաբեր : Ազգային հասոյթին
 $\frac{40}{50}$ ք երկրին չարիքին կը յատկացուի, զինուորական
 սպառազինութեան, փարոցներու և բանտերու շինու-
 թեան, կղերի, պալատի, սպաներու և պաշտօնատար-
 ներու ծախսոց, այսինքն, բարեկեցութեանը բոլոր
 այն մարդոց, որոնք պաշտօն ունին ազգեցութիւն
 բանեցնելու կամ այս ահագին գումարներու գանձումը
 ապահովելու :

Բոլոր երկիրներու մէջ ալ միևնոյնն է, առանց
 գուրս ձգելու անոնք որ կազմաւորուած են հանրա-
 վարական հասարակապետութեամբ : Ամէն տեղ կառա-
 վարութիւնները ժողովուրդէն կ'առնեն ինչ որ կրնայ
 տալ, առանց կռուելու ընկերութեան պէտքերու հա-
 մար անոր ունեցած պահանջը : Այս կողմապալին հա-
 մար չէ՛ որ իրենց հարստահարած ազգերու հաճու-
 թիւնը ստացած են, վասնզի խորհրդարանի քուէն
 պիտի չառնուէր երբէք ժողովրդեան կամքի ճնշումին
 համար :

113.— Յաղթանակոց կուսակցութիւնը ո՛րն ալ ըլլայ, իրերու նոր կարգ մը հաստատելու և իշխանութիւնը պահպանելու համար պէտք ունի ո՛չ միայն արդէն ծանօթ բռնութեան միջոցներու, այլ նորեր հնարելու: Հարստահարիչներն այլ ևս միեւնոյնը չեն, հարստահարութիւնը նոր ձեւեր առնելու է, սակայն հեռի՝ անհետանալէ, աւելի անգութ պէտք է ըլլայ, որովհետեւ պայքարը մարդոց մէջ պիտի աւելցնէ ատելութիւնը:

114.— Աւելի դիւրին է օրէնքներ պատրաստել, քան թէ կառավարել:

115.— Ո՛չ թէ արտաքին ուժի միջոցաւ, այլ անհատական գիտակցութեամբ իւրաքանչիւրի համար պարտաւորիչ և ինքնին բանաւոր օրէնքի մը գաղափարն ա՛յն աստիճան անհասկանալի է մեր ընկերութեան մէջ որ երբայեցուց մէջ օրէնքի մը գոյութիւնը. որ ամբողջ կեանք մը կ'ուղղավարէր, որ պարտաւորիչ չէր, որովհետեւ ո՛չ թէ ուժի, ա՛յլ իւրաքանչիւրին գիտակցութեան վրայ կը յիմուր, երբայական ժողովուրդին բացառիկ մէկ առանձնայատկութիւնը կը համարուի:

116.— Հարցուցէ՛ք մեր ժամանակի մարդոց, հաւատացեալ կամ սկեպտիկ, թէ ո՛րն է այն վարդապետութիւնը, որու կը հետեւին իրենց կեանքի միջոցին: Պիտի ստիպուին խոստովանիլ թէ միայն մէկ վարդապետութեան կը հետեւին, անո՛ր որ առաջ կուգայ այն օրէնքներէն, որոնք կը խմբագրուին այդ աշխատութեան յատկացուած պաշտօնեաներու կ'ամ օրէնադիր ժողովներու կողմէ և գործադրութեան կը դրուին ու-

տիկանութեան միջոցաւ: — Մեզմէ՛ Եւրոպացիներէս՝ ճանչուած միակ վարդապետութիւնը ասիկա է: — Գիտեն որ այս վարդապետութիւնը վերէն չի գար, ո՛չ մարգարէներէն, ո՛չ իմաստուններէն, շարունակ կը սրարուեն այս պաշտօնեաներու կա՛մ օրէնսդիր ժողովներու կողմէ խմբագրուած կանոնագիծը, սա- կիայն և այնպէս զայն կ'ընդունին ու կը հնազանդին ստիկանութեան, որ պաշտօն ստանձնած է զայն զոր- ծագութեան զնեւու: Անմրմունջ կը համակերպին և ամէնէն սոսկալի պահանջներու տեղի կուտան: Այս պաշտօնեաներն ու ժողովները կ'որոշին որ ամէն երի- տասարդ պէտք է պատրաստ ըլլայ զէնք առնելու, մեռնելու և ուրիշները մեռցնելու: Բոլոր հայերն ու մայրերը, որոնք չափահաս որդիներ ունին, կը հնազան- ղին այս օրէնքին, որ նախընթաց իրիկունը վարձկան պաշտօնեայէ մը դրուած և հետեւեալ օրը յետսկոչելի է:

117. — Իշխանութեան ու գիտութեան տէր մար- ղիկ իրենց որոշած նպատակին հասնելէ վերջ կը ճանչ- նան յաճախ անոր ունայնութիւնը և կը վերագառնան այն դիրքին ուրիշ մեկնած են: Կարուս Ե., Իվան Ահարեկիչ, Աղեքսանդր Ա. ճանչցած ըլլալով իշխա- նութեան ունայնութիւնն ու դաժանութիւնը լքած են զայն, որովհետեւ իրենք զիրենք անկարող զգա- ցած են աւելի երկար ժամանակ բռնութեամբ հեշ- տանալ:

Սակայն լսկ Կարուս Հինգերորդներն ու Աղեք- սանդր Առաջինները չե՛ն որ իշխանութենէն այս զըզ- ուանքը զգացած են. ամէն մարդ իր փափաքած ազ- դեցութիւնը ձեռք ձգելէ վերջ, ամէն նախարար, զօ- ղապետ, միլիտանտէր, նոյնիսկ դահլճապետ՝ որ տաս-

նեակ տարի մը իր պաշտօնին թեկնածուն եղած է, ամէն հարստացած մուծիք կը կրէ միւսնոյն խարկանքը և լաւագունին կը ձգտի:

118.— Ժողովրդոց կեանքը չի խտանար քանի մը անհատներու կեանքին մէջ, որովհետեւ այս մի քանի մարդիկը ժողովուրդին միացնող կապը յայտնի չի կրնար ըլլալ: Այն տեսութիւնը, որ ապացուցած կը համարի թէ այս կապը մի քանի պատմական անձերէ բաղկացած բազմութեան մը կամքերու ամբողջութեան փոխանցումին վրայ հիմնուած է, վարկած մըն է, զոր չեն հաստատեր պատմական իրողութիւններ: Ժողովրդեան կամքերու փոխանցումի գործը ստուգուած չի կրնար ըլլալ:

119.— Որչափ որ զրեն կեսար, Ադիքսանդր, Լուսեր կամ վոլտեր ըսուած երեւելի անձերու պատմութիւնը, և ո՛չ թէ ամէնունը՝ բոլոր մարդոցը՝ որոնք դէպքերու մասնակցած են, առանց զանց ընելու անոնցմէ մին, անկարելի է չվերագրել այդ անձերու այն ուժը, որ կը ստիպէ միւս մարդիկը ուղղավարելու իրենց գործունէութիւնը դէպի հասարակաց նպատակ մը: Պատմագիրներ լոկ մէկ ձեւի տակ կ'ըմբռնեն այդ ուժը, այն է իշխանութեան ձեւը:

120.— Քաղաքակրթութեան պատմութիւնը մեզի ցոյց կուտայ գոյութեան պայմաններն ու հեղինակի մը կամ բարենորոգչի մը մտածումները: Ան մեզի կը սորվեցնէ թէ Լուսեր զայրագին ընաւորութիւն մը ունէր, թէ Ռուսօ կասկածոտ էր, ըսոյց չի բացատրեր:

թէ ինչու համար բարենորոգումէ վերջ մարդիկ զիրար փողոտեցին, ո՛չ ալ թէ ին՛չ պատճառաւ Գաղղիացիք, մեծ Յեզափոխութեան միջոցին, մէկգմէկ փոխադարձաբար կիշիւթինի գիրկը նետեցին: Պատմաագիրներ միապեաներու կամ հեղինակներու կենսագրութիւնները կուտան մեզ, ո՛չ թէ ժողովրդոց կեանքի պատմութիւնը:

121.— Եթէ ատենօք ըսած են մարդուն թէ առանց տէրութեան ին՛ք չարագործներու, արտաքին կամ ներքին թշնամիներու յարձակմանց պիտի ենթարկուէր թէ առանձինն ինքզինք ամէնուն դէմ պաշտպանելու պիտի հարկադրուէր, թէ իր կեանքը սպառնալիքի տակ պիտի գտնուէր, թէ հետեւաբար իրեն նպատաւոր պիտի ըլլար այս դժբախտութիւններէն ազատելու համար յանձնառու ըլլալ մի քանի գրկանքներու, մարդը՝ հաւատացած էր, վասնզի Տէրութեան համար ընելիք զո՛ոգութիւնը իրեն խաղաղ կեանքի մը յոյսը տուած էր իրերու այնպիսի կարգաւորութեամբ մը որ վերջ պիտի չը գտնէր: Սակայն այսօր, երբ իր զոհոգութիւնները տասնապատկուած են, երբ իր յուսացած առաւելութիւնները անհետացած են, բնական է որ մարդ ինքն իրեն հարցնէ թէ բացարձակապէս անօգուտ չէ՞ Տէրութեան հանդէս ունեցած իր հպատակութիւնը:

122.— Անշուշտ մեր ժամանակի մարդուն զըժուար է ո՛ր է է եղանակաւ չմտնակցիլ կառավարութեանց բռնութեան: Ամէն մարդ զինուորական ծառայութիւնը մերժելու ուժը չունի, բայց ամէն մարդ կրնայ չընտրել բանակի, ոստիկանութեան, ատենա-

կալու թեան կամ ելեւմտագլտութեան ասպարէզները և կրնայ առատորէն վարձատրուող հասարակաց պաշտօնի մը տեղ ընտրել անկախ ու նուազ շահաբեր արհեստ մը: Ամէն մարդ չի կրնար թողուլ տիրացած դրամագլուխը և մերժել կալուածատիրութեան իրաւունքները, զորս բռնութիւնը անոր կ'ապահովէ մի քանի պատճառներով, սակայն ամէն մարդ կրնայ պակսեցնել իր պէտքերը և քիչ քիչ տալ իր անձին այն վայելքները, որոնք ուրիշ մարդոց նախանձը չարժեն:

123.— Եթէ մարդոց մեծագոյն մասը յանձնառու կ'ըլլայ հպատակութեան, ասիկա ո՛չ թէ տտով առաջ գալիք բարիքին կամ չարիքի մասին եզած հասուն դատողութեան արդիւնք է, այլ որովհետեւ, ինչպէս կ'ըսեն, քնածութեան հնթարկուած է: Հնազանդելով մարդիկ պարզապէս կը հպատակին իրենց տրուած հրամաններուն առանց մտածելու և առանց կամքի ճիգ մ'ընելու: Չհնազանդելու համար անկախորէն պէտք է մտածել և ասիկա ճիգ մըն է, զոր ամէն մարդ ընելու կարող չէ: Բայց եթէ մէկ կողմ թողունք հպատակութեան կամ տպտամբութեան բարոյական նշանակութիւնը և միայն անոնց նիւթական առաւելութիւնները կը ռազատենք, պիտի տեսնուի որ ապրտամբութիւնը ընդհանրապէս՝ հպատակութենէն աւելի շահաւոր է:

124.— Կառաւարութեանց և իրենց հակամարտներու աճեցուն զեղծումներուն պատճառաւ պատահած է որ հպատակներէն պահանջուին ո՛չ միայն նիւթական այլ և բարոյական զոհողութիւններ: Իւրա-

քանչիւր ոք ինքն իրեն կը հարցնէ, «կրնամ հնազանդիլ յանուն որո՞ւ պարտիմ զո՞հողութիւններ ընել — Այս զո՞հողութիւնները կը պահանջուին յանուն Տէրութեան: Այդ անունով կը պահանջուի զո՞հել ին՛չ որ մարդու մը սիրելի կրնայ ըլլալ՝ երջանկութիւն, բնտանիք, ապահովութիւն, մարդկային արժանապատուութիւն:— Բայց ի՞նչ է այդ Տէրութիւն ըսուածը, որ այնչափ գարնուրելի զո՞հողութիւններ կը պահանջէ, ին՛չ բանի մէջ կարեւոր է մեզի:»

125.— Երկուքէն մէկը՝ մարդիկ կա՛մ բանական արարածներ են և կամ չեն: Եթէ չեն բանական, պէտք չկայ անոնց միջեւ տարբերութիւն դնելու բանականութեան կողմէ, ամէն ինչ բռնութեամբ պիտի կարգադրուի առանց գտնուելու ու է շարժառիթ վերադրելու համար մէկուն կամ միւսին բացառիկ իրաւունք բռնութիւն ի գործ դնելու: Եւ ասիկա կառավարութեանց դատապարտութիւնն է: Եթէ մարդիկ բանական են, անոնց յարարերութիւնները հիմնուելու են բանականութեան վրայ, ո՛չ թէ բռնութեանը վրայ անոնց, որոնք պատահաբար իշխանութեան գլուխ անցած են: Ասիկա ևս կառավարութեանց դատապարտութիւնն է:

126.— Ին՞չ օգուտ թագուորներ, կայսրեր, նախագահներ, ամէն տեսակ խորհրդարանի անդամներ և նախարարներ սնուցանելէ և պահելէ, երբ անոնց բոլոր հաւաքումներէն ու ճառերէն արդիւնք մը առաջ չի գար: Աւելի լաւ չըլլա՞ր ձգախէժէ թագուոր մը շինել, ինչպէս ըսած է զուարճախօս մը:

127. — Կառավարութիւնները տաքալելու համար միայն մէկ միջոց ունինք, այն է պաշտօնական ստութիւնը մատնանլիւ ընել մարդոց: Պէտք է անոնց հակըցնել թէ քրիստոնեայ աշխարհի մէջ ժողովուրդը ո՛նէ պէտք չունի մէկզմէկու դէմ իրր պահապան կենալու, թէ ժողովրդոց միջեւ ատելութիւն դրգռողը նոյնիսկ ին՛ք կառավարութիւնն է, թէ դէնքերն օգտակար են այն կարգ մը մարդոց. որոնք կը կառավարեն, իսկ անօգուտ կամ նոյնիսկ վնասակար՝ ժողովրդեան, որուն ստրկութիւնը կը դիւրացնեն:

128. — Ժամանակին՝ երբ գերութիւնը ջատագովող իմաստակութիւնն անհետացաւ, հասարակաց կարծիքն այդ մասին փոխուեցաւ: Այսօր ալ բաւական պիտի ըլլայ իշխանութիւնն ու դրամը ջատագովող իմաստակութեան անհետացումը, և հասարակաց կարծիքը պիտի փոխուի գովելի և ամօթալի համարուածի մասին ու կեանքն ինքնին պիտի փոխուի:

Իշխանութիւնն ու դրամը ջատագովող իմաստակութեան անհետացումը և այս մասին հասարակաց կարծիքի փոփոխումը արդէն արշաւակի առաջ կը սուրան: Կը բաւէ ուշադրութեամբ դիտել յստակօրէն տեսնելու համար թէ այս փոփոխութիւնը կը կատարուի:

129. — Արխայակսն նոր հագուստը անուն մանրավէպին մէջ, Անտերսըն նոր զգեստներու շատ սիրահար թագաւոր մը կը ներկայացնէ, որու արտաքոյ կարգի հագուստ մը կը խոստանան գերձակներ, հագուստ մը, որուն կերպասը սա՛ մտանաւոր յատկութիւնն ունի որ իրենց վարած պաշտօնին անյարմար եղող մարդոցմէ չի տեսնուիր: Պալատականները, ու

բոնք գերձակներու աշխատութիւնը դիտելու կուգան, բան մը չեն տեսներ, որովհետեւ այնպէս կ'երևուի որ գերձակները պարապութեան մէջէն կը հրեն իրենց ասեղները: Սակայն այս կերպասին յատկութիւնը յիշելով ամէնքն ալ կ'ըսեն թէ կը տեսնեն զայն ու կը սքանչանան անոր գեղեցկութեանը վրայ: Թագաւորին ալ նոյնը կը պատահի: Կը հասնի թափօր կազմելու վայրկեանը, երբ անկիս իր նոր հագուստով պիտի երևար: Կը հանէ իր հին հագուստը, և կը հագնի երևակայական հագուստը, այսինքն, բոլորովին մերկ կը մնայ և այնպէս կը շրջագայի փողոցին մէջ: Սակայն կերպասին յատկութիւնը դիտնալնուն ոչ ոք որոշում մը կուտայ բռնել թէ թագաւորը հագուստ չունի, միայն փոքրիկ ազայ մը կը գոչէ. «Տեսէ՛ք՝ մերկ է բոլորովին»:

Միևնոյն բանը պէտք է պատահի ամէն անոնց, որոնք հեղգօրէն գրագած են երկար ժամանակէ ի վեր անօգուտ դարձած գիրքեր, մինչև որ մէկը միամբրօրէն բացագանչէ, «Բայց երկար ատենէ ի վեր այս մարդիկը ո՛չ մէկ բանի օգուտ ունին»:

130.— Թո՛ղ ազատամիտ մարդիկ չվատահին օրէնքի մը, որ ո՛չ զօրաւոր և ոչ ազատ է, այսինքն, արտաքին զօրութեան, ա՛յլ հաւատ թող ընծայեն ազատ ու զօրաւոր օրէնքի մը, այսինքն, ինքնայայտ ճշմարտութեան: Թո՛ղ համարձակօրէն ու յայտնապէս խոտտովանին ճշմարտութիւնը, որ ինքզինք կը յայտնէ բոլոր ժողովրդոց եղբայրութեամբը շահագրգռւողներու, և պիտի տեսնուի որ անկենդան կեղեւի պէս պիտի իյնայ հինցած ու ստայօգ հասարակաց կարծիքը, որ կառավարութեանց հեղինակութեան նե-

ցուկն է, և անոր հետ պիտի անհետանայ ամէն չարիք, զոր կառավարութիւններ կը պատճառեն:

Դ.

ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ

131. — Հայրենասիրութեան զգացումը ուրիշ բան է, եթէ ո՛չ այն նախընտրութիւնը, զոր իւրաքանչիւր ժողովուրդ կուտայ իր յատուկ երկրին զայն միւսներուն հետ բազմատեսչով: Այդ զգացումը կատարելապէս կը բացատրուի սա գերմանական երգին մէջ. «Գերմանիա՛, Գերմանիա՛. գեր ի վեր բոլոր երկիրներէն»: Փոխեցէ՛ք միայն Գերմանիա բառը տեղը ու և է երկրի անուն դնելով՝ պիտի ունենաք հայրենասիրութեան կատարեալ բանաձեւ մը: Կարելի է որ այդպիսի զգացում մը խիստ փափաքելի և օգտակար ըլլայ կառավարութեանց, ինչպէս նաև Տէրութեանց ամբողջութեան, միայն թէ շատ յիմարտական ու անբարոյական է: Յիմարտական է, որովհետև եթէ ամէն մէկ Տէրութիւն ինքզինք գրացի Տէրութիւններէն բարձր սկսէ, անոնցմէ ո՛չ մին ճշմարտութեան պիտի համակերպի: Անբարոյական է, որովհետև անխուսափելիօրէն կը մղէ անոնցմէ իւրաքանչիւրը որ իր կառավարութեան և իր քաղաքացիներուն համար ջանայ ձեռք ձգել ամէն տեսակ առաւելութիւններ ի վնաս դրացի Տէրութիւններու: Ա՛րդ, այս միտումը ուղղակի հակառակ է

քարոյականին, որ կըսէ. «Մի՛ ընե՛ր ուրիշին, ինչ որ պիտի չուզէիր որ ուրիշը քեզի ընէր:»

432.— Ինչ է Միացեալ Նահանգաց մէջ հաստատուած Իրլանտացիի մը հայրենասիրութիւնը, իր կրօնը, կը կապէ զինք Հոմմին, ծնունդը՝ Իրլանտայի, կառավարութիւնը՝ Միացեալ Նահանգաց: Այսպէս են Չեխերը Աւստրիոյ մէջ, Լեհացիները Ռուսիոյ, Բրուսիոյ և Աւստրիոյ մէջ, Հնդկիկները՝ Անգլիոյ մէջ, Թաթարներն ու Հայերը՝ Ռուսիոյ և Թուրքիոյ մէջ: Առանց խօսելու նոյնիսկ նուաճուած ժողովուրդներու մասին, կը հաստատեմ որ համացեղ ժողովուրդներ, ինչպէս՝ Ռուսներ, Գաղղիացիներ, Բրուսիացիներ, չեն կրնար կրել այն հայրենասիրական զգացումը, որ նախնեաց յատուկ էր, որովհետեւ շատ անգամ այս երկիրներու վերաբերեալ քաղաքացի մը իր ապրուստի գլխաւոր շահերը կը տեսնէ զրացի երկրին մէջ, իր բնտանեկան խնամքը՝ եթէ օտար կնոջ մը հետ ամուսնացած է, իր անտեսական օգուտը՝ եթէ օտար տեղ մը գրամազլուխներ ունի, իր գիտական ու արուեստական շահագրգռութիւնները՝ եթէ անոնց առարկաները գտնուին իր հայրենիքէն դուրս և նոյնիսկ այն երկրին մէջ գտնուին, որուն դէմ իր հայրենասիրական ապելութիւնը կը գրգռեն:

433.— Ժողովրդոց հայրենասիրական զգացումներու արտայայտութիւնը ամէն բանէ առաջ կառավարութեանց շինծու մէկ գործն է:

Գաղղիոյ մէջ հաւատար խանգավառութեամբ ընդունուած է Ռուսական արշաւանքին լուրը Նաբոլէոն Ա. ի օրով, յետոյ Աղեքսանդր Ա. ր, որուն գէմ տակա-

ւին նոր պատերազմ մղուած էր, յետոյ նորէն Նարո-
ւէտնը, յետոյ դարձեալ Դաշնակիցները, ապա Պուրպոն-
ները, Օրլէանները, Հասարակապետութիւնը, Նարո-
ւէտն Գ.ը և Պուլանժէրը:

Ռուսիոյ մէջ ճիշդ նոյն ձևով կ'ընդունուին այսօր
Պետրոսը, վազը կատարինէն, ապա Պօղոսը, Ալեք-
սանդրը, Կոստանդինը, Նիգուլան, Լիթէնպէրկի
գուքսը, Պալզոնեան Սլաւ եղբայրները, Բրուսիոյ թա-
գաւորը, Գաղղիացի նաւորդները և այն ամէնքը,
որոնց չքեղ ընդունելութիւն մը տալ կը փափաքին
իշխանութիւնները: Այսպէս է նաև Անգլիոյ, Ամերի-
կայի, Գերմանիոյ և Իտալիոյ մէջ:

134. — Հայրենասիրական աւելորդապաշտութիւնը
քաջալերուած է աշգային տօներով, թատերախաղե-
րով, յիշատակարաններով, հանդէսներով, որոնք մար-
դոց մէջ տրամադրութիւն մը առաջ կը բերեն
նախապատիւ համարելու միայն իր հայրենակիցները,
մեծ՝ իր Տէրութիւնն ու զայն կառավարողները, և ո-
րոնք կ'արթնցնեն անոր մէջ ուրիշ ժողովրդոց հան-
դէպ ատելութեան ոգին: Ասկէ զատ բռնակալ կառա-
ւարութիւններ կ'արգիլեն այն գրքերն ու ձառերը,
որոնք ժողովուրդը կը լուսաւորեն, և կը տարա-
գրուին կա՛մ կը բանտարկուին այն մարդիկ, որոնք
կրնան զայն իր թմրութիւնէն արթնցնել: Դարձեալ
առանց բացառութեան, բոլոր կառավարութիւններ
կը ծածկեն ժողովուրդէն ին՛չ որ կրնայ զայն ազա-
տագրել, և կը քաջալերեն ինչ որ կրնայ զայն ապակա-
նել, ինչպէս՝ տեսակ մը գրահանութիւն, որ ժողո-
ւուդը կը պահէ կրօնական ու հայրենասիրական
բարբարոս աւելորդապաշտութիւններու մէջ, ինչպէս

նաև անբանացումի նիւթական միջոցներ՝ ծխախոտ, ողելիք ըմպելիներ՝ սրանք Տէրութեան եկամուտներուն զլխաւոր աղբիւրներն են: Պոսնկութիւնն ալ քաջաշէրուած է, վասնզի ո՛չ միայն ընդհանրացած, այլ և կազմակերպուած է կառավարութեանց մեծազոյն մասին կողմէ:

135.— Մարդ գթոտ զգացումով մը կրնայ լսել այն ամենզոյն խօսքերը, զորս ակար ու անդէն ծեր յիմար մը կը գուրցէ գիշերանոց հազած և գտակ մը գրած՝ զլուխը: Մարդ նայնիսկ կրնայ անոր շքնդիմախօսել և իբր կատակ իրաւունք տալ անոր, սակայն երբ խնդիրը զօրեզ յիմարներու բազմութեան վրայ է փախած՝ իրենց խուցերէն և զինուած յտախց ցզլուխ դանակներով, դաշոյններով և շեցուած ատրճանակներով, զորս կը շողացնեն ըստ պատահման, այն ատեն ո՛չ միայն զանոնք իր վիճակից մէջ աղատ չի թողուր, այլ չի կրնար վայրկեան մը հանդարտ կենալ անոնց ներկայութեան: Այսպէս Ֆրանք-ուստական հանդէսներէ առաջ եկած խանդավառ վիճակի մը մէջ է որ կը գրանդին հիմա գաղղիական և օսուսական ընկերութիւններ: Արդ, այս անձեր, զորս հոգեյուզական (psychopathique) հանրախօսը վարակած է, ձեռքերուն մէջ ունին մահուան և աւերումի ամենասոսկալի գործիւնները:

Կարելի է ճանչնալ մտային հիւանդութեան տէր մարդոց խորամանկութիւնը, որ կը կայանայ «պատեյտողմ չինք ուղեր» խօսքին անդադար կրկնուելուն և ամէն մարդոց մտածածին վրայէն լուս անցնելուն մէջ: Հո՛ր է ամէնէն վրդովիչ երևոյթը:

136.— Աշխատասէր բնակչութիւն մը շափազանց
 քրաւուած է իր ապրուստն ապահովելու հոգով, որ
 կը խլէ անոր ամբողջ ուշադրութիւնը, և չի հետա-
 քըրքրուիր այն քաղաքական խնդիրներով, որոնք
 հայրենասիրութեան հիմը կը կազմեն՝ Արեւելքի մէջ
 Ռուսիոյ ազդեցութեան խնդիր, գերմանական միու-
 թեան խնդիր, քրաւուած գաւառներու գաղղիոյ վերա-
 դարձուելու խնդիր և ըն., որոնք չեն հետաքրքրեր ժո-
 ղովուրդը ո՛չ թէ միայն անոնց ծնունդ տուող պայ-
 մաններուն անգիտանալուն, այլ որովհետեւ իր կեան-
 քի շահագրգռութիւնները բոլորովին անկախ են քա-
 ղաքական շահերէ: Ժողովուրդի մարդ մը հոգ չ'ընենք
 գիտնալու համար թէ այսինչ սահմանագլուխը ուրկէ
 պիտի անցնի, կ. Պոլիսը որու՛ պիտի վերաբերի և ըն.,
 նոյն իսկ ի նպաստ այս կամ այն կառավարութեան իր
 տուրքերը վճարելու կամ իր որդին գինուօր տալուն
 մէջ անտարբեր է: Ընդհակառակը միշտ մեծ կարեւո-
 րութիւն ունի իրեն համար գիտնալ թէ ո՛րչափ
 տուրք պիտի վճարէ, գինուորական ծառայութիւնը
 ո՛րչափ պիտի տեսէ, հողին գինն ու աշխատութեան
 վարձքը ի՛նչ պիտի ըլլան, խնդիրներ՝ որոնք բացար-
 ձակապէս անկախ են քաղաքական շահերէ: Ասկէ կը
 հետեւի որ հակառակ կառավարութեանց քանքերուն,
 որոնցմով կ'ուզեն հազորդել ժողովուրդին անոր ան-
 ծանօթ եղող հայրենասիրութեան գաղափարը և ջնջել
 անոր մէջ ի յայտ եկող ընկերական գաղափարները,
 ընկերվարականութիւնը՝ հակառակ այս ամէնուն՝ կը
 թափանցէ ժողովրդային զանգուածներուն մէջ, մինչ-
 դեռ հայրենասիրութիւնը մեծ դժուարութեամբ ներշնչ-
 չըւած՝ ժողովուրդի մօտ երթալով կորսուելու վրայ է
 երեւալով միայն բարձր դասակարգերու մէջ, որոնք
 նպաստաւոր է:

137. — Ռուսիոյ մէջ հայրենասիրութիւնը հաւատքի, ձարի և հայրենքի հանդէպ եղած սիրոյ և անձնուիրութեան ձեւի տակ հազորդուած է ժողովուրդին՝ եզական զօրութեամբ մը բոլոր այն միջոցներու, զորս կը տրամադրէ կառավարութիւնը, այսինքն եկեղեցիներու, վարժարաններու, հրատարակութեանց և ինչ. միջոցաւ։ Ուստի, Ռուսիոյ մէջ աշխատաւոր դասակարգը՝ գրէթէ հարիւր միլիոն մարդ, իր հաւատքին, ձարին ու հայրենիքին մասնաւորաբար անձնուէր ժողովուրդի մեր անարժան համբաւին հակառակ, կարելի եղածին չափ աղաւտած է հայրենասիրութեան կանխակալ կարծիքներէն և իր հաւատքի, ձարի ու հայրենիքի հանդէպ անձնուիրութեան գաղափարներէն։ Իր հաւատքը, կառավարութեան սորվեցուցած այն օրթոտօքս կրօնը՝ որուն համար կ'ըսուի թէ ժողովուրդը այնչափ անձնուէր է, նոյնիսկ չի ճանշնար ինք, և երբ զայն կ'ուսանի պատահաբար, կը փութայ մէկ կողմ նետել բնապաշարը՝ համար, այսինքն ընդգրկելու դաւանանք մը որ ո՛չ յարձակումի, ո՛չ ալ պաշտպանութեան պէտք ունենայ։ Ձարի հանդէպ, անոր ալդեցութիւնն աւելցրնելու համար թափուած ջանքերուն հակառակ, ժողովուրդին դիրքն ա՛յն է, ի՛նչ որ է բոլոր տէրութեանց հանդէպ, եթէ դատողութեամբ չի շարժիր, գէ՛թ ինքզինք մեծապէս անտարբեր ցոյց կուտայ։ Իսկ հայրենիքի համար՝ եթէ ատով իր գիւղէն կամ գաւառակէն տարբեր բան մը հասկցնել կ'ուզուի, կա՛մ տեղեկութիւն չունի կամ անոր ու միւս երկիրներու միջեւ ո՛ր և է տարբերութիւն չի գննար։ Ինչպէս որ երբևիտեալ գաղթականներ Աւստրիա կամ Թուրքիա կ'երթային հաստատուելու, այնպէս ալ հիմա անխափ

կը հաստատուին Ռուսիա, կամ, այս երկրէն դուրս
Թուրքիա կամ Չինաստան:

138.— Ռուս գիւղացիի մը համար հայրենասիրութիւնը ո՛ր և է կարեւորութիւն չունի, իրեն համար շատ աւելի նուազ կարեւոր խնդիր մըն է գլտնալ թէ ի՛նք որ կառավարութեան տակ պիտի ապրի, (վասն զի գիտէ որ բոլոր կառավարութիւններն ալ զինք հաւասարապէս պիտի կողոպտեն) քան թէ գլտնալ թէ ո՛ր ջուրը լաւ է, թէ կաւը կակուղ է և կաղամբը այնինչ տեղ լաւ կը բուսնի:

Միեւնոյն երեւոյթք կը նշմարուի ընդհանրապէս Ամերիկայի մէջ գաղթական անգլիացիներու, հոլանտացիներու, գերմանացիներու մօտ, կամ, ա՛յն բնակչութեան մօտ, որ Ռուսիա կուգայ հաստատուելու:

139.— Եւրոպական ազգերու մէկ վարչային ձևէն միւսին, թրքական տիրապետութիւնէն աւստրիականին, գաղղլիական տիրապետութիւնէն գերմանականին անցումը այնչափ քիչ կը փոխէ ճշմարտապէս աշխատասէր դասակարգին պայմանը որ անիկա բուրովին անտարբեր պիտի մնար, եթէ կառավարութիւնն ու վարիչ դասակարգեր արհեստապէս պատճառ չըլլային անոր մէջ դնելու դիմագրելու ոգին:

140.— Եթէ հայրենասիրական զգացումներ խորապէս արմատ արձակած ըլլային զանազան ժողովրդոց սրտին մէջ, ազատ պիտի թողուէին անոնք իրենք իրենց յայնուելու, առանց ջանալու որ արհեստական միջոցներով դուրս պտտնակին:

Ե.

ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

141. — Սեզանի մը առջև պատուոյ տեղերուն վրայ նստած կ'երևին, կայսեր ոտքի վրայ նկարուած պատկերին տակ, շքանշաններով զարդարուած ծեր պաշտօնականներ, որոնք ազատօրէն և անփութօրէն կը խօսակցին, կը դրեն, կը հրամայեն, կը կանչեն: Անոնց քով մետաքսեայ պճղնաւորով, մեծ խաչ մը կուրծքին, ճերմակ մազերն ուրարին վրայ խնկած պատկանելի քահանայ մը կը կենայ գրակալին մօտ, որուն վրայ ոսկեղօծ խաչ մը և անկիւնները սակեղօծ Աւետարան մը կը հանդէսնէ: Ի վրէժով կը կոչուի ան: Գէշ հագուած, անմաքուր, ահարկի պատանի մը կը յոռաջանայ, դէմքն աւրուած, աչքերն անհանգարտ ու տենդոտ, ցած ու ընդհատ ձայնով մը կ'ըսէ. «Ես... օրէնքը... իրք քրիստոնեայ... չեմ կրնար...»

— Ի՞նչ կ'ըսէ աս, կը հարցնէ նախագահը անհամբերութեամբ, աչքերը տողադրելով, ունկնդրելով և գլուխը գրքէն վերցնելով:

— Աւելի բարձր խօսէ, կը գոչէ գնդապետը, որուն պատուանշանները կը փայլէին:

— Ես... ես... իրք քրիստոնեայ...:

Վերջապէս կը հասկցուի որ երկտասարդը գլխուորական ծառայութիւնը կը մերժէ քրիստոնեայ ըլլալուն:

— Յիմարական խօսքեր չ'ուզեր: Զողաչափին

վրայ կեցի՛ր: Տոքթէօր, հաճեցէք չափել զայն: Լա՛ւ է:

— Լա՛ւ:

— Տէ՛ր հայր, երդումն առէք:

Ո՛չ միայն մէկը խռոված չէ, այլ ուշադուլութիւն անգամ չեն ըներ խեղճ զարհուրած պատանիին թոթով ձայնին:

— Ամէնքն ալ ըսելիք մէյ մէկ բան ունին, եթէ ժամանակ ունենանք անոնց մտիկ ընելու: Տակաւին այնքան զինուորացուներ կանքննուելիք:

Նորընտիր զինուորը կարծես բան մըն ալ ըսել կ'ուզէ:

— Քրիստոսի օրէնքին հակառակ է:

— Քայէ՛, քալէ՛, օրէնքին համաձայն կամ հակառակ եզածը քեզմէ սորվելու պէտք չունինք, քալէ՛ գնա: Տէր հայր, համոզեցէք զայն: Յաջորդը:

Եւ երխտասարդը կը տանին բոլորովին դողահար:

Ո՞վ կը տարակուսի որ պատանիին արտաստանած անյարիր և անմիջապէս խեղդուած քանիմը բառերը ճշմարտութիւնը չեն ներկայացներ, իսկ պաշտօնեաներուն և քահանային հանդիսաւոր խօսքերը հանդարտ ու վստահ՝ ստուծիւն ու խարէութիւն չեն:

142.— Ո՛չ միայն կառավարութիւնը, այլ նոյնիսկ ազատամիտ մարդոց մեծամասնութիւնը կարծես համաձայնած են երես դարձնելու խնամով այն ամէնէն, որ ըսուած, գրուած ու եղած է և կ'ըլլայ տակաւին երեսուան հանելու համար անհաշտելիութիւնը բռնութեան իր ամէնէն ահարկու, ամէնէն կոշտ, ամէնէն որոշ ձեւով—զինուորականութիւնը, այսինքն, մարդասպանութեան կազմակերպութիւնը — այն վարդապետութեան հետ, որ ո՛չ միայն քրիստոնէական է, այլ պար-

զապէս մարդկային, և զոր ընկերութիւնը կը ձգտի
զաւանիլ:

143. — Աստուածաշունչը մեղի կը սորվեցնէ թէ
մարդուն երջանկութիւնը, անոր անկումէն առաջ, կը
գտնուէր չաշխատելուն մէջ: Այս միւսնոյն նախա-
արամագրութիւնը կը գտնուի անկեալ մարդուն մէջ,
քայց անգործ ըլլալ չի կրնար, ո՛չ թէ անէծքին պատ-
ճառաւ, որ մարդուն վրայ կը ծանրանայ և զայն կը
ստիպէ իր ճակատին քրտինքով ձարելու իր հացը, այլ
իր բարոյական յատկութեան էութեանը հետեւանօք:
Գազանի ձայն մը անոր կ'ազդարարէ որ յանցաւոր
կ'ըլլայ երբոր ծուլութեան ենթարկուի, և սակայն եթէ
կարենար անգործ մնալով օգտակար ըլլալ և իր պար-
տականութիւնը կատարել, պիտի տիրանար անշուշտ
սկզբնական երջանկութեան պայմաններէն միայն: Ահա
աչապէս ընկերութեան ամբողջ դասակարգ մը, զինուո-
րական դասակարգը, կ'ապրի անգործութեան մէջ, որ
այնչափ աւելի թուրտրուած է անոր, որչափ որ
հրամայուած է, և որ ծառայութեան մեծ հրապոյրն
եղած է միշտ անոր համար:

144. — Այսօր մեր կեանքը Յիսուսի վարդապե-
տութեան հետ այնպիսի հակասութեան մէջ կ'ը գտնուի
որ ահաբի՛ն դժուարութիւն կը կրենք զայն հասկնալու
համար: Խուլ եղած ենք կեանքի իրր կանոն Յիսուսի
մեզի պատուիրածներուն հանդէպ ո՛չ միայն չը սպան-
նելու, այլ չբարկանալու, չանաստելով միւս երեսը
աքարձնելու, մեր թշնամիները սիրելու համար
առւած իր յորդորներուն առջեւ: Վարժուած ենք
սպաննութեան գործին համար մասնաւորաբար յա-

կացուած մարդիկ — քրիստոնեայ բանակը — հրաւիրել, վարժուած ենք յազթութիւն խնդրելու համար քրիստոսի ուղղուած աղօ՛ջներ լսել, մե՛նք որ սուրը կանգնած ենք իբր խորհրդանշան սպաննութեան՝ տեսակ մը նուիրական առարկայ: Անա այսպէս անանկ կէտի մը հասած ենք որ Յիսուսի խօսքերն այժմ պատերազմի համամիտ կը թուին մեզի: Ու կ'ըսենք, եթէ անիկա պատերազմը արգիլած է, պէտք էր որ աւելի բացառայա ըսէր:

Կը մոռնանք որ Յիսուս չէր կրնար երեւակայել թէ մարդիկ խոնարհութեան, սիրոյ, կղբայրութեան իր վազապետութիւնը ընդունելէ վերջ հանդարտութեամբ ու կանխամտածութեամբ կարենան կազմակերպել կղբայրասպանութիւնը:

145. — Ընդհանուր գինուորական ծառայութիւնը ընկերական կազմակերպութեան պահպանումին համար անհրաժեշտ սեպուած բռնաբարութեան վերջին տատիճանն է: Ծայրագոյն սահմանն է ա՛ն, որ կը հասնի հպատակներու հնազանդութեան. շէնքին միջնաքարն է, որուն անկումը պիտի վճռէ ամբողջ շէնքին անկումը:

146. — Համազումար ծառայութեան հաստատումը մեր միտքը կը բերէ այն մարդը, որ՝ իր տունը չը փլչելու համար՝ դայն այն տատիճան կը լեցնէ գերաններով, նեցուկներով ու տախտակներով որ կը յաջողի հաստատուն պահել զայն բոլորովին անբնակելի դարձնելով:

Այսպէս ալ համազումար ծառայութիւնը անպէտք կը դարձնէ ընկերական [կեանքի բոլոր առաւելութիւնները, զորս պաշտպանելու կոչուած է: Զինուոր

բախան պաշտպանութեան համար հաւաքուած տուրքերը կը սպասեն ամենամեծ մասը աշխատութեան արգիւնքին, զոր բանակը պա՛րտ էր պաշտպանել: Դրոշակներու տակ բոլոր ողջանգամ մարդոց համախմբումը ինքնին աշխատութեան հնարաւորութիւնը վտանգի կ'ենթարկէ: Պատերազմի սպառնալիքները, պայթեցու միջոց պատրաստ, ընդունայն և անօգուտ կը դարձնեն ընկերական կեանքի պայմաններու ամէն բարուսքում:

147. — Կան տակաւին մարդիկ, որոնք բանակի մէջ կը մանեն առանց գիտնալու թէ ի՞նչ կ'ընեն: Կը զանուին այնպիսիներ՝ որոնք կը փափաքին օտար ժողովրդոց դէմ պատերազմ մղել, կա՛մ, կը մազթեն որ աշխատասէր բանուորներու ստրկութիւնը յարատեւէ, և կամ, պարզապէս սպաննելու համար սպաննութենէ փոքր կը զգան: Ու՞ տակաւին այդ կարգի մարդիկ զինուոր կ'ըլլան: Սակայն անոնք պէտք չէ անդիտանան որ սերիշներ ալ կան, և այս աշխարհի ամէնէն լուերն են անոնք, քրիստոնեայ կամ մահմետական, Պրահմայի հաւատացող կամ կոնֆիւկիոսի աշակերտ, որոնց՝ առանց կրօնի խտրութեան՝ պատերազմն ու զինուորները նողկանք ու արհամարհանք կ'ազդեն, և որոնց թիւը ժամէ ժամ կ'աւելնայ: Ամէնէն սուր արամարանութիւնները սչինչ կրնան սա խլտա պարզ ճշմարտութեան դէմ թէ մարդ մը, որ իր պատիւը կը պահէ, իրաւունք չունի գերի ըլլալու անձանօթ տիրոջ մը, կա՛մ, նոյնիսկ ձանօթ տիրոջ մը, որուն միակ նպատակն է սպաննել: Ա՛րդ, զինուորական ծառայութիւնն ու կրթութիւնը չունին ուրիշ խմտու:

148. Կրթութիւնը մարդոց դաստիարակման համար եղած մասնաւոր մեթոտ մըն է, որ ժամանակ մը կը յաջողի խլել անոնցմէ ամէնէն թանկագին բարիքը, անոնց բնութեան ամէնէն կարեւոր յատկութիւնը՝ ազատ բանականութիւնը՝ և կը ստիպէ զանոնք մեքենաներու, կոտորածի գործիներու դերը կատարելու իրենց դասակարգական (hiérarchie) մեծերու ձեռքին մէջ:

149. — Պատմութիւնը ցոյց կուտայ որ կեսարէն ակտած մինչեւ Նաբոլէոն, և անկէ ալ մինչեւ Պիզմարք, կառավարութիւնը իր էութեան մէջ եղած է միշտ ուժ մը, որ բռնաբարած է արդարութիւնը, և ուրիշ կերպ ալ չէր կրնար ըլլալ: Արդարութիւնը չի կրնար պարտաւորիչ ըլլալ անոր կամ անոնց համար, որոնք զեղծանող և բռնութեան ընտելացած մարդոց՝ զինուորներու՝ կամաց համեմատ կը գործեն և անոնց միջոցաւ կ'իշխեն ուրիշներու վրայ: Այս պատճառաւ կառավարութիւնները չեն հաւանիր նուազեցնել թիւը այս ընտելացած ու հնազանդ մարդոց, որոնք իրենց ամբողջ զօրութիւնն ու ազգեցութիւնը կը կազմեն:

150. — Եթէ բանակներն այսօր միլիտնաւոր մարտիկ կը համրեն, պատճառը իւրաքանչիւր երկրի իր զրացիներու սպառնալիքին տակ գտնուիլը չէ միայն, այլ որովհետեւ ներքին յեղափոխական փորձերը զըսպել պէտք է: Մէկը միւսին հետեւանքն է. կառավարութեանց բռնակալութիւնը կը ստատկանայ իրենց զօրութեամբ ու արտաքին յաջողութեամբ, և իրենց յարձակողական տրամադրութիւնները կ'աւելնան իրենց բռնակալութեամբ:

151. — Ժր. դարու վերջը, մեզի ծանօթ ու գեռանծանօթ պատճառներով՝ Գաղղիացիք կը սկսին զիրար փողոտել: Այս պէտքը արդարացնելու համար պիտի գանուին մարդիկ, որոնք պիտի յայտարարեն թէ աւնիկա պէտք էր Գաղղիոյ բարիքին և ազատութեան հաւատարութեան զազափարներու յաղթանակին համար:

Գաղղիացիք կը դադրին զիրար սպաննելէ, ու դարձեալ մարդիկ կը ջտաազովն այս երեւոյթը մէջ բերելով որ պէտք էր անիկա աշխատութիւնը զօրացընելու և արշաւանքի պատրաստութիւն տեսնելու համար: Իրողութեանց այս հաստատումներն անիմաստ են, զիրար կը հակասեն, որովհետև անկարելի է ճանչնալ մարդ սպաննելու պէտքը մարդուն իրաւունքը հաստատ սրահելու համար, կա՛մ, սուսներ սպաննելու պէտքը՝ Անգլիան ամօթապարտ թողելու համար:

152. — 1892 ին կիյեօմ Բ.՝ իշխանութեան ահարկու գաւակը՝ որ բարձրաձայն կ'ըսէ ի՛նչ որ ուրիշներ մտածելով կը շատանան, քանի մը զինուորներու խօսելով հրապարակաւ կը յայտարարէ հեռեւեալը, զոր յաջորդ օրը հազարաւոր լրագիրներ կը հրատարակեն. «Նորակոչ զինուորներ, Սեղանին ու Ատուծոյ ծառային առջև ի՛նձ հաւատարմութիւն երդուընցաք: Դուք գեռ շատ երխտասարգ էք հոս ըսուածին կարեւորութիւնն ըմբռնելու համար, բայց ամէն բանէ առաջ ջանացէ՛ք հնազանդիւ ձեզի արուելիք պատուէրներուն ու հրահանգներուն: Դուք այդ հնազանդութիւնը ինձ երդուընցաք, ո՛վ իմ պահպանութեանս ազաք, ուրեմն հիմա իմ զիւորներս էք, դուք ինձ

կը վերաբերի՛ի հոգւով ու մարմնով: Այսօր ձեզի համար մէկ թշնամի միայն կայ, այն որ իմ թշնամիս է: Արդի ընկերվարական հնարագիտութեամբ կրնայ պատահիլ որ ձեզ հրամայեմ կրակ ընել ձեր իսկ ազգականներուն, ձեր եղբայրներուն, ձեր հայրերուն, ձեր մայրերուն վրայ, նոյնիսկ այդ պահուն առակց վարակեղու պարսի՛ի հնազանդիլ իմ հրամաններուս:»

Այս մարդը յայտնապէս կը խօսի ինչ որ կառավարութիւնները կը մտածեն ու կը ծածկեն խնամով: Բացայայտ կ'ըսէ թէ անոնք որ բանակի մէջ մտած են իր ծառայութեան համար են և պարտին իր օգտին համար պատրաստ ըլլալ սպաննելու համար եղբայրնին ու հայրերնին:

Ամէնէն կոշտ խօսքերով, համարձակօրէն կ'արտայայտէ ամբողջ սարսափը ոճիրին, որուն կը պատրաստըւին բանակի ծառայութեան կոշուող մարդիկ, ցոյց կուտայ ստորնացումի ամբողջ խորխորատը, ուր կը գահավիժին անոնք հնազանդութիւն խոստանալով:

Այս մարդը հիւանդ, թշուառ, իշխանութեամբ արբշխո՛ կը նախատէ իր խօսքերով ամէն ինչ որ այժմու մարդուն համար նուիրական է: Ազատամիտները, քրիստոնեաները, զարգացած մարդիկ, ամէնքն ալ, ոչ միայն այս նախատինքներէն չեն զայրանար, այլ նոյնիսկ չեն նշմարեր զայն:

153.— Անոնք որ Խաղաղութեան վեհաժողովին կը մասնակցին զուարճարաններ են: Ըսէք այդ մարդոց թէ իւրաքանչիւր մարդու անձնական դիրքէն միայն կախում ունի լուծումը այն բարոյական հարցին, որ այսօր մէջտեղ դրուած է, այդ հարցն է ստիպողական ծառայութեան օրինաւորութիւնը կամ ապօրինու-

թիւնը: Այդ մարդիկ իրենց ուսերը պիտի թոթուեն և պիտի չհաճին նոյնիսկ պատասխանել: Անոնք այս հարցին մէջ կը տեսնեն պատահութիւն մը ճառեր արտասանելու, գրքեր հրատարակելու, նախագահներ, փոխ-նախագահներ, քարտուղարներ ընտրելու, ժողով գումարելու, կա՛մ, բանախօսելու այս ու այն քաղաքին մէջ: Անոնց կարծիքով, բոլոր այս գրուած կամ խօսուած երկոյնարանութիւնէն սա՛ արդիւնքը առաջ պիտի գայ որ կառավարութիւնները պիտի դադրին զօրք ժողովելէ, որոնք իրենց զօրութեան հիմը կը կազմեն, և իրենց խորհուրդին անսայով պիտի արձակին իրենց բանակներն ու պիտի մնան առանց պաշտպանութեան ո՛չ միայն իրենց զբայիններուն, այլ և իրենց հպատակներուն առջև: Իրր թէ աւտղակները, որոնք անդէն մարդիկ պինդ մը կապած են կոդապտելու նպատակաւ, պիտի զգածուէին ճառախօսութիւններէ, իմանալով չուանով կապուած իրենց զոհերուն ցաւը և պիտի փութային կտրել չուանը:

Այսուհանդերձ այս բանին հաւատացող անձեր կան, որոնք խաղաղութեան վեհաժողովով կը զբաղին ու բանախօսութիւններ կ'ընեն: Շիտակը խօսելով՝ կառավարութիւններն անոնց կը յայտնեն համակրութիւն և զանոնք քաջալերել կը կեղծեն, ինչպէս, որ պաշտպանել կը կեղծեն գինեհատութեան բնկերութիւնները, մինչդեռ մեծ մասամբ ժողովրդոց գինովութեան շնորհիւ կ'ապրին. նոյնպէս պաշտպանել կը կեղծեն գիտութիւնը, մինչդեռ իրենց զօրութիւնը ճշմարտապէս հիմնուած է տգիտութեան վրայ: Ապահովել կը կեղծեն ազատութիւնն ու սահմանադրութիւնը, մինչդեռ իրենց իշխանութիւնը հաստատ կը մնայ ազատութեան

բացակայութեան շնորհիւ : Հոգ ընել կը կեղծեն բան-
ւորներու ճակատագրի բարեխաւման համար , մինչդեռ
գործաւորին ճնշման վրայ է որ կը հանգչի իրենց
գոյութիւնը : Քրիստոնէութիւնը պաշտպանել կը կեղ-
ծեն , մինչդեռ քրիստոնէութիւնը կը տապալէ բոլոր
կառավարութիւնները :

Վեհապետներ իրենց միակ կամքով կ'որոշեն թէ
այս տարի թէ՛ յաջորդ տարի պիտի սկսի մեծ կո-
տորածը : Հաճոյքով կ'ունկնդրեն խաղաղասիրական
քննախօսութիւնները , կը քաջաւերեն զանոնք ու կը
մասնակցին անոնց , որոնք՝ մնասակար ըլլալէ հետի ,
ընդհակառակը օգտակար կ'ըլլան կառավարութեանց ,
որովհետեւ ժողովուրդի մէջ փոփոխութիւն առաջ կը
բերեն և զանոնք կը դարձնեն սա՛ էական ու գլխա-
ւոր հարցին թէ զինուորական ծառայութեան սխիպողա-
կանութիւնն ընդունիլ հա՞րկ ե թե ո՛չ :

154.— ԶԵ՞ որ մենք ամէնքս ո՛չ միայն կը խոս-
տովանինք ընկերի հանդէպ սէր , այլ և իրապէս
կ'ապրինք հասարակաց կեանք մը , կեանք մը , ո-
րուն բազկերակը միեւնոյն շարժումով կը դարնէ ,
իրարու կ'օգնենք , հասարակաց երջանկութեան համար
եւս քան զեւս գիրար կ'ուսուցանենք , սիրով մէկըդ-
մէկու կը մօտենանք — այս մերձեցումին մէջ է ամբողջ
կեանքի նշանակութիւնը — և վաղը Տէրութեան պիտ
մը՝ խենդեցած՝ ո՛ր և է անմիա խօսք մը պիտի ըսէ ,
ուրիշ մը տարբեր յիմար խօսքով մը անոր պիտի
պատասխանէ , ու ես պիտի երթամ ինքզինքս մահ-
ուան ենթարկելու , մարդիկ սպաննելու , որոնք , ո՛չ
միայն ինձ բան մը չըրին , այլ հակառակը կը սիրեմ
զանոնք : Եւ ասիկա հեռաւոր հաւանականութիւն մը

չէ, այլ անխուսափելի սառուգութիւն մը, որուն ամէնքս ալ կը պատրաստուինք: Մարդու մը խենդեանայր կամ անձնասպան ըլլալը մեծ բան մը չէ, երբ յատկօրէն զխտակցի այս իրողութեան, բան մը որ տեղի կ'ունենայ նոյնիսկ զինուորականներուն մէջ:

155.— Ան որ զինուորական ծառայութիւնը մերժած չէ, ա՛ն որ տա՛ն ւտորնացումներէ անցած է և բոլոր անգթութիւնները գործած, և թէ սպաննուած չէ, կրնայ իր ծաղրաշարժ հագուստին վրայ ընդունիլ կարմիր կամ սևկեղծ զարդեր, կրնայ բարեբաստ պարագայի մը մէջ հրամայել իրեն չափ անբանացած հարիւր հազարաւոր մարդոց, կոչուիլ թէ՛ մտաջախտ և թէ շահիլ շատ մը դրամ:

Զինուոր չարձանագրուածը առաւելութիւնը պիտի ունենայ իր մարդկային արժանապատուութիւնը պահելու, պատուաւոր՝ անձերէ յարգուելու և մանաւանդ մարդոց օգտակար գործ՝ մը կատարելու գիտակցութիւնն ունենալու:

Զ.

ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆԸ — ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆԸ

156. — Բախտաւորներ հասած են յաջողութեան ու ձոխութեան այն կէտին, որ ժամանակաւ միայն պարիկներու պատմութեանց մէջ կարելի էր, ուր կը խօսուի անսպառելի գանձի մը տիրոջ մասին: Այդ վիճակին մէջ հարուստ մարդը ո՛չ միայն կ'ազատագրուի աշխատութեան օրէնքէն, այլ աշխարհի բոլոր բարիքները վայելելու և իր անսպառելի գանձը իր զաւակներուն կամ ո՛ր և է մէկուն փոխանցելու կարելիութիւնն ունի: Աշխատութեան արդիւնքը գործաւորներու ձեռքէն ամբողջովին կ'անցնի անգործ մարդոց ձեռքը: Ընկերական շէնքի բուրգը այնպիսի ձեռք մը կը վերաշինուի որ անոր հիմերը շատ շուտ կը տեղափոխուին և կը դառնան գազաթ:

157. — Կը քաւէ վայրկեան մը խորհիլ այն գիւղացիներու վրայ, որոնք քաղաք կուգան քիչ մը գրամ շահելու և տուրք վճարելու, հասկնալու համար թէ ի՞նչպէս ապշած կը մնան հարստութիւններն ու յիմարարար ծախսուած գումարները տեսնելով, մինչդեռ իրենք արդիւնք մը առանց ձեռք ձգելու կ'աշխատին իրենց ճակտի քրտինքով: Նոյնիսկ զարմանալի է որ այս աղքատ մարդոց մէջ կը գտնուին բանւորներ, որոնք հետամուտ չեն ըլլար գիւրին ձեռարուեստի մը, որ առանց մի՞ծ ջանքի գրամ շահեցնէ իրենց:

458. — Աղքատներ չեն խմացած և պիտի չխմանն բնաւ թէ արդարացի է թողուլ որ ոմանք շարունակ տօն կատարեն և ոմանք ծոմ պահեն ու յոգնին անդադար: Նախ անոնք շուարած ու վիրաւորուած են այդպիսի անարդարութեան մը առջեւ, յետոյ վարժըւած են անոր, և տեսնելով որ այս կարգը օրինական համարուած է, կը ջանան աշխատութենէ ազատագրուիլ հարուստներու խրախուժեան մասնակից ըլլալու համար: Ոմանք կը յաջողին և կը դառնան թուլամորթ ու հեշտասէր, ոմանք կը ջանան այս բաղձալի դիրքին հասնիլ, ուրիշներ ալ՝ որոնք որ բախտաւորութիւն ունեցած չեն՝ շուայտութեան և անօրէնութեան զոհերը կ'ըլլան:



459. — Մարդիկ կրցան երկար տարիներ ժողովուրդին ընդվզումները խաղաղել անոր խօսելով երկնային կամքի մասին: Ատուծոյ ունեցած խորհուրդներէն է որ, կ'ըսէին, կարգ մը մարդիկ իրենց նմաններուն ամենակարող տէրերն ըլլան: Սակայն օր մը անոնք որ տառապելէ յոգնած էին՝ այս խօսքերը տարակուսով ընդունեցին:

Այսօր անտեսագէտներ ապահովեցուցած են որ՝ անտեսական բարեշրջութիւնը վարող անհրաժեշտ օրէնքներու միջոցաւ՝ քանի մը մարդոց քով պիտի դիզուի շրջաբերութեան հանուած ամբողջ դրամը, և ուրիշներ իրենց ամբողջ կեանքին մէջ պիտի աշխատին այդ հարստութիւնը աւելցնելու: Բայց այժմէն կարելի է հաստատել որ այս տեսութիւնը իր արժէքը կը կորսնցնէ, մանաւանդ խոնարհներու համար, որոնց ողջմտութիւնը չէ՛ նսեմացած ստայօդ գիտութեամբ:



160.— Երբ մարդիկ ինչքերնին կը կորսնցնեն, զիրենք արդարացնող՝ մարդկային արդի քանի մը ընդհանուր ըմբռնումները միտք կը բերեն, որոնց համեմատ իրենք կը ներկայանան իրր անհրաժեշտ հլու գործիները գերազոյն զօրութեան մը, որ իրենց քննութեան տակ չ'իյնար:

Այսպէս, ժամանակաւ կ'ըսուէր որ Աստուած իր անթափանցելի և անխուսափելի խորհուրդներուն համեմատ ոմանց հարկադրած է աշխատութիւնն ու աղքատութիւնը և ուրիշներու շնորհած՝ այս աշխարհի բարիքներուն վայելումը: Աղքատներն ու հարուստները՝ մանաւանդ հարուստները՝ գոհ մնացին երկարատեւն այս յայտնուած գաղափարներէն:

Այսօր քաղաքական տնտեսութիւնը կը պնդէ որ օրէնքներ գտած է, որոնց համաձայն մարդոց միջիւ կը բաժնուին աշխատութիւնը և անոր արդիւնքներուն վայելումը: Անիկա մեզի կը սորվեցնէ թէ այս բաժանումը կախումն ունի մատուցումէն և խնդրանքէն, դրամագլխէն, հասոյթէն, ձեռագործութեան գնէն, արժէքէն, շահէն ևլն., մէկ խօսքով ամբողջութենէն այն անհրաժեշտ օրէնքներու, որոնք տնտեսական գործերու շարքը կը վարեն: Այս տեսութեանց հեղինակներուն պատակն է մի քանի առանձնաշնորհալներու մտածում մը տալ արդի իրերու վիճակը ջատագովող և զանոնք յորդորող՝ անխռով իրենց ծոյլ կեանքը շարունակելու, օգուտ քաղելու ուրիշ մարդոց աշխատութիւնէն անցելոյն մէջ եղածին պէս: Այս առանձնաշնորհալները կրնան տակաւին անխղճօրէն վայելել ինչ որ բռնութեամբ կամ խարդախութեամբ շահած են: Անոնք քաղաքական տնտեսութեան կողմէ ներման արժանացած են: Ահա ճշմարտութիւն մը, զոր բոլոր տնտեսագէտներ անվիճելի կը համարին:

161. — Այն մարդիկ, որոնք մեծ չափով հողերու և դրամադրուխներու տէր են, կա՛մ լեցուն թռչակներ կրատանան ամենախեղճ դասակարգէն, գործաւոր դասէն գանձուելով, ինչպէս նաև անոնք որ իրր վաճառական, բժիշկ, արուեստագէտ, սլաշածնեայ, գիտնական, կառուպան, խոհարար, հեղինակ, սպասաւոր, փաստաբան՝ կը կերակրուին այս հարուստ մարդոց քով, կը սիրեն հաւատալ թէ իրենց վայելած առանձնաշնորհումները ասպ չեն դար բռնութիւնէ, այլ ծառայութեանց բացարձակապէս կանոնաւոր և ազատ փոխանակութիւնէ մը, թէ անոնք ինքնին գոյութիւն ունին և մարդոց միջև կատարուած ազատ պայմանագրութեան մը արդիւնքն են և թէ բռնութիւնները հետևանք չգիտեմ ո՛ր ընդհանուր օրէնքներու՝ արդէն ինքնին գոյութիւն ունին: Կը ջանան իրենց առանձնաշնորհումները չհամարել հետևանքը խկական սրտածառին, այսինքն, բռնութեան և անիրաւութեան՝ ամենախիտ իրաւունքին:

162. — Քաղաքական անտեսութեան եզրակացութիւնները, որոնց կը յարին ազատորեար ու միջակորեար մարդիկ, որոնք կը պարծին բարձր զարգացում և յառաջագէ՛մ գաղափարներ ունենալուն, նախ կը թուին ազատական, նոյն իսկ արմատական, որովհետև ընկերութեան հարուստ դասին վրայ յարձակելու հնարագիտութիւնն ունին: Սակայն իրականին մէջ անոնք բոլորովին սուղորուած են ամենախիտ պահպանողական մտքով: Գիտուն, ազնուապետական ու միջակորեար, ամէնքն ալ, կը սլաշապանեն աշխատութեան բաժանումի գրութիւնը, ինչպէս որ է մեր օրերուն մէջ, որովհետև անխկա կ'ապահովէ իրենց

պերճանքի պէտքերը գոհացնելու յատուկ բոլոր առարկաներու արտադրութիւնը: Մտամշակումն է որ, կ'ըսեն անոնք, արդի աշխարհը կազմակերպեց, նուիրական բան մըն է այդ մտամշակումը, որ կը յայտնուի զգալի ձեւի մը տակ, շոգեկառքերու, հեռագրերու, հեռաձայներու, լուսանկարչութեան, ֆ. ճառագայթներու, արուեստահանդէսներու և բոլոր հեշտակեցութեան կատարելութիւններու միջոցաւ: Մարդիկ պիտի չուզէին ընդունիլ որ ամենափոքր պարագայ մը փոխուի իր արդիւնքներու ամբողջութեանը մէջէն:

Այսուհանդերձ հետզհետէ յայտնի կ'ըլլայ որ մշտամշակումի բոլոր այս յառաջդիմութիւնները իբր առաջին, պայման՝ ունին գործաւոր դասակարգին հարըստահարութիւնը: Ին՞չ հոգ, գիտուններ նախանձախնդիր իրենց տեսութեան՝ չեն վարանիր իրաւարաններու սա՛ հռչակաւոր նշանաբանը «կեցցե՛ արդարութիւն, կորնչի՛ ստոքիւն» ը փոխելու «կեցցե՛ մտամշակում, կորնչի՛ արդարութիւն» ի:

163.— Ընդհանրապէս ընդունուած գաղափար մը կայ թէ դրամը հարստութիւնը կը ներկայացնէ, թէ հարստութիւնը, իր կարգին, աշխատութեան արդիւնքն է, և հետեւաբար դրամը աշխատութիւնն է: Այս կարծիքը համարմէք է այն ըմբռնումին հետ թէ ամէն ընկերական կազմակերպութիւն կը հանգչի պայմանագրութեան մը վրայ:

164.— Դրամը իրեն վերագրուելու ուզուած նշանակութիւնը բոլորովին կորսնցուցած է, քանի մը պարագաներու մէջ միայն աշխատութիւնը կը ներկայացնէ. ընդհանուր առմամբ անիկա ուրիշին աշխա-

տուժիւնը շահագործելու իրաւունքը կամ կարելի-
ութիւնն է :

165. — Ընկերութեան մը մ'չ, ուր ո՛ր և է ձեւի-
տակ կը գտնուի շահագործութիւն կամ բռնութիւն,
դրամը չի կրնար ո՛չ մէկ կերպով ներկայացնել աշխա-
տութիւնը :

166. — Դրամը կը ներկայացնէ աշխատութիւնը :
Ոչ ո՛ր, կը ներկայացնէ աշխատութիւնը, բայց որո՞ւն :
Մեր ընկերութեան մէջ հազուադէպ է որ դրամը աշ-
խատութեան արդիւնքն ըլլայ անոր, որ զայն ձեռք
ձգած է, անիկա գրեթէ միշտ կը ներկայացնէ ուրիշ
մարդոց՝ ճշմարտապէս աշխատաւորներու՝ անցեալ կամ
ապառնի աշխատութիւնը, կը ներկայացնէ վերջապէս
գործաւորներու այն ստիպողական աշխատութիւնը,
զոր մարդիկ կը հարկադրին բռնութեամբ :

167. — Հոռոմէական կեանքի պատմութիւններ կը
կարդանք և կը դարմանանք անգթութեանը վրայ
անխիղճ Լուկուլլոսներու, որոնք իրենց անձը ընտիր
կերակուրներով ու գինիներով կը պարարեն, երբ
անգին ժողովուրդը անօթութենէ կը մեանի : Զարմա-
ցումով կը շարժենք գլուխնիս մեր պապերու բար-
բարօտութեան առջև, մեր մեծութեան գազաթէն
կը դարմանանք անոնց ամարդութեան վրայ : Եւ կա-
տարելապէս կը համողուինք որ մենք աւելի լա-
ենք, աւելի մարդկային : Սխա՛լ :

168. — Ո՛ր որ կ'ապրինք, եթէ ակնարկ մը
ձգենք մեր շուրջը, պիտի տեսնենք թշուառ ազաք :

երկու սեռէ ծերեր, հիւանդ ու վատոյժ յղի կիներ, որոնք իրենց ուժէն աւելի կ'աշխատին, որոնք ապրելու համար ո՛չ բաւականաչափ սնունդ, ո՛չ պէտք եղած հանդիստն ունին, և որոնք այդ պատճառաւ կը մեռնին վաղահասօրէն, ու պիտի տեսնենք քաջաւոյճ հասակի մէջ էակներ, որոնք շախշախիչ ու դժնդակ աշխատութեան տակ կ'ընկճուին:

169. — Երբ Փարաւոն մը կը պահանջէր որ իր գերիները աշխատին, ասոնք ի գործ կը դնէին միայն իրենց անցեալ կամ ներկայ աշխատութիւնը և ո՛չ թէ ապագայ աշխատանքը: Արդ, դրամը աշխարհի վրայ գոյութիւն ունենալէն ի վեր և վարկը՝ իբր անոր հետեւանք՝ հաստատուելէն ի վեր, կարելի եղած է ձեռքէ հանել նաեւ ապագայ աշխատութիւնը:

170. — Գերութիւնը, առանց մեր գիտակցութեանը, գոյութիւն ունի մեր ընկերութեանը մէջ, ինչպէս որ ժ՛. դարու Եւրոպային մէջ ստրկութեան ձեւով գոյութիւն ունէր առանց հասկցուելու այն ժամանակի մարդոց կողմէ:

171. — Գերութիւնը երբէք չի ջնջուեցաւ: Մարդիկ զայն ջնջելու ձեւեր ըրին Հռոմի, Ամերիկայի և Տուսիոյ մէջ, սակայն իրականին մէջ միայն քանի մը օրէնքներ ջնջեցին, քանի մը թաուեր, ո՛չ թէ դեպքեր: Արդէն ինչ է գերութիւնը, եթէ ոչ իր պէտքերու բաւարարութիւն տուող անհրաժեշտ աշխատութիւնէն ազատագրում և այս ազատագրումը արդիւնաւորել ուրիշներու աշխատութեան շահագործութեամբ:

172.— Գերութիւն կայ հո՛ն, ուր չաշխատող մարդ մը կայ. ո՛չ թէ անոր համար որ ուրիշները կ'ուզեն սիրով աշխատիլ ի նպաստ իրեն, այլ որովհետեւ անիկա միջոցներ ունի գործ մը չընելու և ստիպելու որ ուրիշները իրեն համար աշխատին:

173.— Մեր ընկերութեան մէջ կազմուած է շահախնդիր մարդոց բազմաթիւ խումբ մը, որ աշխատաւորներէն ճիշդ գողութեամբ ու աւազակութեամբ կը խլէ անոնց տաժանքին ամբողջ արդիւնքը:

174.— Մեր ընկերութեան մէջ տեղի կ'ունենայ ինչ որ կը պատահի մրջնարոյնի մը մէջ, ուր մի քանի մրջիւններ հասարակաց կեանքի զգացումը կորսընցնելով՝ կը սկսին վեր փոխադրել վարը դիպած պաշարնին և կը ստիպեն ուրիշներն ալ ստորտէն կատարը տեղափոխուիլ:

Աշխատատէր կեանքի գաղափարականին տեղ մարդոց կ'երևի անսպառելի գանձին գաղափարականը մշտապէս բուպլիններով զարդարուած: Մեծափարթամներ իրենց խորամանկութեան շնորհիւ կը տիրանան այս բուպլիններուն և, որպէսզի վայելեն գանձնք, մեծ քաղաքի մը մէջ կը հաստատուին, ուր ամէն ինչ կ'ընկզմի և կը սպասուի շէք ու տառապեալ մարդը շահագործուած՝ հարուստներուն հայթայթելու համար այս մշտապէս բուպլինները անոր ետեւէն կը դահալի՞թի աչք քաղաքին մէջ, հո՛ն ինքն ալ ի գործ կը դնէ խորամանկութիւններ, կը ջանայ ձեռք ձգել դիրք մը որ թոյլատրէ իրեն կարելի եղածին չափ քիչ աշխատիլ և ապրիլ ի մնաս աշխատող ժողովուրդին: Եթէ չյաջողի, կարճ ժամանակի մէջ տեղի կուտայ և կու-

զրկուած ըլլալուն մէջ կը գտնուի: Հողը՝ միակ սնուցիչը՝ այլ եւս չի պատկանիր մշակներուն, այլ անոնց որ իրենց հողային սեփականութիւնէն օգուտ կը քաղեն ապրելոյ ուրիշին աշխատութեամբ:

Հողին՝ մարդոց անհրաժեշտ ըլլալուն պատճառը սա՛ է որ անոնք կը մեռնին հող ունեցած չըլլալուն համար: Աօրիկ սարսափելի է, սա չի կրնար ըլլալ և պէտք չէ որ ըլլայ: Իրերու այս վիճակը բառնալու միջոցը պէտք է գտնել կամ գէ՛թ անձամբ չգործակցիլ անոր:

Հմուտ ընկերութիւններու, վարչութիւններու, լրագրերու մէջ երեւան կը հանենք ժողովուրդին թըշուառութեան պատճառները և զայն դագրեցնելու միջոցները, սակայն մէկ կողմ կը թողունք միակ միջոցը, որ գիւղացիին ճակատագիրը բարելաւելու պիտի ծառայէր, և որ կը կայանայ իրմէ գրաւուած հողը նորէն իրեն դարձնելուն մէջ:՝



179).— Կրնայ յուսացուիլ որ մօտաւոր ապագայի մը մէջ հողային բոլոր սեփականութիւնները ջնջուին, կրնայ յուսացուիլ որ տուրքին ամբողջ բեռը ծանրանայ հարուստներուն վրայ, քանի որ մեր օրերուն մէջ մի քանի կառավարութիւններ այս ուղղութեամբ բարենորոգութեանց ձեռնարկեցին, բայց կարելի չէ յուսալ ներկայ անտեսական պայմաններու մէջ որ հարուստ դասակարգեր զազրին ամէն օր աւելցնելէ իրենց, պերճանքի սովորութիւնը՝ շատ անգամ ադիտաբեր: Ուստի, այս սովորութիւններն անխուսափելիօրէն, ինչպէս որ ջուրը կը թափանցէ չոր հողի մը մէջ, պիտի անցնին գործաւոր դասակարգին, որ չվստան մէջ է ամէն օր հաճոյասէր անձերու հետ, և

Նորանոր պէտքեր պիտի զգան աշխատաւորները, որոնք անոնց գոհացում տալու համար պիտի շարունակեն ծախել իրենց ազատութիւնը:

180. — Երէկ մուրացիկի մը հանդիպեցայ, տակաւին երիտասարդ և զօրեղ կազմուածքով, բայց ինքզինքին քարշ տալով, կռնակը կորացած և անթացուպերու յենած: Ժամանակաւ սայլակով հող ու որմաքար կը փոխադրէ եղեր շէնքի հաստոցներու (chantiers) վրայ: Օր մը լաստակէ մը կ'իյնայ և իր անկումին հետեւանքով ներքին ծանր վերքեր կ'ընդունի: Ձինք դարմանող ջատուկ պառաւներն ու բժիշկները իրմէ կ'առնեն բոլոր խնայած դրամը, և ութ տարիէ ի վեր անապաստան՝ կը մուրայ ազաշելով Աստուծոյ որ վերջապէս իր հոգին առնէ:

Արդեօք քանի՛ քանի՛ մարդկային կեանքեր այսպէս կը կորսուին: Կ'անգիտանանք բոլոր այս տխուր վիճակները, կա՛մ, մեր մտազբաղումներուն մէջ անոնց շատ մեծ տեղ մը տալու կողմէն չինք, վասնզի անոնք մեզի համար անխուսափելի հետեւանքներ են իրերու կարգի մը. գոր հաստատ պահելու պարտաւոր կը սեպենք մեզի:

181. — Խստութեամբ կ'արգիլենք կառապաններուն որ իրենց ձիրրուն շատ ծանր բեռներ ջքաշել չտան, սպանգանոցներու մէջ մեռցնելու նոր կերպեր գործածել կուտանք, որպեսզի անասունները կարելի եղածին չափ քիչ չարչարուին: Ինչ եղական կուրութեամբ չինք տեսներ թշուառ ճակատագիրը միլիոնաւոր գործաւորներու, որոնք ամէն կողմ վիշտէ կը մեռնին դանդաղ ու շատ տնգամ վշտագին մահով մը:

մեզի հայթայթելու համար իրենց աշխատութեամբ բարեկեցութիւն ու վայելք :

182. — Վիճակադրութիւններ ցոյց կուտան մեզի թէ Անգլիոյ մէջ կեանքի միջին տեսողութիւնն է բարձր դասու մարդոց համար յիսուն և հինգ տարի և քսան և ինը՝ դորժաւորներուն համար. Այսպէս է գրեթէ ամէն երկրի մէջ :

Ամէնքս ալ կը հասկնանք, վասնզի այլ եւս չենք կրնար անդիտանալ, արդի ճարտարարուեստի այս սարսափելի հետեւանքները : Եւ դեռ անընդունելի կը թուի վայրի անասուններու բաւական նմանելիս, քանի որ այնքայն մարդկային կեանքերու դժնդակ աշխատութենէն կ'օգտուինք առանց կորսնցնելու երբէք մեր խզելի հանգիստը : Սակայն մե՛նք որ դիւրակեցութեամբ կ'ապրինք, աղաւականութեան ու մարդկութեան մասին կը խօսինք, մե՛նք որ կը յաւակնինք թէ մարդոց և նոյնիսկ անասուններու տառապանքներուն հանդէպ զգայուն ենք, միայն մեր հարստութիւնն աւելցնելուն վրայ կը խորհինք, այսինքն, այն մահացու աշխատութենէն աւելի օգուտ քաղելուն վրայ և չենք դադրիր ամենակատարեալ հանգարտութեամբ ապրելէ :

183. — Ժողովուրդը կը մեռնի, բայց վարժուած է իր դանդաղ հոգեվարքին, և այս անհաստատ վիճակը, այսինքն, աղոց հիւժուժը, կիներու վրայ ծանրացած շտիպողանց աշխատութիւնը, ամէնուն համար՝ մանաւանդ ծերունիներու սնունդի պակասութիւնը, ժողովուրդէն կ'առնէ այն մասնաւոր տարրերը, որոնք զայն կը պահպանեն : Ժողովուրդը աստիճանաբար այս

կացութեան հասնելով վերջապէս չի տեսներ որ ինք
այդ սոսկալի վիճակին մատնուած է և չի գանգատիր :
Ու մենք, մեր կարգին, այս կացութիւնը բնական ու
ճակատագրական կը համարենք :

184.— Առանձնաշնորհեալները կը մտածեն որ գոր-
ծաւոր դասակարգին վիճակը գթութեան արժանի է,
բայց զայն բարելաւելու համար կ'առաջարկեն միայն
անգոհացուցիչ բարեկարգութիւններ, որոնք իրենց
սովորական կեանքի քաղցրութիւնները նուազեցնելու
վտանգը չունին :

185.— Առանձնաշնորհեալներու մեծագոյն մասը
խորհուրդ կուտայ գործատէրերուն՝ հոգ տանիլ իրենց
բանւորներուն բարեկեցութեանը, բայց անոնցմէ և ո՛չ
մին կ'ուզէ արմատական տնտեսական յեղաշրջման
կարելիութիւնը վիճաբանութեան նիւթ ընել, որ
վերջնականօրէն պիտի ազատագրէր աշխատաւորները :

186.— Ի՞նչ օգուտ ունի այն դրամագլուխը, որ մի
քանիներու քով կեդրոնացած է, քանի որ ա՛յն օգ-
տակար կրնայ ըլլալ միայն ա՛յն առն, երբ ամէնուն
սեփականութիւնը դառնայ :

187.— Էականը կեանքի համար կազմուած սա՛
« մարդ իր հանոյքին համար թո՛ղ ուտէ խմէ » ոճրա-
պարտ մտածումը թօթափելն է և անոր տեղ խրա-
ցընել սա պարզ ու արդարացի մտածումը, որով աշ-
խատաւորը մեծցած է ու կ'ապրի, թէ ամօթ, դժուար և
անկարելի է ուտել առանց աշխատելու, թէ առանց աշ-

խատելու ուտելն ամէնէն ամբարիշտ, բնութեան դէմ ամէնէն հակառակ գործն է, հետեւաբար ամէնէն Վտանգաւորը՝ սողամու թեան նման:

188. — Մարդոց բոլոր թշուառութիւնները առաջ կուգան մէկ կողմէ անօթութենէն, ամէն տեսակ գրկումներէ, աշխատութեան չբաջալերուելէն և միւս կողմէ հարստութենէ, ծուլութենէ և ասոնցմէ ծնած բոլոր մոլութիւններէն:

189. — Սեփականութիւն կը նշանակէ ի՛նչ որ աւր-տած է, ինչ որ միմիայն ի՛նձ կը վերաբերի, ա՛յն զոր կրնամ գործածել ուղածիս պէս, ա՛յն զոր ոչ ոք կըր-նայ ինձմէ սունել, ա՛յն որ միշտ իմս է մինչև և կեանքիս վերջը և ա՛յն զոր առանձինն կրնամ գործածել, մեծցնել, բարեփոխել: Արդ, այս սեփականութիւնը, իւրաքանչիւր մարդու համար, իր սննն է միայն, և ո՛չ թէ ստացուած ինչքը:

190. — Երբ մարդ գաղբի հաւատ ընծայելէ երեւակայական սեփականութեան, այն ատեն միայն իր ճշմարտ սեփականութիւնը, իր կարողութիւնները, իր մարմինը պիտի գարգայնէ այնպիսի եղանակաւ մը որ անոնք իրեն ասն հարիւրապատիկ արդիւնք և երջանկութիւն մը, որու մասին գաղափար չունի: Այն ատեն միայն պիտի գասնայ օգտակար, կորովի և բարի մարդ մը:

191. — Այն մարդը, որ աշխատութիւնը կ'ընդու-նի իր կեանքին իբր նպատակ, իբր ուրախութիւն, պիտի չփնտռէ իր աշխատութեան թեթեւացումը ուրիշներուն աշխատութեանը մէջ:

192.— Աշխատութիւնը բեռ մը չէ, այլ հանոյք մը: Այն սխալ համոզումը թէ աշխատութիւնը անէծք մըն է՝ առաջնորդած է մարդիկ աշխատութեան զանազան ձեւերէն հեռանալու, այսինքն, ուրիշին աշխատութիւնը դողնալու:

193.— Ո՛վ որ իր կեանքի բերկրառիթ օրէնքը գործադրելու կ'աշխատի, այսինքն, աշխատութեան օրէնքը կը գործադրէ, ինքզինք այն չարաղէտ նախապաշարումէն՝ երեւակայական սեփականութիւնէն՝ ազատուած պիտի տեսնէ:

194.— Եթէ աշխարհի վրայ դատարկապարտ մը կը գտնուի, պէտք է գտնուի ուրիշ մարդ մը որ անօթութենէ կը մեռնի:

195.— Աղքատ ըլլալ կը նշանակէ օրական երեք անգամ անօթենալ, անքնութեան մատնուած՝ առանց ամբողջ ժամ մը անցնելու, ականջներուն վրայ մէկ կողմէն միւս կողմը դառնալով քնանալ, դաւակներ ունենալ և անոնցմէ չբաժնուիլ, և ի՛նչ որ էական է՝ երբէք չընել ինչ որ քեզ հաճելի է, չվախնալ անկէ որ քեզի կը սպասէ: Աղքատը պիտի հիւանդանայ ու տառապի, պիտի մեռնի ամէն մարդու պէս՝ հարուստներէն նուազ դժուարութեամբ և պիտի ապրի աւելի երջանիկ առանց ո՛ր և է տարակոյսի:

է.

ԳԻՏՈՒԹԻՒՆԸ — ԱՐՈՒԵՍՏԸ

196. — Մտաւորական կեանք, կրթութիւն, քաղաքակրթութիւն՝ այնչափ անորոշ, տարտամ դաղափարներ են, որոնց դրօշին տակ կարելի է հեշտիւ դասաւորել տակաւին աւելի տարտամ խօսքեր, և որոնք այս պատճառաւ կրնան պատշաճիլ բոլոր հնարաւոր տեսութիւններու :

197. — Աշխարհի գոյութիւն ունենալէն ի վեր բանական արարածները բարին չարէն զանազանած են : Իրենց նախնեաց ջանքերէն օգտուելով չարին դէմ կը կռուէին, արդար, ճամբան, յաւագոյնը կը փնտռէին և յամբարար, սակայն անդադրում, կը յառաջանային այս ճամբուն մէջ : Եւ կը գտնէին միշտ ստութեան պաշտպաններ, որոնք իրենց ճամբան գոցելով կը յաւակնէին ապացուցանել թէ կեանքը եղածին պէս պէտք է ապրիլ : Անոնք ջանքերու և պայքարներու միջոցաւ տակաւ առ տակաւ իրենք զիրենք կ'ապաստեն այս ստութիւններէն, և ահաւասիկ նոր ստութիւն մը, ամէնէն վատթարը. կը ցցուի իրենց ճամբուն վրայ, ա՛յն է գիտական ստութիւնը : Այս նոր ստութիւնը էապէս չի տարբերիր հիներէն, իր էութիւնն է բանականութեան և գիտակցութեան գործունէութիւնը փոխանակել գրսերեւութային բանով. գիտական ստութեան մէջ այդ գրսերեւութային բանն է զննութիւնը :

198. — Մեր գիտութեան ստուգութիւնը կախում չունի ժամանակի և միջոցի մէջ գտնուած առարկաները զննելու կարելիութենէն: Հակառակը, առարկային յայտնութիւնը ժամանակի և միջոցի մէջէն գիտուելուն որչափ որ տարակուսելի է, այնչափ աւելի պակաս կրնանք զայն ըմբռնել:

199. — Պատմագիրներ կը կարծեն թէ մարդոց մտաւորական կեանքն է մարդկութեան կեանքին պատճառը կամ արտայայտութիւնը: Այս հաստատումը հետեւեալ իրողութիւնով կը բացատրուի. գիտուններն են որ պատմութիւն կը գրեն, ուստի բնական է որ մտածեն թէ իրենց դասակարգին կեանքն է ամբողջ մարդկութեան կեանքին հիմը. ինչպէս որ վաճառականներուն, հողագործներուն և զինուորականներուն հաճելի է խորհիլ թէ իրենք կը կազմեն պատմութիւնը: Եթէ այս տեսակէտը պատմագիրներու գրքերուն մէջ չենք գտներ, պատճառն այն է որ վաճառականները, գիւղացիները և զինուորները պատմութիւն չեն գրեր:

200. — Կեղծ գիտութեան յատկութիւնն է մտածելը թէ գիտենք ինչ որ չենք գիտեր և թէ չենք գիտեր ինչ որ գիտենք: Անկարելի է աւելի ճշգրիտ սահման մը տալ մեր մէջ տիրած կեղծ գիտութեան: Մեր ժամանակի կեղծ գիտութիւնը կ'ենթադրէ որ գիտենք ինչ որ չենք կրնար գիտնալ և թէ չենք կրնար գիտնալ այն միակ բանը, զոր խկապէս կը ճանչնանք: Կեղծ գիտութեան ազդեցութեամբ մարդ կը կարծէ թէ կը ճանչնայ այն ամէնը որ իրեն կ'երևի միջոցին ու տեւողութեանը մէջէն, և թէ կ'անգիտանայ ինչ որ իրեն յայտնի է իր խոհուն գիտակցութեամբ:

201. — Ինչու՞ համար քանի մը մարդիկ ուրիշները բանտարկելու, չարչարելու, տարագրելու, զարնելու իրաւունքի տէրը դարձած են, մինչ իրենք ալ իրենց չարչարած, զարկած ու սպաննած մարդոց կը նմանին:

Գիտուններ սակայն փոխանակ այս խնդիրը լուծելու կը ջանան հասկնալ թէ մարդկային կամքը ազատ է թէ ո՛չ, թէ գանկին ձեւը կրնայ՞ մարդ մը ոճրագարութեան հարկադրել, ժառանգականութիւնը ի՞նչ դեր կը խաղայ ոճրին մէջ և թէ նմանոգութեան բնագոյր նմանապէս դեր մը չի՞ խաղար: Առհաւային անբարոյականութիւն մը կա՞յ: Բարոյականութիւնն ի՞նչ է, յիմարութիւնն ի՞նչ է: Այլասերումն ի՞նչ է: Խառնուածքն ի՞նչ է: Կլիման, սնունդը, ազիտութիւնը, նմանոգութիւնը, քնածութիւնը, կիրքը ի՞նչ ազդեցութիւն ունին ոճրին վրայ: Ի՞նչ է բնկերութիւնը: Որո՞նք են պարտականութիւնները եյն, և լին: Գիտուններ նուրբ, խորին, հետաքրքրաշարժ մտածումի նիւթեր կը գտնեն, սակայն ո՛չ մի պատասխան՝ սա գլխաւոր հարցումին. «Ի՞նչ իրաւունքով ոմանք կը պատժեն ուրիշները»: Հեռի՛ պատասխանելէ, այս խորհրդածութիւններն, ընդհակառակը, կը միտին ճշդելու պատիժներն ու ստութիւնները:

202. — Գիտութիւնն ու փիլիսոփայութիւնը ի զուր իրենք գիրենք կը ներկայացնեն իբրեւ տէր ու առաջնորդ մարդկային մտքի. անո՛նք անոր սպասաւորներն են միայն: Կրօնը անոնց բոլորովին պատրաստ կեանքի մը գազափարը կը հայթայթէ. իսկ գիտութիւնը կ'աշխատի միայն կրօնէն բացուած ալօսներուն մէջ: Կրօնը կեանքին իմաստը երևան կը հանէ,

խակ գիտութիւնը զայն կը պատշաճեցնէ այն զանազան պարագաներուն, որոնք ինքնին առաջ կուգան: Այս պատճառաւ երբ կրօնը մարդկային կեանքի խմտաբեր կր թիւրէ, գիտութիւնը այդ հիման վրայ բարձրացած՝ կրնայ գործադրութեան դնել միեւնոյն մտացածին գաղափարները:

203. — Արդի փիլիսոփայութիւնը միշտ հետեւած է կրօնէն գծուած առաջին ուղղութեան: Պղատոնի և անոր յաջորդներուն փիլիսոփայութիւնը հեթանոսական փիլիսոփայութիւն մըն էր, որ ինչպէս անհատին նոյնպէս և Տէրութեան մէջ խմբուած անհատներու ամբողջութեան համար կը փնտռէր մեծագոյն բարիքը ձեռք ձգելու միջոցները: Միջին դարուն, քրիստոնեայ եկեղեցւոյ փիլիսոփայութիւնը կեանքի նոյն հեթանոսական ըմբռնումներէն սերած՝ կը փնտռէր անհատին փրկութեան միջոցները, այսինքն ապագայ կեանքի մը մէջ անհատին համար մեծագոյն բարիքին ստացումը, և իր աստուածպետութեան փորձերուն մէջ միայն անիկա հասաւ ընկերական բարիքի կարգակերպութեանը: Հեկեյի փիլիսոփայութիւնը, ինչպէս Գոնդինը, իբրեւ հիմ ունի կրօնական, ընկերական և քաղաքական ըմբռնումներ միեւնոյն ատեն: Շորէնհաւրի և Հարթմանի յուետես փիլիսոփայութիւնը ուզեց թօթափել աշխարհի կրօնական ըմբռնումները, որոնք հրեաներէն կուգան մեղի, հակառակ ասոր, Պուտտայականութեան կրօնական սկզբունքներուն տեղի տուած է ան:

Միեւնոյն պատճառաբանութիւնը կը պատշաճի գրական գիտութեան, բառին անձուկ խմտաբեր:

204. — Գիտութիւնը, միասին առնելով փիլիսոփայութիւնը, չի կրնար մարդուն՝ անսահման տիեզերքի և անոր սկզբնապատճառին հետ ունեցած յարաբերութեան հիմերն որոշ ցոյց տալ, և ասիկա հետեւեալ պատճառով. ո՛րք է տեսակ փիլիսոփայութիւն կամ գիտութիւն երեւան ելլելէ առաջ, բա՛ն մը առանց որոհնարաւոր չէ մտքի գործունէութիւն մը, մարդու և տիեզերքի յարաբերութիւն մը գոյութիւն ունենալու էր:

Ինչպէս որ մարդ մը չի կրնար զինք շարժման մէջ զնոյ գիտի իրողութեան մը միջոցաւ և ինչ շարժում որ կ'ուզէ թո՛ղ ըլլո՛յ՝ գտնել այն ուղղութիւնը, որուն մէջ պարտի գործել, թէեւ ամէն շարժում անհրաժեշտաբար եղած ըլլայ այս կամ այն ուղղութեամբ, այնպէս ալ անկարելի է փիլիսոփայական զննութեան միջոցաւ կամ գիտական աշխատութեամբ գտնել այն ուղղութիւնը, որուն մէջ այդ աշխատութիւնը պարտի արդիւնաւորիլ: Արդ, բացարձակապէս պէտք է որ ամէն մտաւոր աշխատութիւն կատարուի նախապէս գծուած ուղղութեամբ մը: Կրօ՛նն է որ այս ուղղութիւնը միշտ ցոյց տուած է մտաւոր աշխատութեան:

205. — Նիւթապաշտութիւնը իր զարմանալի խանդավառ հաստատումներով թէ մարդը բնական ինքնօձայանում (processus) մըն է և ո՛չ աւելի, իրաւացի մէկ եւեւոյթն է այն վարդապետութեան, իորուն համաձայն այս աշխահի կեանքը անկեալ կեանք մըն է: Հոգեպաշտութիւնը իր համախոր գիտուններուն հետ լաւագոյն ապացոյցն է թէ փիլիսոփայական ու գիտական հայեցակէտը անկախ չէ, այլ հիմնուած է կրօնական վարդապետութեանը վրայ ա՛յն յաւիտենական

երանութեան, որ մարդուն բնական բաժինը պիտի ըլլայ :

206. — Ի բաց առեալ Սրինոզայի փիլիսոփայութիւնը. — թէեւ այս անձը քրիստոնեաներու թուին մէջ չեն հաշուեր — որուն սկզբունքները ճշմարտապէս քրիստոնէական են, ի բաց առեալ Քանդը, այն հանձարը՝ որ իր բարոյական իմաստասիրութիւնը յօրինած է առանց զայն բնագանցութեան հետ կապելու, միւս բոլոր փիլիսոփաները, հոյակապ Շորէնհաւըն անգամ, յայտնապէս կ'երեւի որ արուեստական կապ մը ունին իրենց բարոյական իմաստասիրութեան ու բնագանցութեան միջեւ :

207. — Բարոյականը շի կրնար անկախ ըլլալ կրօնէն, քանի որ ան ո՛չ միայն կրօնի (այսինքն մարդուն և Տիեզերքի յարաբերութեան) հետեւութիւնն է, այլ կրօնի մէջ խառնուած կը գտնուի,

208. — Նիէց անհերքելի է, երբ կը հաստատէ որ բարոյականի բոլոր կանոնները դիտուած՝ ներկայ ժամանակի ո՛չ քրիստոնէական փիլիսոփայութեան հայեցակէտէն, միայն ստութիւն ու կեղծաւորութիւն են և թէ մարդու մը համար շատ աւելի նպաստաւոր, շատ աւելի հաճելի և բանաւոր է հիմնել «Uebersmenschen»^(*) ընկերութիւն մը, անոր մասնակցելու համար, քան թէ պատկանիլ ամբոխին, որ պարտի իբր պատուանդան ծառայել անոր :

(*) Գերմարդկային

209.— Տգէտ ժողովուրդը կ'ուզէ ուսանիլ, լուսաւորեալ դաստիարակը կ'ուզէ ուսուցանել ժողովուրդին, սակայն ժողովուրդը ակամայ և ստիպեալ կը համակերպի ուսման: Փիլիսոփայութեան, փորձառութեան և պատմութեան մէջ փնտռելով պատճառները, որոնք ուսումը մաստիարարող դաստիարակին պիտի տային զայն հարկադրելու իրաւունքը, կը հաստատենք որ մարդկութեան ըզձանքները կը ձգտին միշտ ժողովրդեան թողելու ուսման խնդրոյն մէջ իր ամբողջ ազատութիւնը:

210.— Կեանքի ինքնաբեր ուսումը և վարժարանի ծրագրուած ուսումը միշտ քալած են ու կը քալենքովէ քով, մէկզմէկ ամբողջացնելով:

211.— Փիլիսոփայական ու գիտական ծանօթութիւնները մարդուն անհրաժեշտ չեն ճանչնալու համար իր յարաբերութիւնները Տիեզերքին հետ, որ զինք կը շրջապատէ, կամ, նոյնիսկ այդ տեեզերքի սկզբնապատճառին հետ: Ծանօթութիւններով ծանրաբեռնուած միտք մը ինքզինք խափանուած կը գտնէ այդ բանին մէջ աւելի արգելք մը կայ: Ի՛նչ որ կարեւոր է միայն, նոյնիսկ վայրկենապէս, աշխարհի ունայնութիւններէն հրաժարումն է, մարդուն ոչնչութեան գիտակցութիւնն է նիւթի հայեցակէտով և արդարութեան զգացումն է:

Եյո պատճառաւ շատ անգամ կը տեսնենք որ ամէնէն միամիտ, ամէնէն քիչ ուսեալ ու զարգացած անձեր գիւրաւ կ'ընդունին՝ ըրածնին գիտնալով և մտքի ամբողջ պայծառութիւնով՝ ամենաբարձր կեանքի զաղափարը, մինչ ամէնէն գիտուն ու զարգա-

ցած մարդիկ կը շարունակեն ծնգիլ ամենակոշտ հեթանոսութեան մէջ։ Այսպէս կը տեսնենք մէկ կողմէ այնպիսիներ, որոնք հասնելով մտաւոր ամենանուրբ զարգացման՝ կեանքի իմաստը կը դնեն անձնական վայելքի մէջ, ինչպէս Շորէնհաւը, այս մտաւորականութիւնը, ամէնուէն մէջէն այս զարգացած միտքը, և կամ, ինչպէս որ են ամէնէն լուսաւորեալ եպիսկոպոսները՝ զո՛րոզութեանց և թողութեան միջոցաւ հոգւոյ փրկութեան պարագային։ Մինչ միւս կողմէ ոռւս աղանդաւորը, այս գլխաւորն որ կիսով չափ միայն կարգալ ու գրել գիտէ, այդ մասին մտածումի առանց ո՛ր և է ձիգ ընելու համախորհուրդ կը գտնուի աշխարհի ամենամեծ իմաստուններուն՝ էրիկթէթի մը, կամ, Սենեկայի մը հետ, կեանքի իմաստը գտնելու համար։

212.— Չիկայ մարդ մը որ ճշմարիտ կրօնագիտութեան էութեան, բարոյականութեան, կեանքի հարցերուն վրայ աւելի շփոթ գաղափար ունենայ, որչափ գիտութեան մարդը։ Եւ դեռ տարօրինակ իրողութիւն մըն ալ կայ, մամանակակից գիտութիւնը, որ դրականօրէն այնչափ մեծ յառաջգիտութիւն ընել տուաւ իրին յատուկ կալուածին մէջ (այն ամէն ուսումը, որ կը պատկանի նիւթական աշխարհի), ո՛չ մէկ տեղ նոյնիսկ մարդկային կեանքի պատկանած մասերուն մէջ մեզ անհրաժեշտ կը թուի, կամ, կ'երևուի մեզ իբր վնասակար հետեւանքներ առաջ բերող։

213.— Այն բարեմասնութիւնները, որոնք կարգ մը մարդիկ ուրիշներէն աւելի ատակ կը դարձնեն ծագող ճշմարտութիւնը ցոլացնելու, մտքի գործօն ձիւր-

քեր չեն, այլ հակառակը այնպիսի ձիրքեր, որոնք քիչ անգամ կ'ընկերանան մեծ մաքի մը, խուզարկու մաքի մը: Անոնք սրտի կրտսորական ձիրքեր են՝ հրաժարում աշխարհի ունայնութիւններէն, նիւթի հայեցակէտով իր անձին ոչնչութեան գիտակցութիւն, արդարութեան զգացում: Կը տեսնենք թէ կրօնի հիմնագիրներուն մէջ ո՛չ ոք չէ գառորոշուած իր փիլիսոփայական կամ գիտական ծանօթութիւններով:

214. — Հասարակ մարդը, այսինքն, առանց գառախարակութեան կարծուած մարդը ամբողջ կեանքին մէջ զբազո՞ծ նիւթական աշխատութեամբ, չ'ապականեր իր բանականութիւնը, այլ կը պահէ զայն իր ամբողջ ուժին և անարատութեանը մէջ: Ընդհակառակը կը մտնուէ իր բանականութիւնը ս'յն մարդը, որ իր ամբողջ կեանքը խոխլով կ'անցնէ ո՛չ միայն անիմատ ու ջնջին, այլ այնպիսի նիւթերու վրայ, զորս մտածումի առարկայ ընել մարդուն համար բնական չէ: Այդ կարգի մարդոց բանականութիւնն այլ եւս ազատ չէ:

215. — Մտացի համարուած մարդոց մեծամասնութիւնը և նոյնիսկ անոնք որ մտացի են իրօք, որ փիլիսոփայական ամենանրբին հայեցողութիւնները հասկրնալու կարող են, քիչ անգամ կրնան տարրական ու քացայայտ ճշմարտութիւն մը ըմբռնել:

216. — Քաղաքակրթեալ մարդուն որոշիչ հանգամանքն է հնազանդիլ մարդոց մեծագոյն մասին կողմէ անարդար, այսինքն, գիտակցութեան հակառակ նկատուածին:

217.— Ենթադրենք թէ մեր դարու յառաջդիմութիւններն իրաւամբ շատ մեծ, հրաշագործ են, ևնթադրենք թէ շատ երջանիկ մահկանացուներենք և թէ արտակարգ շրջանի մը մէջ կ'ապրինք, սակայն փորձենք այս յառաջդիմութիւններուն արժէքը ճանչնալ: Արդարեւ անոնց ամէնն ալ խիստ հիանալի են, բայց ձախող դիպուածով մը, զոր գիտուններն իրենք իսկ կը հաստատեն, այս յառաջդիմութիւնները մինչեւ հիմա չեն բարեկալած, այլ ծանրացուցած են մեծամասնութեան, այսինքն, աշխատաւորին կացութիւնը:

Եթէ աշխատաւորը, փոխանակ հետիտան երթալու, կարենայ շոգեկառք նստիլ, այդ շոգեկառքը իր անտառն այրած, ցորենը իրմէ խլած և զինք գերութեան մօտ վիճակի մը մատնած է դրամատրէերու ծառայեցնելով: Եթէ շոգեչարժերու և մեքենաներու շնորհիւ աշխատաւորը կարենայ օժան գնել քիչ դիմացկուն հնդկտաւ մը, այդ մեքենաներն իր աշխատութեամբ վատրելուած դրամն իրմէ առած և զինք բացարձակ գերութեան դատապարտած են գործարանատէրերու ծառայեցնելով: Եթէ կան հեռաձայներ, հեռադէտներ, վէպեր, ներկայացումներ, պարահանդէսներ, համերգներ, նուաճախօգեր, նկարասրահներ ևլն. անոնցմով աշխատաւորին կեանքը չէ եղած լաւագոյն, որովհետեւ այս ամէնը՝ միեւնոյն ձախող դիպուածով՝ իրեն համար անմատչելի կը մնան:

Այսպէս, մինչեւ հիմա, ինչպէս որ գիտուն անձեր այս խնդրոյն մասին համաձայն են, այս բոլոր արտակարգ յառաջդիմութիւնները, այս բոլոր սքանչելիքները, վերջապէս, չեն բարեփոխած աշխատաւորին կեանքը, եթէ աւելի չեն վատթարացուցած:

218. — Գիտութիւնը չէ եղած և պիտի չըլլայ անկէ քանի ուսումը, ինչպէս որ այժմ այսպէս մտածելու միամտութիւնն ունին գիտուններ: Ասիկա արդէն անկարելի է, քանի որ հետազօտելի առարկանները քանակութեամբ անհատնում են: Գիտութիւնը միայն հետազօտելի երևոյթներու և բազմաթիւ առարկաներու մէջէն մէկ քանիններուն և անոնց պայմաններուն ուսումն է:

219. — Սահմանաւորին ու անսահմանին միջեւ գոյութիւն ունեցող հակասութիւնը վերցնել անհրաժեշտ ու թանկագին է: Ասիկա այնչափ կարեւոր է որչափ կեանքի իմաստին հարցին պատասխանը, որ ապրելու կարելիութիւնը կուտայ:

220. — Ճշմարտապէս օգտակար զարգացումը բնաւ պիտի չանհետանայ: Մարդիկ հողը ցլցերով քրքրելու և լուսաւորուելու համար սեռային ճրագներ վառելու պիտի չգտապարտուին: Արուեստագիտական յառաջդիմութիւնները, որոնք վշտագին գերութեան մը դնով իրականացած են, վերջապէս ժառանգուած պիտի մնան:

221. — Արուեստը մարդկային յառաջդիմութեան գործարաններէն մին է: Մարդ խօսքի միջոցաւ կը հազորդէ իր մտածումները, նկարներու միջոցաւ՝ իր զգացումները բոլոր մարդոց ո՛չ միայն ներկայի մէջ ապրող, այլ և անցեալին ու ապագային: Ասոնք մարդկութեան գոյութեան համար անհրաժեշտ երկու գործարաններ են, եթէ անոնցմէ մին աւրուի, ընկերութիւնը հիւանդ է: Այդ հիւանդութիւնը երկու հե-

տեւանք ունի, նախ գործարանի առողջ գործունէ-
ութեան բացակայութիւն և յետոյ վնասակար
գործունէութիւն:

222.— Արուեստի վերաբերեալ ամէն գործ առաջ
կը բերէ արուեստագիտական փոխանցում, կը հաս-
տատէ արուեստին ու հասարակութեան միջև տպա-
ւորութեան ներդաշնակութիւն մը: Արուեստը խօսքի
դերը կը կատարէ, մտածումը հաղորդելով՝ մարդոց
մէջ միութեան գծի պաշտօնը կը վարէ:

223.— Մարդիկ ամբողջ ժամեր կը մնան նուագա-
խումբի և թատերախաղի սրահներուն մէջ մտիկը-
նելով վակների նուագախաղերը կամ Իրաէնի, Մեթեր-
լինկի, Հոթմանի եղերերգութիւնները, Իրենց պարաս-
կանութիւն կը սեպեն Չալաի, Հիւսմանի, Պուրժէի,
Քիրլինկի վէպերը կարգաւ մինչև վերջը և ուշադրու-
թեամբ նկատի առնել այն պատկերները, որոնք ան-
հասկնալի բան մը կը ներկայացնեն, կամ հարիւր ան-
գամ կը կրկնեն միեւնոյն նիւթը, որպէսզի աւելի լաւ
տեսնեն իրաւամբ: Իրենց պարտականութիւն կը կար-
ծեն հիանալ այս բոլոր արտադրութիւններուն վրայ,
արուեստ կարծելով, և կ'անցնին առանց ամենադժուր
ուշադրութիւն դարձնելու նոյնիսկ արհամարանքով՝ ար-
ուեստագիտական ճշմարիտ ստեղծագործութիւններու
վրայէն, միակ սա՛ պատճառաւ որ անոնք չեն դատուած,
իրենց սահմանին մէջ, արուեստի գործերուն կարգը:

224.— Այն հաստատումը թէ արուեստը ճշմարիտ
կրնայ ըլլալ առանց հասկցուած ըլլալու մարդոց մե-

ծամասնութեան կողմէ՝ այնչափ սուտ է, իր հետեւութիւններն այնչափ զնատակար են նո՛յնիսկ արուեստին, և այս հաստատումը այնչափ ընդհանրացած, այնչափ խոր արմատ ձգած է մեր համոզումին մէջ որ մարդ պիտի չուզեր բնաւ պնդել անոր անհեթեթութեան վրայ:

225. — Հասարակ մարդը Աղեքսանդր Մակեդոնացւոյն կամ Նարոյէոնի մեծութիւնը կ'ըմբռնէ: Կ'ըմբռնէ որովհետեւ այս գիւցազներէն մին կա՛մ միւսը կրնար գինք ճզմել և իրեն հետ ուրիշ հազարաւորներ: Ա՛ն կ'ըմբռնէ Պուտոսայի, Սոկրատի, Քրիստոսի մեծութիւնը, որովհետեւ գիտէ ու կը զգայ որ ինք և ուրիշ մարդիկ պարտին անոնց պէս ըլլալ, սակայն պիտի չկրնայ երբէք հասկնալ թէ ինչո՛ւ համար մեծ է մարդ մը որ զգայնական սիրոյ վրայ ոտանաւորներ գրած է:

226. — Ի՛նչ որ հարուստ գասակարգէ մարդու մը հաճոյք կը կազմէ՝ անհասկնալի է գործաւորի մը և ո՛ր և է զգացում առաջ չի բերեր անոր մէջ, բայց եթէ գատարկասուն և զգայազիրիկ մարդու մը մէջ արթընցուցածին հակառակ զգացումը: Այսպէս, փառքի, հայրենասիրութեան, հեշտասիրութեան զգացումներ, որոնք արգիարուեստին գլխաւոր փառկաներն են, աշխատաւորին մէջ կը գրգռեն զարմացում, արհամարհանք կամ սրտմտութիւն:

227. — Խոհուն և անկեղծ մարդիկ չեն կրնար տարակուսիլ որ մեր բարձր գասակարգերու արուեստը բնաւ պիտի չըլլայ ամբողջ ժողովուրդինը:

228.— Փոխանակ ճշմարիտ արուեստի մասին սահման մը տալու և յետոյ որոշելու թէ գործը այս սահմանին մէջ կը մտնէ՝ թէ ո՛չ, նախ կարգ մը գործեր, որոնք այս կամ այն պատճառաւ հաճելի են մարդոց որոշ դասի մը, ընդունուած են արուեստագիտական, և յետոյ կը մտածուի արուեստի սահման մը տալ, որ կարենայ պատշաճիլ այս գործերուն: Արուեստի տեսութիւնը, բացատրուած՝ գեղագիտական երկերու մէջ և աղօտապէս ընդունուած հասարակութեան կողմէ, ուրիշ բան չէ եթէ ո՛չ իբր լաւ դաւանիլը այն բանին, որ հաճոյ կը թուի մարդոց սահմանափակ դասի մը:

229.— Ամէն խղճմիտ արուեստագէտ պարտի ապահով ըլլալ որ իր գործը գործնական, անվիճելի հանգամանք մը ունի, թէ ան իրաւամբ օգտակար ու լաւ է և ո՛չ թէ իր ապրած սահմանափակ շրջանակին մէջ հաստատութիւն գտած և ընդունուած գաղափարներու հետեւանօք:

230.— Մարդոց գոյութիւն ունենալէն ի վեր, թրթռուն հոգիներ մարդուն երջանկութեան ու վախճանակէտին խնդրով ոգեւորեալ, սաղմոսարանի և քնարի վրայ, խօսքով ու պատկերով, արտայայտած են իրենց պայքարն ու մարդկային պայքարը ստութիւններու դէմ, որոնք զիրենք կը մոլորեցնէին իրենց ճշմարիտ կոչումէն, յայտնած են իրենց տառապանքը այս պայքարին մէջ և իրենց յոյսերը՝ երբ բարութեամբ կը յաղթանակէին, իրենց յուսահատութիւնը՝ երբ չարը կը յաղթանակէր և իրենց հոգեղմայլումը մօտալուտ զգալով բարիին վերջնական յաղթանակը:

Մարդոց գոյութիւն ունենալէն ի վեր, իսկական

արուեստը՝ իրենցմէ բարձրաձայն գնահատուած՝ ուրիշ բան չէր, եթէ ոչ մարդուն վախճանակէտին ու ճշմարիտ բարիին հետախուզութիւնը:

Այսօր արուեստը արհեստ մը եղած է, որ մարդոց կը հայթայթէ հաճելի զգայութիւններ և իբր այդ ձակատագրականօրէն կը խառնուի պարագրական (choregraphique), խոհարարական, վարսայարգարական արհեստներուն հետ, զորս գիտցողներ մեր ժամանակի բանաստեղծներուն, նկարիչներուն և նուագածուներուն պէս միեւնոյն տիազոսով արուեստագէտ կը կոչուին:

231. — Ո՛չ միայն անյայտը, առեղծուածայինը, մթինը, սամկին համար անըմբռնելին, այլ և ոճի անճշդութիւնը, անորոշութիւնը, թերութիւնը եղած են ամէն անկապտա զործի համար բանաստեղծական ներգաշնակութեան և արժանիքի պայման մը:

232. — Նկարիչը իր մեծ գործերուն յօրինումին համար պէտք ունի աշխատանոցի մը, այնպէս որ քառասնեակ մը գործաւորներ, ատաղձագործներ կամ հօշկահարներ իրենց նիւղներուն մէջ սառած կամ շնչահեղձ՝ հո՛ն պիտի կրնային հանգիստ աշխատիլ: Եւ դեռ այս քիչ է, անիկա պէտք ունի բնութեան, հապուտի, ճամբորդութեան, օրինակներու: Միլիոններ կը ծախսուին արուեստներու քաջալերութեան համար, և այս արուեստներու արտադրութիւնը ո՛չ գիւրամատչելի և ոչ ալ կարելոր են ժողովրդեան:

Նուագածուներ իրենց մեծ գաղափարներն արտայայտելու համար պէտք ունին ճերմակ փողկապով կամ միաձեւ հագուստով երկու հարիւր մարդ ի մի հաւա-

քելու, և նուազախօսողի մը ներկայացուովը հարիւր հազարաւոր բուպլիներու կը նստի: Այս արուեստին արդիւնքը, ենթագրելով թէ ժողովուրդը կարենայ վայելել, առաջ կը բերէ միայն նեղութիւն ու ձանձրոյթ:

233. — Իմ բարեկամներէս մին քննադատներու և արուեստագէտներու միջեւ գոյութիւն ունեցող յարաբերութիւնը ցոյց տալ ուղեւով՝ զուարճաբանօթէն սապէս սահման մը տուած է. «Քննադատները յիմարներ են, որոնք խելացի կ'ընդունին մարդիկ»: Որչափ ալ սահմանափակ, անձիշդ կամ ծայրայեղ ըլլայ այս սահմանումը, կը պարունակէ ճշմարտութեան մաս մը, և շատ աւելի ձիշդ է քան այն հաստատումը, որուն համեմատ քննադատներ մեզ կը բացատրեն իբր թէ արուեստի գործերը:

234. — Չիկայ երբէք գեղեցկութեան առարկայական սահման:

235. — Բացարձակ գեղեցկութիւնը սահմանելու համար եղած բոլոր փորձերը, ըլլայ ա'ն բնութեան հետեւութիւն, ըլլայ մասերու միջեւ եղած համաձայնութիւն, համաչափութիւն, ներդաշնակութիւն, պէսպիսութեան միութիւն ևլն., կա'մ բան մը չեն սահմաներ, կա'մ, կարգ մը գործերու մի քանի նկարագիրը միայն կը սահմանեն, և հեռի են ըմբռնելէ ի'նչ որ իւրաքանչիւր ոք համարած է և կը համարի իրբեւ արուեստ:

236. — Մարդ առանց նեղութիւն կրելու կրնայ ուսուցանել թէ աշխարհի մէջ որքան զատկածճի կայ:

կրնայ քննել արեւուն բիծերը : գրել վէպեր ու նուազախոզեր , սակայն չի կրնար առանց անձնուրացութեան սորվեցնել մարդոց իրենց ճշմարտ բարիքը , ինքնազրկումը , մերձաւորին հանդէպ անձնուիրութիւնը :

237. — Չի կրնար ըլլալ լաւ սնուցուած , գէր , ինքնազոհ խորհոց և արուեստագէտ : Հագեկան գործունէութիւնը և անոր՝ ուրիշներու էապէս կարեւոր՝ արտայայտումը կը կազմէ մարդուն ամէնէն ծանր պաշտօնը՝ խաչը՝ ինչպէս որ բուսած է Աւետարանի մէջ . Եւ իրական կոչման անտարակուսելի միակ նշանն է անձնուրացութիւնը , անձնազոհութիւնը յայտնելու համար այն ուժը , որ տրուած է մարդուն՝ ուրիշին օգտին ծառայեցընելու նպատակաւ : Առանց ճիշդի չի կազմուիր հոգւոյն այդ պատուը :

238. — Ապագայ արուեստագէտը ամէնուն առհասարակ եզոց կեանքը պիտի ապրի ապահովելով իր գոյութիւնը մի քանի աշխատութեամբ : Գալով մտքի բարձրագոյն ձիրքերու արտադրութեանց՝ պիտի ջանայ դանսնը կարելի եղածին չափ բազմաթիւ մարդոց ճանչցնել , սրովհետեւ իր կրած զգացումներուն այս փոխանցումին մէջ է որ կը պոնուին իր վարձատրութիւնն ու ուրախութիւնը : Ապագայ արուեստագէտը նոյնիսկ պիտի չհասկնայ թէ ինչպէս կրնայ ծախուիլ գործ մը , քանի որ միակ գոհունակութիւնը պիտի ըլլայ ընդհանրացնել դայն որչափ որ կարելի է :

239. — Յորչափ վաճառողները տաճարէն շարտաքսուին , արուեստի տաճարը ոչ մէկուն պիտի ըլլայ :

240.— Արուեստը պարտի հաղորդել ամէնուն մատչելի եղբայրութեան և սիրոյ զգացումներ, զորս կը կրեն այսօր մի քանիներ:

Ը.

ԱՆՁՆԻՇԻԱՆՈՒԹԻՒՆԸ

241.— Անկարելի է որ մարդ մը ողջ լինի և զըրկըւած ըլլայ իր անձնիշխանութենէն:

242.— «Չիկայ՝ հոգի, կը հաւաստեն բնապաշտներ, չիկայ՝ անձնիշխանութիւն, որովհետեւ կեանքը կ'արտայայտուի միաններու շարժումով, և թէ միաններու այս շարժումը առաջ կուգայ ջիղերու գործունէութեամբ: Չիկայ հոգի, չիկայ անձնիշխանութիւն, որովհետեւ կապիկներէ սերած ենք:»

Բայրը կրօնները, բոլոր խորհողները ո՛չ միայն ճանչցած են, այլ բնաւ փորձած չեն ուրանալ պէտքի այս օրէնքը, զոր մեր ժամանակակիցներ այնչափ նեղութիւն կը կրեն սպացուցանելու իրենց օգնութեան կանչելով համեմատական բնաստութիւնն ու կենդանարանութիւնը:

Այն իրողութիւնը թէ փորձառական տեսակէտով քանակութիւնն ու կամքը ուղեղի արտավիժումներ են միայն, և թէ մարդը անորոշ դարաշրջանի մը մէջ ստորին գործարանաւորութիւններէ յառաջացած է, կը ծառայէ միայն արդէն հաղարաւոր տարիներ առաջ ճանչ-

ցըւած նշմարութիւն մը լուսաւորելու նոր լոյսով մը, այսինքն թէ մարդ պէտքի օրէնքին հպատակ է : Այս իրողութիւնը սակայն ո՛չ մէկ բանով առաջ կը տանի անձնիշխանութեան հարցին լուծումը, որ շուրջ հակառակ երես մը ունի, և որ հիմնուած է ազատութեան գիտակցութեան վրայ :

243.— Այն հարցը թէ մարդուն ազատութեան գիտակցութիւնը ի՞նչպէս կրնայ հաշտուիլ պէտքի օրէնքին հետ, որուն մարդ հպատակ է, չի կրնար լուծուիլ համեմատական բնախօսութեամբ ու կենդանաբանութեամբ, վասնզի գորտին, ճագարին կամ կապիկին մէջ կը տեսնեն միայն մկանաջղային գործունէութիւն, մինչդեռ մարդուն մէջ այս գործունէութեան քով կը տեսնենք գիտակցութիւնը :

244.— Եթէ մարդը նկատողութեան առնկնք, պայմանաւ որ մենք գանուինք աստուածաբանական, պատմական, բարոյագիտական կամ փիլիսոփայական հայեցակէտի աստիճանին վրայ, պիտի տեսնենք զմեզ պէտքի ախտերական օրէնքին առջեւ, որուն հպատակ է, ինչպէս ամէն գոյութիւն ունեցող բան :

Սակայն, եթէ մարդը նկատողութեան առնկնք իրրեւ բան մը, որուն գիտակցութիւնն ունինք, մենք զմեզ ազատ կը զգանք :

245.— Փորձառութեանց և արամաբանութեանց շարք մը ամէն մարդկային արարածի կ'ապացուցանէ թէ ինք իրր գննութեան առարկայ հպատակ է օրէնքներու, և մարդ կ'ընդունի այս օրէնքները, երբէք

տեսնուած էէ որ ան ծանրականութեան՝ կամ անթափանցութեան օրէնքին դէմ կռուի երբոր զանոնք ճանչցած է :

Սակայն փորձառութեանց ու տրամաբանութեանց այս միեւնոյն շարքը անոր կ'ապացուցանէ թէ ինք իր մէջ իմացած ամբողջ ազատութիւնը անկարելի է, թէ իր գործերուն ամէն մէկը կախում ունի իր կազմաւորութենէն, իր խառնուածքէն և ուրիշ ազդեցութիւններէ : սակայն մարդ ինչինք բնաւ չ'ենթարկեր այս հետեւութիւններուն :

Փորձառութիւնն ու տրամաբանութիւնը ապացուցած ըլլալով՝ անոր թէ քար մը միշտ գետին կ'իյնայ, մարդ այս օրէնքը անսխալ կը գտնէ և անոր գործադրութեանը կը սպասէ միշտ :

Սակայն միեւնոյն՝ կերպով թէեւ սորված է թէ իր կամքը օրէնքներու ենթակայ է, երբէք չի հաւատարատոր և չի կրնար հաւատալ :

246. — Զի մը ուրիշ ձիերու հետ կառքի մը լըծուած պարագային կառքին առջևէն չքաշելու ազատութիւնը չունի : Եթէ չքաշէ, կառքը անոր կը բաղխի, և ինք ստիպուած պիտի ըլլայ յառաջանալու : Բայց, հակառակ այս սահմանափակ ազատութեան, ազատ է կառքը քաշելու կամ անկէ մղուելու : Այսպէս ալ մարդը :

247. — Կ'ըսէք ինձ թէ ազատ չեմ, և ես ամբողջ պատասխանի մը փոխարէն թեւս վեր կը բարձրացունեմ ու վար կ'առնեմ :

Ամէն մարդ պիտի հասկնայ որ այս անտրամաբան պատասխանը իմ ազատութեանս անժխտելի ապա-

ցոյցն է: Անիկա արտայայտութիւնն է նոյնիսկ իմ գիտակցութեանս, որ բանականութեան չ'ենթարկուի:

248. — Ինքնագիտակցութիւնը իր անձին ճանաչողութեան ազրիւրն է բանականութենէ թուրքովին անկախ:

249. — Եթէ ազատութեան գիտակցութիւնը ինքնին բանականութենէ անջատ ու անկախ գիտակցութեան ազրիւր մը չ'ըլլար, անիկա պիտի հպատակէր բանականութեան և փորձառութեան, բայց իրականին մէջ այս հպատակութիւնը զոյութիւնն չ'ունի և նոյնիսկ չի կրնար ըմբռնուիլ:

250. — Մէկ մարդու կամ շատերու մասին մեր կայմած գաղափարն ինչ որ ալ ըլլայ, չ'ենք կրնար անոնց գործերն ուրիշ կերպով ընդունիլ, եթէ ո՛չ մասամբ մարդուն անձնիշխանութենէն և մասամբ պէտքի օրէնքներէն արտագրուած:

251. — Ամէն մարդ, խորհողն ինչպէս վայրենին, թէեւ փորձառութիւնն ու արամաբանութիւնը ապացուցած են անոր որ անկարելի է միեւնոյն պայմաններու մէջ երկու տարբեր գործողութիւններ ներկայանան, կը զգայ այսուհանդերձ որ եթէ չհաւատայ այն կարելիութեան (որ անձնիշխանութեան էութիւնն է), պիտի չկրնայ բնաւ հաւատալ ապրելու կարելիութեան:

Թէեւ տախի անկարելի կը թուի, կը զգայ սակայն որ այնպէս է, վասն զի եթէ չընդունէր անձնիշխանութիւնը, ոչ միայն կեանքը պիտի չհասկնար, այլ պիտի չկրնար ապրիլ վայրկեան մ'իսկ:

252.— Ազատութեան ու պէտքի մասին կազմած դադափարնիս կը նուազի կամ կ'աւելնայ, ցորչափ կը սորվինք ճանչնալ այն յարաբերութիւնը, որուն մէջ կը գտնուի դիտուած եղելութիւնը արտաքին աշխարհի նկատմամբ, աւելի կամ նուազ հեռացած ժամանակի համեմատութեամբ, ուր եղելութիւնը տեղի կ'ունենայ, և զայն արտադրող պատճառներու հանդամանաց համեմատութեամբ:

253.— Որպէսզի կարենանք մարդը ներկայացնել քացարձակապէս ազատ, պէտք է որ զայն ներկայացնենք մեկուսացած և միջոցի, ժամանակի ու պատճառականութեան դուրս:

Որպէսզի կարենանք մարդուն գործերը ներկայացնել միմիայն պէտքի օրէնքին ենթարկուած, առանց ո՛ր և է ազատութեան, պարտինք ընդունիլ միջոցի անսահման թուով պայմաններու ճանաչումը, ժամանակի անհուն շրջան մը և պատճառներու անվերջ շարք մը:

Առաջին պարագային՝ պիտի հասնէինք ազատութեան միջոցէ, ժամանակէ և պատճառականութենէ դուրս, որ նոյնիսկ այս պատճառաւ պիտի ըլլար անձեւ պարունակութիւն մը:

Երկրորդ պարագային եթէ պէտքը առանց ո՛ր և է ազատութեան կարելի ըլլար, պիտի յաջողէինք սահմանել պէտքի օրէնքը նոյնիսկ այս պէտքի միջոցաւ, այլապէս ըսած՝ պիտի ունենայինք ձեւ մը առանց պարունակութեան:

Այսպէս, պիտի հասնէինք այն երկու հիմերուն, որոնք կը պարփակեն ամէն յղացում, զոր մարդ կ'ունենայ աշխարհի մասին, պիտի հասնէինք կեանքի

անթափանցելի էութեան և այն օրէնքներու, որոնք կը սահմանեն կեանքի այս էութիւնը:

Տրամարանութիւնը կ'արտայայտէ պէտքի օրէնքները:

Գիտակցութիւնը կ'արտայայտէ անձնիշխանութեան էութիւնը:

Ազատութիւնը ա՛յն է որ կը զննուի:

Պէտքը ա՛յն է որ կը զննէ:

Ազատութիւնը պարունականութիւնն է:

Պէտքը ձեւն է:

Երբ ճանաչումի երկու աղբիւրները կը բաժնենք, որոնք իբրեւ ձեւ ու պարունակութիւն իրարու կը վերարերին, կ'ունենանք ազատութեան գաղափարը և պէտքի գաղափարը, որոնք զիրար կը վանեն և որոնք անհասկնալի են:

Բայց երբ այս երկու գաղափարները կը միացնենք, զանոնք միասին նկատելու համար, իսկոյն կ'ունենանք խիստ սրայծառ ըմբռնում մը մարդու կեանքի մասին:

254.— Արդի տեսութեան համաձայն, կեղծաւորութեան համար կարեւոր, մարդը ազատ չէ և չի կրնար փոխել իր կեանքը: Այսպէս ըսելու իրաւունք պիտի ունենային, եթէ մարդը անգիտակից արարած մ'ըլլար և բարոյականի վերին աստիճանները բարձրանալու անկարող՝ ճշմարտութիւնը ճանչնալէ վերջ: Սակայն մարդը, ընդհակառակը, գիտակից արարած մըն է և հակառակ ամէն բանի՝ կը բարձրանայ հետզհետէ գէպի ճշմարտութիւն: Ճշմարտութիւն մը ճանչնալը կամ չճանչնալը կախում ունի ո՛չ թէ արտաքին պատճառներէ, այլ նոյնիսկ մարդուն գիտակցութենէն: Այնպէս որ՝ երբեմն ճշմարտութիւնը ճանչնալու ամէնէն նը-

պատուաւոր արտաքին պայմաններուն մէջ, կան մարդիկ որ չեն ճանչնար զայն, և ուրիշներ կան, հակառակը, որոնք ամէնէն աննպատակ պայմաններու մէջ առանց յայտնի շարժառիթներու՝ զայն կը ճանչնան: Մարդ թո՛ղ ուտէ կամ չուտէ, թո՛ղ աշխատի կամ հանգչի, վըտանդէն խոյս տայ կամ զայն փնտռէ, եթէ գիտակից է, անոր համեմատ կը վարուի, որովհետեւ ա՛յդպէս վարուիլը բանաւոր կը գտնէ, որովհետեւ կը ճանչնայ որ ճշմարտութիւնը այնպէս վարուիլ ցոյց կուտայ իրեն և ո՛չ ուրիշ կերպ: Այն մարդը որ իր գործերուն մէջ ազատ չէ, միշտ ազատ կը զգայ ինքզինքը ա՛յն բանին մէջ որ իր գործերուն պատճառն է, ճշմարտութեան ճանաչումին կամ ոչ-ճանաչումին մէջ:

255. — Մարդը ազատ չէ, եթէ զայն ընդունինք անշարժ, եթէ մոռնանք որ մարդկութեան կեանքը մթութենէ դէպի լոյս, ստորին ճշմարտութենէ դէպի բարձրագոյն ճշմարտութիւն, սխալով խառն ճշմարտութենէ դէպի մաքուր ճշմարտութիւն մը շարժում մըն է անդադար:

256. — Մարդոց բոլոր վերըգձանքները, ապրելու համար ունեցած բոլոր պատճառները, իրականին մէջ, կը ձգտին իրենց գործունէութեան ազատութիւնն աւելցնելու:

Հարստութիւնն ու թշուառութիւնը, փառքն ու անչքութիւնը, իշխանութիւնն ու հպատակութիւնը, զօրութիւնն ու տկարութիւնը, առողջութիւնն ու հիւանդութիւնը, գիտութիւնն ու անգիտութիւնը, աշխատութիւնն ու հաճոյքը, կշտացումն ու անօթութիւնը,

առաքինութիւնն ու մարտիւնը ազատութեան աւելի կամ նուազ բարձր աստիճաններ են :

257. — Անտեսանելի ճշմարտութիւններ կան, որոնք մատարական մարդուն համար տակաւին յայտնըւած չեն, կան արգէն ապրած, իւրացուած և մարդուն կողմէ մոռցուած ուրիշ ճշմարտութիւններ, նաև կան կարգ մը ճշմարտութիւններ, որոնք անոր բանականութեան լոյսին առջև կը յայտնուին, և զորս ճանչնալ չի կրնար: Այս ճշմարտութիւնները ճանչնալէն կամ ճանչնողէն է որ առաջ կուգայ ինչ որ մենք ազատութիւն կ'անուանենք :

258. — Անասուններու, բոյսերու և իրերու գոյութեան մէջ տիրող օրէնքներու ուսումը ո՛չ միայն օգտակար, այլ անհրաժեշտ է մարդկային կեանքի օրէնքը բացատրելու համար, պայմանաւ որ այդ ուսումը իրր նպատակ ունենայ մարդկային գիտութեան գլխաւոր աւարկան, այսինքն, բանականութեան օրէնքին բացատրութիւնը :

259. — Ճանչնալ կը նշանակէ կեանքի էութիւնը վերածել բանականութեան օրէնքներուն :

260. — Եթէ բանականութիւնը չըլլար, կեանք պիտի չգտնուէր :

261. — Բանականութիւնը չի կրնար սահմանուիլ, և մենք պէտք չունինք սահմանելու, զասնզի ո՛չ միայն ամէնքս կը ճանչնանք զայն, այլ զանիկա միայն կը

ճանչնանք: Մէկզմէ՛լու հետ ունեցած մեր յարաբե-
րութիւններուն մէջ նախապէս համոզուած ենք որ ու-
րիշ ամէն բանէ աւելի բանականութիւնը մեզ ամէ-
նուս համար հաւասարապէս անհրաժեշտ է: Ամէնքս
համոզուած ենք որ բանականութիւնը բոլոր կենդանի
էակներու միութեան միակ խարխոխն է: Բանականու-
թեանէ զատ ուրիշ ո՛ր է բան չկայ որ այնչափ ստուգու-
թիւնով ճանչնանք: Այս ճանաչումը միւս բոլոր ճանա-
չումներէն առաջ է, այնպէս որ աշխարհի մէջ ի՛նչ որ
կը ճանչնանք բանականութեան օրէնքներու հանգիստու-
թեան զօրութեամբ միայն կը ճանչնանք, այն օրէնք-
ներու, որոնք մեզի ծանօթ են աներկբայօրէն:

Կը ճանչնանք բանականութիւնը և շինք կրնար
անգիտանալ, վասնզի բանականութիւնը ա՛յն օրէնքն
է, որուն համաձայն պարտին ստիպեալ ապրիլ բանա-
կան էակները, այսինքն, մարդիկ: Բանականութիւնը
ա՛յն օրէնքն է, որ կ'իշխէ մարդուն կեանքին վրայ: Օրէնք
մըն է նման անոնց, որոնք կ'իշխեն անասունին
աննպաստութեան և ծնունդին, խտախն ու ծառին աճու-
մին ու ծաղկումին, երկրին ու աստղերուն շարժումին
մէջ: Այն օրէնքը, զոր մեր մէջ կը զգանք, որ գի-
տենք թէ մեր կեանքի օրէնքն է, ա՛հա ա՛յդ օրէնքն
է որ աշխարհի բոլոր արտաքին երեւոյթներուն վրայ
կ'իշխէ: Միակ տարբերութիւնը սա՛ է որ մեր մէջ
զայն կը համարինք այնպիսի օրէնք մը, որուն պար-
տինք հպատակիլ, մինչդեռ արտաքին երեւոյթներուն
մէջ զայն կը նկատենք այնպիսի օրէնք մը, որ կը
գործէ առանց մեր մասնակցութեան: Աշխարհի մա-
սին մեր ունեցած բոլոր ճանաչողութիւնը կ'ամփոփուի
այս հպատակութեանը մէջ բանականութեան օրէնքի
առջեւ, որուն արտայայտութիւնը կը տեսնենք մեզմէ

գուրս երկնային մարմիններու մէջ, անասուններուն, բոյսերուն, ամբողջ տիեզերքին մէջ: Արտաքին աշխարհի մէջ կը տեսնենք բանականութեան առջեւ եղած այս հպատակութիւնը. մեր մէջ կը ճանչնանք զան իբր այնպիսի օրէնք մը, զոր պարտինք գործադրել:

262.— Մարդոց սխալը սովորաբար կը գտնուի սա՛ կէտին մէջ որ մարդկային կեանքը կը համարին հպատակութիւն մը իրենց մարմնոյն օրէնքին առջեւ, տեսանելի հպատակութիւն մը որ սակայն մեր կողմէ առաջ չի դար, վասնզի մեր մարմնոյն այս օրէնքը իբր մէջ կը գործադրուի այնպիսի անգիտակից եղանակաւ մը, ինչպէս որ կը պատահի ծառին, հանքին ու երկնային մարմնոյ մը մէջ: Բայց մեր կեանքի օրէնքը, այսինքն, մեր մարմնոյն հպատակութիւնը բանականութեան առջեւ՝ օրէնք մըն է որ անտեսանելի է. չենք կրնար տեսնել, որովհետեւ տակաւին գործադրուած չմնցած չէ, այլ մեր կեանքի մէջ գործադրուելու վրայ է: Այս օրէնքի գործադրումին մէջ, այսինքն, բարին ձեռք ձգելու համար բանականութեան օրէնքի առջեւ մեր կենդանական բնութեան հպատակութեան մէջ է որ կը գտնուի մեր կեանքը: Երբ չհասնանք որ մեր բարիքն ու կեանքը կը կայանան մեր անստանական անհատականութեան հպատակութեանը մէջ բանականութեան օրէնքի առջեւ, երբ մեր կեանքը կը կայայնենք այս անհատականութեան գոյութեան ու բարիքին մէջ, երբ կը հեռանանք մեզ սահմանուած աշխատանքէն, զրկուած ենք մեր ճշմարիտ բարիքէն ու ճշմարիտ կեանքէն և անոր տեղ դրած՝ մեր անստանական ազդեցութեան տեսանելի գոյութիւնը, որ մեզմէ անկախ կը գործէ և հետեւաբար պիտի չկրնայ ըլլալ մեր կեանքը:

263. — Այն մարդիկ, որոնք իրենք զիրենք նիւթագալտ կը կարծեն, իրենց եւը մարմիննուն գիտակցութիւնը համարելու այնպէս վարժուած են որ երբէք մտքերնուն չեն անցներ այս հաւաստիքին ճշդութիւնը ստուգել:

264. — Յոռետես փիլիսոփայութեան և անձնասպան եղողներու մեծագոյն մասին տրամաբանութիւնն է. «Անասնական ես մըն եմ, որ կեանքի կը տենչայ: Այս եւը, իր տենչերով, գո՛ չի կրնար ըլլալ: Ասկէ զատ, խորհող ես մըն եմ, որ կեանքի ո՛չ մէկ տենչ ունի, որ կը շատանայ քննադատօրէն դիտելով կեանքի ունայն ուրախութիւններն ու անասնական եսիս կիրքերը, և զանոնք աճրողջովին կը մերժէ»

«Եթէ առաջին եսիս յանձնուիմ, կը տեսնեմ որ հակաբանական կեանք մը կը վարեմ, դէպի շար: Կը տարուիմ, որուն մէջ հետզհետէ աւելի խորը կ'ընկերմիմ: Եթէ երկրորդին՝ քանական եսիս յանձնուիմ, իմ մէջս կեանքի տենչ չի մնար: Կը տեսնեմ որ անհեթեթ ու անկարելի է ապրիլ միմիայն ձեռք ձգելու հանար ինչ որ կը փափաքիմ, այսինքն անհատականութեանս երջանկութիւնը: Թերեւս կարելի պիտի ըլլայ խոհուն գիտակցութեան համար ապրիլ, բայց ատ ալ անօգուտ է և չ'արժեր ապրելու նեղութիւնը: Ինչ՞ օգուտ ունի սկզբնապատճառին՝ Աստուծոյ ծառայել, ուկէ կը բղխիմ: Աստուած, եթէ կայ, առանց ինձի բաւական ծառայողներ ունի, ինչո՞ւ պիտի ծառայեմ անոր»

«Կեանքի այս խաղը կարելի է դիտել, ցորչափ մարդ չի ձանձրանար: Չանձրացածին պէս կրնայ երթալ ինքնասպան ըլլալ: Ահա ի՛նչ որ կ'ընեմ»

Ամենապարզ ձևին տակ այսպէս է կեանքին ըմբռնումը, զոր մարդկութիւնը Սողոմոնէն, Պուտայէն առաջ կը ճանչնար արդէն, և որուն վերադարձնել կ'ուզեն մեզ մեր ժամանակի սուտ գիտուններ:

265.— Բանականութեան միջոցաւ մարդ կը վերլուծուի, բայց ինքնագիտակցութեան միջոցաւ միայն ինքզինք կը ճանչնայ: Առանց այս ինքնագիտակցութեան կարելի չէ ըմբռնել ամէն տեսակ զննութիւն և բանականութեան ամէն կերպ գործածութիւն:

266.— Հասկնալու, զննելու, արամաբանելու համար մարդ ամէն բանէ առաջ պէտք է որ իր գոյութեան գիտակցութիւնն ունենայ:

267.— Առարկաները որչափ հեռանան, այնչափ պարզ ու խիստ որոշ կ'երևին, ընդհակառակն, որչափ մօտենան, այնչափ իրենց շրջագիծն ու գոյնը խառնաշփոթ կ'երևին: Այսպէս չէ՞ մարդուն կեղծ գիտութեան մասին: Ինչ որ ամէնէն աւելի սուղութեամբ կը ճանչնայ՝ իր խոհուն գիտակցութիւնը՝ իր իմացողութեան հասողութիւնէն դուրս կը թուի իրեն, որովհետև պարզ չէ: Հակառակը, ինչ որ կատարելապէս իր իմացողութեան հասողութիւնէն դուրս է՝ անսահման և յախտեանական խնդիրը՝ իրեն շատ աւելի հասկնալի կը թուի, վրասնով հեռաւորութիւնը զայն պարզ ցոյց կուտայ անոր:

268.— Հաստատել թէ մարդ իր խոհուն գիտակցութեան կարիքներուն պէտք չունի, այլ միայն իր

անհատականութեանը, կը նշանակէ հաստատել թէ անասնական փափաքները, որոնց զարգացումին գործածած ենք մեր ամբողջ իմաստութիւնը, մեր վրայ տիրացած են և մեր աչքերէն ծածկած՝ մարդկային ճշմարիտ կեանքը: Բազմացող մոլութեանց չար խոտը խեղդած է ճշմարիտ կեանքի ընձիւղը:

269.— Խոհուն գիտակցութիւնը տրուած է մարգուն, որպէսզի իր կեանքը բարիքին մէջ հաստատէ, զոր այս գիտակցութիւնը պիտի յայտնէ իրեն: Ո՛վ որ իր կեանքը կը հաստատէ անասնական անհատականութեան բարիքին մէջ, նոյնիսկ ա՛յդ գործով կը զրկուի կեանքէն:

Թ.

ՍԷՐԸ — ԿԻՆԸ

270.— Մարդուն բարիքը կը կայանայ սիրոյ մէջ, ինչպէս որ բոյսին բարիքին աղբիւրը կը գտնուի լոյսին մէջ:

271.— Կեանքին իմաստն է, մեզմէ իւրաքանչիւրին համար, սէրն աճեցնել իր մէջ: Մեր սիրելու կարողութեան այս զարգացումը կը բերէ մեզ երանութիւն և երջանկութիւն:

272.— Միայն բանականութիւնը չէ՛ որ կ'որոշէ թէ մարդ ի՛նչ յարաբերութեան մէջ կը գտնուի տիեզերքին հետ, այլ նաև զգացումը, մարդուն բոլոր հոգեկան ուժերուն միացումը:

273.— Միայն սիրողն է որ կը տիրանայ կեանքին: Աէրը կեանքն իսկ է, ո՛չ նրբէք հակաբանական, վշտագին, կսկծալի կեանք մը, այլ երջանիկ, յաւիտենական կեանք մը:

274.— Ամէն չարիք կը գտնուի մարդոց սա՛ կարծիքին մէջ թէ պայմաններ կան, որոնք կը թոյլատրեն առանց սիրոյ վարուիլ իրենց նմաններուն հետ: Արդ, այսպիսի պայմաններ գոյութիւն չունին: Իրերու հետ կարելի է առանց սիրոյ վարուիլ, մարդ կըրնայ փայտ կտարել, ազիւս եփել, երկաթ ձեծել, սահայն մարդուն իր նմանին հետ ունեցած յարաբերութեանց մէջ սէրն այ՛նչափ անհրաժեշտ է, որչափ անհրաժեշտ է, օրինակի համար, իր խոհեմութիւնը մեղուներու հետ ունեցած յարաբերութեանց մէջ: Մեղուներուն քնտիութիւնը այսպէս է, երբ իրենց հետ խոհեմութեամբ չես վարուիր, միտս կը հասցնես թէ՛ մեղուներուն և թէ՛ քեզի: Այսպէս նաև մարդոց յարաբերութիւններուն համար: Արդէն ասիկա է արդարութիւնը, վաւրնդի մարդոց միջեւ փոխադարձ սէրը մարդկային հիմնական օրէնքն է: Անշուշտ մարդ մը ինչպէս աշխատութեան՝ նոյնպէս սիրոյ չի բռնադատուիր. բայց ասիկէ չի հեանելիր որ մէկը կրնայ առանց սիրոյ վարուիլ մարդոց հետ, մանաւանդ եթէ ի՛նք պէտք ունի անոնց:

275. — Եթէ կեանքը չըմբռնող մը անկեղծօրէն ուզէր սիրել սկսիլ, անկարող պիտի ըլլար կեանքը ըմբռնելէ և ապրելակերպը բարեփոխելէ առաջ այդքանը գործադրել:

276. — Սիրոյ զգացումին մէջ մասնաւոր բան մը կայ, կարո՞ղ կեանքի բոլոր հակասութիւնները լուծելու և մարդուն տալու այն կատարեալ բարիքը, որուն հետախուզութիւնը կը կազմէ կեանքը:

277. — Սէրը մարդոց չ'երելի կեանքի իբրև միակ և օրինաւոր յայտնութիւն, այլ իբրև մի'ն անոր հազարաւոր պատահականութիւններէն, իբրև մի'ն հազարաւոր այլազան բարոյական երևոյթներէն, որոնց մէջէն մարդ կ'անցնի իր գոյութեան ժամանակերբեմն պճնասէր մը կը դառնայ, երբեմն գիտութեան, արուեստի կը նուիրուի, երբեմն փառասիրութեան, փափաքներու, շահու անձնատուր կ'ըլլայ, երբեմն մէկը կը սիրէ: Սիրոյ վիճակը՝ կեանքը չըմբռնող մարդոց կերելի ո՛չ թէ մարդկային կեանքի իբր էութիւն, այլ պատահական վիճակ մը, կամքէ այնչափ անկախ, որչափ այն ամէնքը, որոնց մէջէն մարդիկ կ'անցնին կեանքի միջոցին: Նոյնիսկ շատ անգամ կը կարգանք ու կը լսենք թէ սէրը ցաւազին ու տարականոն վիճակ մըն է, որ կեանքի կանոնաւոր ընթացքը կը խանգարէ:

Ահա ինչ որ պէտք է զգայ բոլ մը, երբ արեւը կը ծագի:

278. Մարդոց սիրոյ մասին կազմած սխալ գաղափարին պատճառաւ առաջ կուգայ ճիշդ այն, ինչ որ առաջ կու գայ այն գաղափարին պատճառ-

առաւ, զոր կեանքի մասին կ'ունենան ճշմարիտ կեանքի բնաւ շտիրացած մարդիկ: Եթէ մարդիկ անասուններ ըլլային, եթէ բանականութենէ զրկուած ըլլային, անբաններու պէս պիտի ապրէին և կեանքի վրայ երբէք պիտի չխորհէին, անոնց գոյութիւնը բնական ու երջանիկ պիտի ըլլար: Սիրոյ մասին ալ նոյնն է, եթէ մարդիկ բանականութենէ զուրկ անասուններ ըլլային, անասուններուն սիրածները պիտի սիրէին, այսինքն, իրենց կորիւնները, իրենց հօտը և պիտի չդիտնային թէ զանոնք կը սիրեն: Նմանապէս պիտի անգիտանային թէ ուրիշ գայլեր կը սիրեն իրենց կորիւնները, իրենց հօտը և շնն գիտեր որ զանոնք կը սիրեն: Պիտի անգիտանային նաեւ թէ ուրիշ հօտի մը անդամները կը սիրեն իրենց բնկերները, մէկ խօսքով, իրենց սէրն ու կեանքը պիտի ըլլար իրենց սեփական գիտակցութեան աստիճանին յարմար սէր ու կեանք:

Սակայն մարդիկ բանական էակներ են և ստիպողաբար պարտին տեսնել թէ միւս արարածները համանման սէր մը ունին իրենց մերձաւորներուն հանդէպ, ուստի սիրոյ այս զգացումները պէտք է որ իրարու նկատմամբ հակադրութեան մէջ ըլլան և արտադրեն բարիքի հակադիր բան մը սիրոյ գաղափարին բոլորովին հակառակ:

279.— Երբ մարդիկ իրենց սէր կոչած զգացումին հրէշային համեմատութիւններ կու տան, այն ատենն ա՛յդ զգացումը ո՛չ միայն աղէտալի կ'ըլլայ, այլ և մարդը ամէնէն չար և ամէնէն ահարկու անասունը կը դարձնէ:

280.— Կեանքը չըմբռնող մարդոց սէր անուանածը

կը կայանայ անձնական բարիքի քանի մը պայման-
ները ուրիշներէն աւելի նախընտրելուն մէջ: Երբ
կեանքը չըմբռնող մարդը ըսէ թէ կը սիրէ իր կիներ,
զաւակը, կա՛մ, բարեկամը, պարզապէս ըսել կ'ուզէ
թէ իր կեանքին մէջ իր կնոջ, զաւակին ու բարեկամին
ներկայութիւնը կ'աւելցնէ իր անհատական կեանքին
բարիքը:

281. — Սիրոյ սկզբնապատճառը, արմատը սովորաբար երեւակայութիւնն պէս կրից թափ մը չէ, որ բանականութիւնը կը մթազնէ, ընդհակառակը, հոգւոյն ամէնէն բանաւոր և ամէնէն լուսափայլ վիճակն է ա՛ն, հետեւաբար ամէնէն խաղաղը և ամէնէն գուարթը, տղոց և իմաստուններու յատուկ վիճակն է ան:

282. — Կիրքը, պիտակաբար սէր կոչուած, որ մեզ այսինչ մարդիկը նախընտրել կուտայ միւսներէն, անպատուաստ ծառ մըն է, որուն վրայ ճշմարիտ սէրը կրնայ պատուաստուիլ և պտուղներ տալ: Սակայն, ինչպէս որ այդ վայրի ծառը խնձորենի մը չէ և պտուղ չի տար կա՛մ դառն պտուղ միայն կուտայ, այսպէս ալ կողմնասիրութիւնը սէր չէ և մարդոց բարիք չի հասցընէր, ա՛ն շուտով շատ մեծ չարիք մը առաջ կը բերէ:

283. — Կիրքերը արմատախիլ չեն ըլլար, պէտք է ամէն ոք գոհ թողու զանոնք առաքինութեան սահմանին մէջ:

284. — Սիրել կը նշանակէ ուրիշը նախապատու սեպել իրմէ: Սէրն այլապէս պիտի չկրնայինք ըմբռնել:

285. — Ճշմարիտ սէր կարելի է ունենալ միայն այն ատեն, երբ մարդ իր անասնական անհատականութեան բարիքէն կը հրաժարի:

286. — Սէրը զգացում մըն է, զոր մարդ կրնայ ունենալ, բայց չի կրնար քարոզել:

287. — Սիրոյ մասին ամէն արամաբանութիւն դայն կ'եղծանէ:

288. — Կեանքն ըմբռնելու համար իրենց բանականութիւնն արդէն զործածած և անհատական կեանքի բարիքէն հրաժարած մարդիկ են միայն որ կրնան շարամարանել սիրոյ մասին. բայց անոնք որ կեանքը չեն ըմբռնած և միայն անասնական անհատականութեան բարիքի ստացումին համար կ'ապրին, չեն կրնար շարամարանել:

289. — Այն սէրը, որ չի հանգչիր անհատականութենէ հրաժարումի և ասկէ հետեւած մարդասիրութեան վրայ, ուրիշ բան չէ, եթէ ոչ անասնական կեանք մը, և այս կեանքն աւելի մեծ շարիքներու ենթարկուած է քան առանց սիրոյ կեանք մը, որ զէթ անխնայաբար բան մըն է:

290. — Ան որ իր կեանքը անասնական անհատականութեան մէջ կ'ամփոփէ, չի կրնար սիրել, վասն զի սէրն իրեն պիտի երեւի իր կեանքին արամագծօրէն հակադիր զօրձունէութեան շրջանակ մը: Այնպիսի մարդու մը կեանքը կը զանուր միմիայն անաս-

նական գոյութեան բարիքին մէջ, և սէրն ամէն բանէ առաջ այս բարիքը գոհել կը պահանջէ:

291.— Սէրը խօսքերով չի կրնար սահմանուիլ, գործերով արտայայտուելու է:

292.— Սէրը բառ մը չէ լոկ (ինչպէս որ ամէնքը համաձայն են բնգունելու), այլ գործունեութիւն մը, որ իրր շարժառիթ ունի ուրիշներուն բարիքը:

293.— Գործօն սէրը, միակ բանը որ կրնայ մարդուն հաճելի ըլլալ, ընդունելի է միայն անկէ որ բարիքը չի հաստատեր անհատական կեանքի մէջ, հետեւաբար չի մտազբաղիր այդ կեղծ բարիքով, այլ ազատ ընթացք կուտայ մարդասիրութեան զգացումին, որ մարդուն սեփականութիւնն է:

294.— Չիկայ ուրիշ սէր, բայց միայն այն սէրը, որ կը կայանայ սիրուածներու համար իր կեանքը նըւերիւուն մէջ: Սէրը այս անուան ճշմարտապէս արժանի է, երբ անձնագոհութիւն մըն է: Երբ մարդ մը ուրիշին կը յատկացնէ իր ժամանակը և կարողութիւնները, երբ կը գործածէ մարմինը սիրուած առարկային համար, երբ իր կեանքը կուտայ անոր, ա՛յն ատեն միայն կը ճանչնանք ամէնքս թէ հո՛գ է սէրը, միակ սէրը, որ կրնայ բարիք արտադրել իրր վարձատրութիւն սիրոյ: Եւ ա՛յս է պատճառը որ աշխարհ կանգուն կը մնայ, վասն զի այս սէրը մարդոց սրտին մէջ գոյութիւն ունի:

295. — Առն և կնոջ միջև ևզած սիրոյ մէջ կը պատահի միշտ վայրկեան մը, ուր այս սէրը իր ծայրակէտին կը հասնի, ո՛չ մտածուած, ո՛չ ալ զգայնական է, բարոյական սրբութիւն մը կը գտանայ:

296. — Երբ մարդ կ'ամուսնանայ աղջկան մը հետ, որ կինք չի սիրեր կ'ս'մ ուրիշ մը կը սիրէ, զայն վշտի և տառապանքի կ'ենթարկէ գոհացում տալու համար իր անասնական ակործին, զոր սէր կ'անուանեն: Ասիկա անասնագիտութիւն մըն է, ո՛չ թէ սէր:

297. — Քրիստոնէական ամուսնութիւն մը կարելի չէ, եթէ մարդ կը սիրէ միայն իր կինը, ո՛չ թէ բոլոր իր նմաները: Այն անձը, որուն հետ կ'ամուսնանայ, բոլոր մարդոց հանդէպ սեննալիք իր եղբայրական զորովին խորխոր պէտք է ըլլայ: Ինչպէս որ անկարելի է սուն մը շինել հիմերն առանց գրուած ըլլալու, պատկեր մը նկարել կտաւն առանց պատրաստուած ըլլալու, այնպէս ալ սեռային սէրը օրինական, բանաւոր կամ տեական չի կրնար ըլլալ, եթէ առհասարակ ամէն մարդու հանդէպ ևզած մարդկային սիրոյ վրայ չի հանդէր: Ըմարտապէս քրիստոնեայ ընտանեկան կեանք մը կազմելու միակ միջոցը այս է:

298. — Կնոջ մը հանդէպ ևզած առանձնական սէրը, զոր բանաստեղծները կ'երգեն, ինքնին սքանչելի է, բայց որովհետեւ անխիստ հիմնուած չէ այլասիրութեան վրայ, արժանի չէ սէր անունին: Անխիստ անասնական փափաքն է որ շատ անգամ ատելութեան կը փոխուի: Այս ճշմարտութեան լաւագոյն ապացոյցն ա՛յն է որ

մենք ինչ որ սովորաբար սէր — Երոս — կ'անուանենք, անասնական գիտութիւն կը դառնայ, երբ եղբայրական գորովի մեծ հիմերուն վրայ չի հանգչիր:

299. — Եթէ մարդուն մէջ գտնուէր միայն ի'ր տնձին և ի'ր զաւակներուն հանդէպ սէր, մարդոց մէջ եղած չարիքին հարիւրերորդ մասը տեղի պիտի չունենար: Մարդոց մէջ եղած չարիքին ինսուսնելինը մասը առաջ կուգայ այն անպատիւ զգացումէն, զոր պանծացնելով սէր կ'անուանեն, և որ երբէք չի նմանիր սիրոյ, ինչպէս որ անասունին կեանքը չի նմանիր մարդուն կեանքին:

300. — Մեր դասակարգի կինը այրէն աւելի կարող էր: Մեր օրերուն՝ կնոջ միջոցաւ օրէնքին բռնաբարումը, այսինքն անոր անկումը սկսած է և հետըզհետէ շեշտուած: Կինը, մոռնալով բնական օրէնքը, կարծեց թէ իր ուժը իր հրապոյրին մէջ էր: Սակայն տղաքը խոչընդոտ մըն էին: Եւ ահաւասիկ գիտութեան օգնութեամբ վիժումի եղանակները տասնեակներով հարուստ դասակարգերու մէջ երեւան ելան: Չարիքը հեռուն տարածուած է և ամէն օր կ'աւելնայ, կարճ ժամանակէն մեր դասակարգի բոլոր կիներուն պիտի հասնի: Այն ատեն անոնք այրերու մակարդակին վրայ պիտի ըլլան և անոնց պէս պիտի կորսնցնեն կեանքի բանաւոր իմաստը: Սակայն տակաւին ժամանակ կայ:

301. — Կիներ չե՛ն անոնք որ կը զբաղին միայն իրենց հասակով, գլխու յարգարանքով, սիրատենչ պչրանքով, և որոնք հակառակ իրենց կամքին, ան-

ուշագրութեամբ, յուսահատօրէն կը ծնին տղաներ, զորս սանտուներու կը թողուն, ո՛չ ալ անոնք որ այլ և այլ դասընթացքներու կը հետեւին, հոգեշարժիչ (psycho-moteur) կեդրոններու և զանազանակներու մասին կը ճառեն ու կը ջանան իրենք ալ ազատագրուիլ տղարերութենէ՝ չի խանգարելու համար իրենց անմտութիւնը, զոր իրենց մտաւոր զարգացումը կ'անուանեն, այլ այն կիւն-մայրերը՝ որոնք տղարերութենէ կարենալով ազատիլ, առանց վարանելու, կամաւ, կը հպատակին այս յաւիտենական, անփոփոխելի օրէնքին գիտնալով որ ատոր մէջ է իրենց կեանքին կոչումը, այս կիւն-մայրերն են որ իրենց ձեռքերուն մէջ կը բռնեն մարդոց փրկութիւնը, անոնց տաժանելի թշուառութեան բուժումը:

302.— Անկեազ կիւներու գոյութիւնը կը կայանայ անզապար բռնաբարելու աստուածային ու մարդկային օրէնքները, գոյութիւն՝ որուն դատապարտուած են այժմ հարիւր հազարաւոր կիւներ, ո՛չ միայն օրինական իշխանութեան արտօնութեամբ, այլ անոր լսկական սրշտպանութիան տակ՝ հրէշային նուաստացումի կեանք, որ իբր հետեւանք ունի, ինն առ տասն, զառամութիւն և կանխահաս մահ, յաջորդելով սոսկալի տառապանքներու:

303.— Եթէ առանց գաւկի մարդուն ու կնոջ համար տարակոյսներ կարենան գտնուիլ այն ճամբու մասին, որ կ'առաջնորդէ աստուածային կամքի գործադրութեան, այդ ճամբան՝ կիւն-մօր համար՝ բացառյալօրէն գծուած է, և եթէ հլուութեամբ, իր հոգւոյն

պարզութեամբը հետեւած է այդ ճամբուն, մարդոց հասնելու յատկացուած տեղւոյն ամենաբարձր գագաթին վրայ կիցած՝ կը դառնայ առաջնորդող աստղը այն ամէնուն համար, որոնք դէպի բարիք կը դիմեն:

Ժ.

ԲԱՐԻՔԸ — ՉԱՐԻՔԸ — ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ

304. — Այն մարդը որ բարիքն ու չարիքը չի ճանչնար՝ մեզի երջանիկ կ'երեւի, և սակայն մենք կը ձգտինք ամէն բան ճանչնալու.

305. — Կարելի չէ կիսով չափ բարի ըլլալ:

306. — Առաքինութեան ծանօթութիւնը կա՛մ միեւնոյն կէտին վրայ կը մնայ, կա՛մ անհունապէս կը զարգանայ, և հակառակ բոլոր տեսութիւններու, առաքինութեան վատթարացումն ու շքեղութիւնը ո՛չ մէկ կերպով կախումն սէնին գիտութենէ:

307. — Ժուժկալութիւնը ցանկատիրութենէ ազատագրումն է մարդուն, և հպատակութիւնը՝ իմաստութեան:

308.— Այն մարգը որ գթութեան ամբողջ բարոյական կարեւորութիւնը կ'ըմբռնէ, պիտի չընկրկի այն վախին առջեւ թէ իր գործերը կրնան զինքը ծիծաղելի դարձնել ու բիշնրու աչքին: Իրեն ինչ հոգ թէ թակարդին մէջ ինկած մուկ մը, փոխանակ սպաննելու, թող տալով ծաղր առաջ կը բերէ, երբ զիտէ թէ ասով ո՛չ միայն մահէ ազատեց անասուն մը, որ կեանք ունենալ կը փոփառքէր իրեն պէս, այլ իր գթութեան զգացումը ազատօրէն յայանեց և քայլ մ'առաւ դէպի բարձրագոյն դարը այն տիեզերական սիրոյ, որ չընդունելով ո՛չ մի սահման, զայն մահուընէ ազատեց և վերագարծուց կեանքի ազրիւրին:

309.— Մեր ընկերութեան մէջ մարդոց իրարու հետ ունեցած յարաբերութիւնները որոշուած են, ո՛չ թէ բարիքի և չարիքի դադափարներու, այլ առանձնաշնորհեալ գասակարդի մը շահերու միջոցաւ:

310.— Իր նմանը ուրիշի մը բռնութեանը դէմ պաշտպանելու համար գործադրուած բռնութիւնը միշտ գատապարտելի է, որովհետեւ արգիլել ուղած չարիքդ տակուին ի գործ դրուած չըլլալուն, անկարելի է քեզ զխանալ թէ ո՛րը պիտի ըլլայ ամէնէն մեծ չարիքը, ի գործ գնելիքը թէ արգիլելիքը: Ընկերութիւնն անկէ ազատելու համար եզեռնագատութիւն մը կը կատարենք, և ոչինչ մեզ կ'ապահովցնէ որ այդ եզեռնագատութիւնը վաղը փոխուած և անոր գործադրութիւնը անօգուտ անգթութիւն մը պիտի չըլլայ: Ընկերութեան մէկ անդամը, մեր կարծիքով վտանգաւոր, կը բանտարկենք, սակայն

վաղը այդ անձը վտանգաւոր ըլլալէ կրնար դադարել, հետեւաբար իր բանտարկութիւնը անողուտ կը դառնայ: Աւագակ մը տեսնեմ որ մանկամարդ աղջիկ մը կը հետապնդէ. ձեռքիս մէջ հրացան մը ունիմ, զայն կը սպաննեմ, աղջիկը կ'ազատեմ, սակայն աւագակին մահը կամ տրուած հարուածը ստոյգ իրողութիւն մըն է, մինչդեռ ինչ որ պիտի պատահէր աղջկան՝ չեմ գիտեր: Ինչ մեծ շարիք պէտք է առաջ դայ և իրականին մէջ կուգայ հաւանական չար դործերուն առաջքն առնելու մարդոց ծանօթ իրաւունքէն: Հետազօրութենէ սկսեալ մենչեւ ուժանակի ուսմաները, գլխատուձեւերը և քաղաքական ըսուած բիրաւոր եղիւնադատութիւնները իննսուն և ինն առ հարիւր այս պատճառաւ են:

311.— Ինչպէս որ զսպուած վագր մը իր դառագիղին մէջ երախին առջեւ դրուած միտք չ'առնելու և ձողի մը վրայ կը ցատքէ, երբ իրեն հրամայեն, որովհետեւ կը յիշէ կարմրած երկաթէ ձողը, կամ, անօթութիւնը՝ որով պատճուած է իր անհնազանդութիւնը, այսպէս ալ այն մարդիկ որոնք իրենց շահուն հակառակ եղածին և իրենց անարգար սեպուծին յանձնառու եղած են, կը յիշեն թէ նեղութիւն կրած են երբոր դիմադրել ուղած են:

312.— Օր մը, Մոսքուայի մէջ, ներկայ գրտնըւեցայ կրօնական վիճաբանութեանց միոյն, որոնք սովորաբար տեղի կ'ունենան Քուազխմատ, եկեղեցւոյն մօտ, Օխտանի-Միխաիլ մէջ: Քսանի չափ մարդիկ հաւաքուած էին մայթին վրայ և խիստ լրջութեամբ կը խօսակցէին կրօնի մասին:

Միեւնոյն ժամանակ նուազահանգէս մը տեղի կ'ունենար արհուականներու ակումբի շէնքին մէկ կողմը. ոստիկանութեան պաշտօնեան հոն կեցած՝ նշմարելով մարդոց խումբը, հեծեալ կարգազօր մը գրկեց ցրուելու հրամանով: Ճիշդն ըսելով՝ պաշտօնեան պէտք չունէր այս խումբը ցրուելու, որ մէկու մը նեղութիւն չէր տար, միայն հոն առտուընէ մինչև կէսօր կեցած էր և օստիկա ոչինչ բանի մը համար չէր: Կարգազօրը, քաջ երիտասարդ մը, լի բուռը ազգրին վրայ գրած և սուրին ձայնը հանելով մօտեցաւ մեղի և խիստ ձայնով մը հրամայեց. «Յրուեցէ՛ք, ի՛նչ է այս համախմբումը»: Ամէնքը դէպի անոք դարձան և մեզմէ մին, քաղցրաբարոյ մարդ մը, հանդարտ ու մեղմ երևոյթով՝ պատասխանեց. «Լուրջ բաներու վրայ կը խօսինք, ի՛նչ պատճառ կայ մեզ բաժնելու: Աւելի լաւ է որ, երիտասարդ, ի՛ջնես ձեզ և զաս մեղի մտիկ ընելու, այս բանը քեզ ալ օգտակար պիտի ըլլայ»: Յետոյ նորէն մեղի դարձաւ և խօսակցութիւնը շարունակեց. կարգազօրը ձիուն դլուխը դարձուց և առանց բան մ'ըսելու հեռացաւ:

Միեւնոյն բանը կրնայ տեղի ունենայ բռնութեան բոլոր դործերուն մէջ:

343.— Շողեմեքեանայ մը զետեղել, կաթսան տաքցնել, քալեցնել և փոխանցումի փոշը չմիացնել մեքենային, ահա ճիշդ ի՛նչ որ կ'ընեն Յիսուսի վարդապետութեամբ, սորվեցնելով որ մարդ կրնայ քրիստոսեան ըլլալ առանց նկատի ունենալու «Չարին հակառակ մի՛ կենաք չարիքով» պատուէրը:

314.— Առաջին բանը որ ուշադրութիւնս գրաւեց, երբ ուղղակի իմաստին թափանցեցի «Չարին՝ շարիքով հակառակ մի՛ կենաք» պատուէրին, ա՛յն է թէ դատարաններն այս պատուէրին համաձայն ըլլալէ հետի՛ բացարձակապէս հակառակ են, ինչպէս որ ամբողջ վարդապետութեան ընդհանուր իմաստին, հետեւաբար եթէ Յիսուս դատարաններու վրայ մտածած ըլլար, զանոնք մէջտեղէն վերցնելու պիտի պարտաւորէր:

315.— Յիսուսի առաջին աշակերտները հասկցան անոր «Մի՛ դատէք և մի՛ դատապարտէք բնաւ» խօսքերը, ինչպէս որ հիմա ես կը հասկնամ զանոնք իրենց ուղիղ իմաստով «արդարութեան ատենանի մէջ մի՛ դատէք, անոր մասնակից մի՛ ըլլաք»:

316.— Եղիա մարգարէն մարդոցմէ փախչելով քարայր մը սպաստանեցաւ, և իրեն յայտնուեցաւ որ Աստուած պիտի երեւէր իրեն քարայրին մուտքին վրայ: Սոսկալի մրրիկ մը ելաւ, ծառերը կը խորտակուէին քամիէն, Եղիա մտածեց որ Աստուած էր ան և դուրս ելաւ, սակայն Աստուած մրրիկին մէջ չիկար: Յետոյ փոթորիկ մը պատահեցաւ, կայծակն ու փայլակները ահարկու էին, Եղիա դուրս ելաւ նորէն՝ տեսնելու թէ հո՛ն էր Աստուած, սակայն Աստուած փոթորիկին մէջ չիկար: Ապա երկրաշարժ մը եղաւ, երկիրը կրակ կը ժայթքէր, ժայռերը կը ճեղքուէին, շեւը ամէն կողմերէ կը շառաչէր, Եղիա դուրս նայեցաւ, բայց Աստուած չիկար երկրաշարժին մէջ, վերջապէս, հանգարտութիւնը տիրեց, մեզմ գեփիւս մը դաշտերուն զովութիւնը մարգարէին բերաւ, Եղիա

դուրս նայեցաւ, Աստուած հո՛ն էր: Ասիկա «Չարին հակառակ մի՛ կենաք» խօսքին սքանչելի մէկ խորհրդագաղտակերն է: Այս խօսքերը շատ պարզ, սակայն աստուածային ու մարդկային օրէնքին բացատրութիւններն են:

317. — Մեր մէջ միակ ճշմարիտ, միակ կարող և միակ յաւիտենական եղող ազատ էակր, բարոյական էակը կ'արթննայ ամէն մարդու մէջ, զո՞նէ վայրկենի մը համար:

318. — Չարիք մի՛ դործեր և չարիքը գոյութիւն պիտի չունենայ:

319. — Կը կարծէք որ բռնութեան դիմող ձեր օրէնքները չարիքը կ'ողղեն, ո՛չ, անոնք կ'աւելցնեն միայն: Հաղարաւոր՝ ասորիներէ ի վեր, կը փորձէք չարիքը չարիքով հեռացնել և չէք կրցած հեռացնել, աւելցուցած էք: Ըրէ՛ք ինչ որ կ'ըսեմ — չարին՝ չարիքով դէմ մի՛ կենաք — և պիտի ճանչնաք ճշմարտութիւնը:

320. — Ծշմարտութիւնը միայն բարիքին կ'առաջնորդէ, ահա թէ ինչու՛ համար մարդիկ անհրաժեշտօրէն պիտի հետեւին ճշմարտութեան ճամբուն. ոմանք իրենց յատուկ նախաձեռնութեամբ կատարելով այն պաշտօնը, որուն յանձնառու եղած են. ոմանք՝ հպատակելով՝ հակառակ իրենց՝ կեանքի օրէնքին: Մարդուն ազատութիւնը այս ընտրութեան մէջ է:

321. — Թո՛ղ իւրաքանչիւր մարդ, իր կարողութեան չափով հետեւի անձամբ իր ճանչցած ճշմար-

ստուծեան, կամ գէ՛թ թող չպաշտպանէ ստուծիւնը, և անմիջապէս պիտի կատարուին մեր երեւակայածէն աւելի փոփոխութիւններ՝ մարդոց ազատագրում և ճշմարտութեան հաստատում երկրի վրայ:

322.— Գողութիւնը, կողոպուտը, սպաննութիւնը, շնութիւնը, նհնգութիւնը չե՛ն, այլ ստուծիւնը, կեղծաւորութեան յատուկ ստուծիւնն է որ մարդոց գիտակցութենէն կը ջնջէ շարիքին ու բարիքին մէջ եղած խտրութիւնը, կ'ապականէ մարդիկը, շար և վայրի գազաններ կը դարձնէ, կ'արգիլէ շարիքէն խոյս տայլէ և բարիքը փնտռելէ, կը խլէ ի՛նչ որ կը կազմէ ճշմարիտ կեանքի իմաստը, հետեւաբար մարդոց առջեւ կը գոցէ ամէն տեսակ կատարելութեան ճամբայ:

323.— Ամէնքս գիտենք ի՛նչ որ կը նշանակէ մարդոց ստել, սակայն չենք վախնար մենք մեր անձին ստելէ: Մարդոց առջեւ ամէնէն յուր ստութիւնը, ամէնէն լիրք ստութիւնը ոչինչ է իր հետեւանքներուն նայելով, բազդատարար ի՛նք իր անձին առջեւ եղած ստութեան, որուն համեմատ կը կանոնաւորենք մեր կեանքը:

Ուրիշներու առջեւ եղած ստութիւնը միայն սըրտնեղիչ է. ամէն բան աւելի նիշդ և աւելի շուտ կ'որոշուի ճշմարտութեամբ քան թէ ստութեամբ: Ուրիշներու առջեւ եղած ստութիւնը միայն իրերը կը խառնակէ և վերջնական լուծումը կ'ուշացնէ. սակայն իր անձին առջեւ եղած ստութիւնը, իբր ճշմարտութիւն կանգնած, մարդուն ամբողջ կեանքը կը կորսնցնէ:

324.— Եթէ մարդ ճշմարտութեան առջեւ քաջութիւնը կորսնցնէ, եթէ զայն տեսնելով հանդերձ չընդունի, այլ ստութիւնը համարի ճշմարտութիւն, պիտի չգիտնայ երբէք ի՞նչ որ իրեն պէտք է ընել :

Ըննք՝ առանձնաշնորհեալ և ուսեալ կարծուածներս՝ այնչափ առաջ դացած ենք սխալ ճամբու մէջ որ մեզի պէտք է թէ՛ մեծ յոգնութիւն և թէ՛ շատ մեծ նեղութիւն մեր մոլորութեան ճամբուն մէջ մենք մեզի գալու և ճան չնալու այն ստութիւնը, որուն մէջ կ'ապրինք :

325.— Ըշմարտութիւնը պէտք է պարտաւորիչ բլլայ առանց բռնութեան :

ԺԱ.

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

326.— Բոլորովին անկարելի է ցոյց առլ թէ բաքոյական և իմացական միտքը կ'առաջնորդէ պատմական անձերու գործերը, վասնզի դէպքեր՝ ինչպէս առեկալի կոտորածները, պատերազմներն ու գազդիական Յեղափոխութեան սպաննութիւնները, որոնք հաւասարութեան և եզրայրութեան վրայ խօսուած ճառերուն յաջորդեցին, այս տեսութեան հակառակը կ'ըսեն :

327.— Ի՛նչ բան աւելի որոշ կրնայ ըլլալ քան սա՛ բացատրութիւնները. շունը ցաւ կը զգայ. հորթը գգոռասէր է. զիս կը սիրէ. թռչունը զուարթ է. ձին կը վախնայ. շար զազան մը. ազնիւ մարդ մը: Այնչափ կարեւոր և այնչափ իմաստալից այս բառերն երբէք որոշուած չեն տարածութեամբ ու տեւողութեամբ, հակառակը, այնչափ քիչ կը հասկնանք երեւոյթի մը վրայ իշխող օրէնքը, որչափ այդ երեւոյթը ճշգրտօրէն որոշուած է տեւողութեամբ ու տարածութեամբ: Ո՞վ կրնայ պարծիլ հասկցած ըլլալուն նոյն իսկ ծանրականութեան օրէնքը, որ կ'իշխէ երկրին, լուսնին ու արեգակի շարժումներուն վրայ: Եւ սակայն արեւու իսաւարում մը տեւողութեամբ ու անջըրպետով որոշուած է ամենաճիշդ կերպով:

328.— Մեծատունը իր գոյութիւնը ապահովուած կը կարծէ, որովհետեւ դրամ ունի, և այդ դրամը կը հրապուրէ չարագործ մը, որ զսին կը սպաննէ: Երեւակայական հիւանդը իր կեանքը կը պահպանէ դեղերով, և այդ դեղերը զինք կը սպաննեն յամբար, եթէ չեն սպաններ անշուշտ կը զրկեն կեանքէն, այն անդամալոյծին պէս որ 35 տարի զրկուած էր կեանքէն աւազանին եզերքը հրեշտակին գալուն սպասելով:

329.— Մեր դասակարգի մարդոց հակառակն ըլլալով, որոնք բախտին դէմ կը գանգատին և անոր դատանութեան համար կը զայրանան, ժողովրդեան մարդիկը հիւանդութիւններն ու վիշտերը կ'ընդունին առանց ո՛ր և է ընդվզումի, առանց հակառակութեան, այլ հաստատ ու խաղաղ վստահութեամբ մը:

330. — Բժիշկ գասակարգը իր բոլոր ջանքերը կեդրոնացուցած է հարուստ դասակարգերուն վրայ, ա- նիկա իրեն պարտք սեպած է խնամել այն անձերը, որոնք կրնան իրեն ամէն ինչ հայթայթել, և կը յա- ւակնի միեւնոյն միջոցներով խնամել աղքատները: Սակայն ժողովուրդը, հիւանդ ու վարակեալ, չի բժը- կը իր դրամ չունենալուն:

Եւ ժողովրդային բժշկութեան պաշտպաններ կը հաստատեն թէ անոր բնդհանրացումը այնչափ մեծ չէ: Յայտնի է թէ շատ չընդհանրանար, որովհետեւ, Աստուած չընէ, փոխանակ երկու բժիշկներու, ի հար- կին մանկաբարձներ և օգնական վիրաբուժներ, եթէ քսան հատ ալ գտնուելու ըլլար, պիտի այցելէին, ինչպէս որ կ'ուզեն. ժողովուրդին կէսը բժշկական մարմնոյն ծախքին տակ պիտի ընկճէր, և քիչ ատենէն դարմանի կայ օտ մէկը պիտի չգտնուէր:

331. — Պէտք չէ որ տարբերութիւն գտնուի ազ- գականներու և օտարականներու միջեւ:

332. — Օր մը, Բարիկի մէջ, շատ մը հագարա- ւոր ներկաներու առջեւ մարդու մը գլխատուիլը տեսայ: Փիտէի որ այդ մարդը սոսկալի չարագործ մըն էր, կը հասկնայի բոլոր այն պատճառաբանու- թիւնները, որոնք այնչափ դարերէ ի վեր եղած են չքմեղելու կամ բացատրելու համար այս տեսակ գոր- ծեր, գիտէի որ տսիկա ալ դիտումով, գիտակցարար կատարուած էր: Բայց գլուխն ու մարմինը իբարմէ բաժնուելու վայրկենին՝ ճիշ մը արձակեցի և հաս- կըցայ, ո՛չ թէ մտքով, ո՛չ թէ սրտով, այլ ամբողջ է-

ութեամբս որ մահուան պատիժի մասին լսած բոլոր սոփեստութիւններս չարակամ անմտութիւն էին միայն: Ի՛նչ որ ըլլար հաւաքուած մարդոց թիւը և այն անունը, զոր իրարու կուտային սպաննութիւն մը ի գործ դնելու համար, հասկցայ այդ վայրկենին որ աչքերուս առջեւ գործադրուած ոճիրը ամենամեծ սըխալն էր, զոր մարդ կարենայ գործել շխարհի վրայ: Եւ ես իմ ներկայ ըլլալովս ու շմիտտելովս կը հաւանէի և կը մասնակցէի այս գործին:

333.— Եթէ Նաբոլէօն իրմէ պահանջուածին համար չգովամակէր, եթէ Անգլիան և պաշտօնազուրկ դուքսը չգաւէին, եթէ Աղեքսանդր կայսրը խորապէս վշտացած չըլլար, եթէ գաղղիական Յեղափոխութիւնը առաջ բերող պատճառները, գեկտատորութիւնն ու կայսրութիւնը գոյութիւն չունենային, պատերազմ տեղի պիտի չունենար: Սակայն, այսպէս ալ, եթէ այս պատճառներէն մին երեւան չգար, պատահածներէն և ո՛չ մին տեղի պիտի ունենար:

334.— Փաշլիացի կարգ մը հեղինակներ իրենց հայրենակիցները ներկայացնելու ժամանակ սխալ կը գործեն: Փաղղիացի ժողովուրդը չի կրնար ըլլալ այնպէս ինչպէս որ զինք կը նկարագրեն: Աշխատաւոր ժողովուրդը, որ Փաղղիան իր ուսերուն վրայ բռնած է ու կը բռնէ, և որ կ'արտագրէ անոր մեծ մարդիկը, անբաններէ կազմուած չէ, այլ բարձր յատկութիւններով օժտուած արարածներէ:

335.— Շատ մարդիկ բարեբախտ մրցակցի մը

ասջեւ արամադիր են անոր յատկութիւններն ուրա-
նայ տեսնելու համար միայն անոր թերի կողմերը :
Ուրիշներ՝ ընդհակառակը՝ կը մտածեն արժանիք-
ներն ի վեր հանել, որոնք անոր յաջողութեան պատ-
ճառ եղած են, և սրտերնին խոցուած միայն անոր
յատկութիւնները կը տեսնեն :

336.— Հանճարեղ մարդու մը վարդապետութիւնը
պէտք է որ բոլոր մարդիկը միացնէ հասարակաց ճըշ-
մարտութեան մը մէջ :

337.— Խորապէս արմատներ ձգած և ընդհանրա-
ցած նախապաշարում մը կը գտնուի մաքի մէջ թէ
մարդ ունի որոշեալ մի քանի յատկութիւններ, թէ
բարի է կամ չար, խելացի կամ անմիտ, կորովի կամ
անզգայ ևլն. : Մարդիկ այնչափ կատարեալ չեն :
Մարդու մը համար կրնանք ըսել թէ շատ աւելի բա-
րի է քան չար, շատ աւելի խելացի՝ քան անմիտ,
շատ աւելի կորովի՝ քան անզգայ և փոխադարձաբար-
բայց չէ կարելի ըսել մարդու մը համար թէ բարի է
կամ խելացի, ուրիշի մը համար թէ չար է կամ ան-
միտ : Եւ սակայն կ'ընենք այս բաժանումը, որ սխալ
է : Մարդիկ կը նմանին գետերու միեւնոյն ջու-
րէն կազմուած՝ բայց իւրաքանչիւրը երբեմն սահ-
մանափակ, երբեմն արազ, երբեմն լայն, երբեմն
գանդազ, պազ, յստակ, պղտոր, տաք, Այսպէս ալ
մարդիկ իրենց մէջ կը կրնն մարդկային կարողութիւն-
ներու ձիւեր. անոնցմէ երբեմն մին կը յայտնուի,
երբեմն՝ միւսը, շատ անգամ տարբեր կ'երեւին նոյնը
մնալով սակայն անոնց էութիւնը : Կարգ մը մարդոց
քով այս փոփոխութիւնները մասնաւորապէս հազուա-
գէպ են :

338.— Երբ մարդկային գործունէութեան ամբողջ մէկ ճիւղին նկարագիրը տալ ուզուի, կարեւոր է անոր նշանակութիւնն ու ծաւալը փնտռել: Ասիկա ընելու համար նախ անհրաժեշտ է այդ գործունէութիւնն ի՛նք իր մէջ ուսումնասիրել իր պատճառներու և արդիւնքներու յարակից պարագաներով և ո՛չ թէ պարզապէս մեզի պատճառած հաճոյքներու յարաբերութեամբ:

339.— Մեծ, ճշմարիտ գործերը միշտ պարզ ու համեստ են, անոնք անփառունակ կերպով առանց շշուկի կը կատարուին:

340.— Ժամացոյցը կը քակենք, կ'աւրենք, շարժումը կը դադրեցնենք, անով խաղալիք մը կը շինենք և յետոյ կը զարմանանք թէ ժամացոյցը չի բանիր այլ եւս:

341.— Տղայ եղած ատենս ինձ հաւատացուցած էին թէ թռչուն մը բռնել կարենալու համար պէտք է պոչին վրայ աղի կտոր մը դնել միայն: Հետեւաբար ձեռքս աղ առած փորձեցի թռչունի մը մօտենալ, սակայն շուտով համոզուեցայ որ եթէ կարենայի անոր պոչին վրայ աղ դնել, արդէն թռչունը բռնած պիտի ըլլայի, և հասկցայ որ զիս ծաղրեր են:

ԺԲ.

Մ Ա Հ Ը

342.— Պիտի մեռնիմ: Ասոր մէջ ի՞նչ զարհուրելի բան կայ: Որքա՞ն փոփոխութիւններ կատարուած են ու կը կատարուին իմ գոյութեանս մէջ առանց սարսափ ազդելու ինձ: Ինչո՞ւ պիտի վախնամ փոփոխութենէ մը, որ տակաւին տեղի ունեցած չէ, և որ ո՛չ միայն հակառակ չէ իմ բանականութեանս և փորձառութեանս, այլ ա՛յնքան հակնալի, ա՛յնքան սովորական և բնական է աչքիս որ գոյութեանս ընթացքին միջոցին շարունակ կազմած եմ և դեռ կը կազմեմ միաւորութիւններ, որոնց մէջ անասուններու և նոյնիակ մարդոց մահը նկատուած է կեանքիս անխուսափելի և յաճախ բարերատու մէկ պայմանը: Ասոր մէջ ի՞նչ սարսափելի բան կայ:

343.— Մարդ իր մահը չի ճանչնար և չի կրնար ճանչնալ, այսինքն անիկա իրեն մօտեցած չէ, և ի՛նք կանգիտանայ թէ ի՞նչ են անոր մտադրութիւնները: Ուրեմն ո՞րմէ կը վախնայ:

«Ա՛ն մինչեւ հիմա զիս գրաւած չէ, բայց օր մը պիտի գրաւէ և զիս պիտի ոչնչացնէ, վստահ եմ ատոր: Զարհուրելի հեռապատկեր մըն է ա՛տ» կ'ըսեն այն մարդիկ, որոնք երբէք չեն հասկնար կեանքը:

Եթէ կեանքի մասին սխալ գաղափար ունեցող մարդիկ կարող ըլլային հանդարտօրէն և ողջմտօրէն տրամաբանել, հիմնուելով կեանքի մասին նոյնիսկ

իրենց ունեցած ըմբռնումին վրայ, պիտի հետեւցնէին որ անհաճոյ կամ զարհուրելի բան մը չկայ այն մտածումին մէջ թէ մարմնական կեանքը պիտի ենթարկուի այն միեւնոյն փոփոխութեան, որուն կատարուիլը կը տեսնենք բոլոր արարածներու մէջ, և զոր մահ կ'անուանենք:

344.— Մարդ մահէն վախնալու չէ ո՛չ իբրեւ անասուն, ո՛չ իբրեւ բանական էակ: Անասունը կեանքի գիտակցութիւն չունենալուն՝ մահը չի տեսներ, բանական էակը կեանքի գիտակցութիւն ունենալուն՝ անասունին մահուանը մէջ ուրիշ բան չի կրնար տեսնել, եթէ ո՛չ նիւթին բնական ու անընդհատ մէկ բարեշրջութիւնը: Մարդուն երկիւղ պատճառողը իրեն անծանօթ մահը չէ, այլ ա՛յն կեանքը՝ զոր իբր անասնական ու բանական գոյութիւնները կը ճանչնան: Այն զգացումը, զոր մարդիկ մահուան երկիւղ կը թարգմանեն, կեանքի ներգոյակ հակասութեան գիտակցութիւնն է, ինչպէս որ ուրուականներու աղագած սարսափը հոգիի հիւանդագին վիճակի մը գիտակցութիւնն է միայն:

345.— Մարդուն զգացած մահուան սարսափը առաջ չի գար իր անասնական գոյութեան դադարումի երկիւղէն, այլ մահուան ենթարկուելէն անո՛ր, որուն մասին կը կարծէր թէ ո՛չ կրնայ և ոչ ալ պարտի մեռնիլ:

346.— Գալիք մահուան վրայ մտածել կը նշանակէ ապագայի մէջ փոխադրել գաղափարը մահուան, որ տեղի ունեցաւ ներկայի մէջ:

347.— Այն մարդը որ աշխարհի հետ իր ունեցած յարաբերութիւններուն մէջ բան մը չի փոխեր, այսինքն, սիրոյ միեւնոյն աստիճանին վրայ կը մնայ, ինչպէս որ իր կեանքը սկսած պահուն, կը տեսնէ իր կեանքին տկարացումը և մահը կ'երեւի իրեն: Այսպիսի մարդ մը միայն կրնայ մահը տեսնել և անկէ սարսափիլ: Իր ամբողջ գոյութիւնն արդէն շարունակական մահ մը եղած է: Կը տեսնէ մահը և կը վախնայ ո՛չ միայն ասպազան մտածելով, այլ և ներկան աչքի առջև ունենալով, ամէն անգամ որ անասնական կեանքին կործանումը կը յայտնուի, տղայութենէն սկսած մինչև ձերութիւն:

348.— Եթէ մարդ պարիկներու պատմութեան մէջ ըսուածին պէս կարենար հազար տարի քնանալ, պիտի քնանար ա՛յնչափ հանգարտ, ո՛րչափ երկու ժամ: Ոչ-աշխարհիկ կեանքի, ճշմարիտ կեանքի, գիտակցութեան համար մ'իլիոն մը տարիներու դադար մը և ութ ժամուան դադար մը միեւնոյն բանն է, որովհետև այս կեանքը ժամանակի տեսողութենէն գուրս է:

349.— Մարդ կը մեռնի ո՛չ թէ կուրծքի հիւանդութիւն մը, իսկրդ մը (cancer) ունեցած ըլլալուն, ո՛չ թէ ատրճանակի հարուած մը ընդունած կամ իրեն ուումը մը արձակուած ըլլալուն, այլ որովհետև իր ճշմարիտ կեանքի բարիքը չի կրնար այլևս շտանալ այս աշխարհի վրայ:

350.— Ի՞նչ նեղութիւն որ կրէք ձեր սնունդին և ձեր մարմնոյն համար, ոչ ոք կրնայ ժամ մը երկարել իր կեանքը:

351.— Մենք կը կարծենք թէ մարդ կանուխ կը մեռնի. բայց իրականին մէջ այնպէս չէ՛ երբէք: Մարդ կը մեռնի այն ատեն, երբ մահը անհրաժեշտ է իր բարիքին համար. նոյնպէս կը մեծնայ, առնական տարիքին կը հասնի այն ատեն, երբ կարեւոր է ասիկա իր բարիքին համար:

352.— Եթէ մարդիկ կը զարհուրին մարմնի մահուան զաղափարէն, այս բանը մահուան հետ իրենց կեանքը վերջանալու վախէն չէ՛ երբէք, այլ անկէ՛ որ մարմնի մահը յստակօրէն ցոյց կու տայ անհրաժեշտութիւնը ճշմարիտ կեանքին, որուն չեն տիրացած: Ահաւասիկ թէ ինչո՛ւ համար մահուան վրայ մտածելէ չեն ախորժիր այն մարդիկ, որոնք կեանքը ըմբռնած չեն:

353.— Ի՛նչ անուն որ ալ տանք մենք մեզի, ի՛նչ հագուստ որ ալ հագնինք, ի՛նչ քահանայ որ ալ ըլլայ՝ որուն առջեւ օրհնուինք, ի՛նչ որ ալ ըլլայ մեր միջիոններուն թիւը, ի՛նչ որ ալ ըլլայ քանակը մեր ճամբուն վրայ կեցող պահապաններուն, ի՛նչ որ ալ ըլլայ քանակը ոստիկաններուն, որոնք մեր հարստութիւնը պաշտպանելու հոգն ունին, ի՛նչ որ ալ ըլլայ թիւը կարծեցեալ չարագործներու, յեղափոխականներուն կամ անիշխանականներուն, որոնց մահուան պատիժ կու տանք, ի՛նչ որ ալ ըլլան մեր Ջահատակութիւնները, ի՛նչ որ ալ ըլլան մեր կանգնած հաստատութիւնները, մեր բարձրացուցած բերդերն ու աշտարակները՝ Բաբելոնի աշտարակէն սկսած մինչեւ Էֆէլեան աշտարակը՝ երկու անվրէպ պայմաններ կը ցցուին մեր առջեւ, որոնք ամբողջովին՝ կը բառնան

կեանքի խմատը: 1) Մահը, իւրաքանչիւր վայրկեան կրնայ մեղի հասնիլ: 2) Անհաստատութիւնը մեր բոլոր գործերուն, որոնք շատ շուտ կը կորսուին առանց հետք ձգելու:

Ի՛նչ որ ալ ընենք՝ Տէրութիւններ հիմնենք, պալատներ և յիշատակարաններ կանգնենք, բռնաստեղծութիւններ և երգեր խմբագրենք, այս ամէնը երկար չի տևեր, ամէն բան կ'անցնի առանց հետք ձգելու: Այս պատճառաւ, ո՛րչափ ալ մենք մեզմէ խոյս տանք, չե՛նք կրնար շտեմնել թէ մեր կեանքի խմատը չի գտնուիր մեր նիւթական գոյութեան մէջ, որ անվրէպ տառապանքներու և մահուան ենթակայ է, ոչ ալ ո՛ր և է հիմնարկութեան մը կամ ընկերական կազմակերպութեան մը մէջ, այլ՝ հետամտութեանը մէջ ճշմարտութեան, Բարիին ու Գաղափարականին, որոնք մահէն աւելի զօրաւոր են:

354.— Անխելքութիւն չէ՞ աշխատիլ բանի մը, որ բնաւ պիտի չաւարտի, ի՛նչ որ ալ ըլլայ: Մահը աշխարհային յաջողութեան շէնքը աւարտելէ առաջ պիտի հասնի միշտ: Եւ եթէ կանխաւ գիտես որ մահուան դէմ պայքարելու համար ի՛նչ որ ընես, ո՛չ թէ դուն, այլ անիկա պիտի յաղթէ, երբէք ըսուած չէ՞ որ չպայքարիս անոր հետ և չգործածես ուժդ հո՛ն, ուր ապահովարար պիտի կորսուի, այլ ջանաս կատարել այն գործը, որ չի կրնար ջնջուիլ անխուսափելի մահուանէ:

355.— Որչափ ալ անձուկ ըլլայ մարդուն գործունէութեան շրջանակէ՛ այդ անձն ըլլայ Յիսուս,

Սոկրատ, ընչատէր մը, անծանօթ մը, ծերունի մը, կին մը, երիտասարդ մը՝ եթէ իր անհատականութեան ուրացումով կ'ապրի ուրիշին բարիքին համար, այս աշխարհի վրայ, իր կեանքի միջոցին կը մտնէ նոր յարաբերութեան մէջ այն աշխարհի հետ, որուն համար չիկայ մահ, և ուր հաստատուիլն է բոլոր մարդոց կեանքի միակ նպատակը:



ՎԵՐՋ

ՆԻԹԵՐՈՒ ՑԱՆԿ


	Էջ
Յստաշարան	է
Ա. Կեանքը — Մարդը — Ընկերութիւնը	1
Բ. Կրօնը	24
Գ. Իշխանութիւնը	43
Դ. Հայրենասիրութիւնը	56
Ե. Ձինուորականութիւնը	63
Ձ. Հարստութիւնը — Աշխատութիւնը	74
Է. Գիտութիւնը — Արուեստը	89
Ը. Անձնիշխանութիւնը	106
Թ. Սէրը — Կիներ	118
Ժ. Բարիքը — Չարիքը — Ճշմարտութիւնը	128
ժ-Ա. Այլ և այլք	135
ժ-Բ. Մահը	141



ԿԱՐԵՒՈՐ ՎՐԻՊԱԿՆԵՐ

Էջ	ՏՈՂ	ՍԽԱԼ	ՈՒՂԻՂ
Է	8	անձնազոհու թեան	անձնիշխանու թեան
Թ	7	փիլիսոսփայլ	փիլիսոսփայլ
Ժ	16	այսպէս	այսպէս
Ժ Գ	19	Թուլութոյ	Թուլութոյ
Ժ Ե	5	նիրոյժ	նիրոյժ
ՀԱՄԱՐ			
29	11	մասնակցիչ	մասնակցիչ
30	7	գանակ	գանակ
34	2	որպէս զի	որպէս զի
37	9	անոր	անոր
40	15	առաջ	առաջ
70	12	չի պատուիրէր	չի պատուիրէր
81	3	առնչու թիւն	առնչու թիւն
92	8	ունեցող	ունեցող
95	2	չէ	չէ
116	10	ճանչուած	ճանչուած
119	2	ըսուած	ըսուած
136	7	Գաղղիոյ	Գաղղիոյ
182	10	այնքայն	այնքան
217	14	զրամատէրերու	զրամատէրերու
223	13	արհամարանքով	արհամարհանքով
—	16	արուստի	արուստի
224	7	չուզեր	չուզէր
232	10	են	է
237	4	կը կազմէ	կը կազմէ
260	2	պիտի	պիտի
306	5	ունին	ունին
310	23	հետազօրու թիւն	հետազօտու թիւն

ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0328599

787
787

916 5 917

LIBRARY OF THE
UNIVERSITY OF
MICHIGAN
ANN ARBOR, MICH.